ԱՄՆ Արևմտեան թեմի

«ՈՍԿԵՂԵՆԻԿ» մատենաշար - Դ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔ. ՊԱԼԱՏԵՑԻ

ՏԱՐԵԿԱՆ ՔԱՐՈԶԳՐԻՔ

(Ընտրանի)

Գրաբարից աշխարհաբար փոխադրեցին՝
Նորայր Պողոսեան
Գեւորգ Սրկ. Կարապետեան

ԼՈՍ ԱՆՋԵԼԷՍ – 2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

«Ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է...». 3
Տ. Յովնան Արք. Տէրտէրեան

Կարապետ Պատրիարք Պալատեցին եւ «Տարեկան Քարոզգիրքը». 5
Նորայր Պօղոսեան

ԱՍՏԾՈՅ ՍԷՐԸ ՄԱՐԴՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ 11
ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ 21
ՊԱՀՔ ԿԱՄ ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆ 30
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 41
ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ 53
ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ 58
ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՄԷՋ 73
ՁԳՈՒՇԱՑԻ՛Ր ՄԵՂՔԻՑ 82
ԲԱՄԲԱՍԱՆՔ 94
ԱԳԱՀՈՒԹԻՒՆ 103
ՊԷՏՔ ՉԷ ԱՐՀԱՄԱՐՀԵԼ ՈՐԵՒԷ ՄԷԿԻՆ 114
ՄԵՂՔԸ ԱՌԱՒԵԼ ԴԺՈՒԱՐ ԳՈՐԾԵԼԻ Է, ՔԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ 125
ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ՄՆՈՏԻ Է 137
ԱՄԷՆ ՍՈՒՐԲ ՄԻ ԱՐԵԳԱԿ Է ԵՐԿՆՔՈՒՄ 147
Գրականութիւն 156

«ՃԱՇԱԿԵՑԷՔ ԵՒ ՏԵՍԷՔ, ԶԻ ՔԱՂՑՐ Է...»

Ներկայ Քարոզգիրքը հոգեշունչ խրատականներու ընտրանի հաւաքածու մըն է, որուն գնահատելի պատրաստութիւնը՝ գրաբարէ աշխարհաբար (արեւելահայերէն) թարգմանութեամբ յանձնառին բանասիրական գիտութիւններու թեկնածու դոցենտ Նորայր Պողոսեան եւ Գեւորգ Սրկ. Կարապետեանը։

Մեր սրտի փափաքն է, որ հոգեւորականներ եւ հաւատաւոր զաւակներ մեր ս. եկեղեցւոյ ճաշակեն քաղցրահամ խրատները եւ լուսաւորեն իրենց հոգիները Աստուծոյ խօսքով – Աստուածաշունչի պատգամներով, որոնք հոգեւոր սնունդ են բոլորիս համար։

Պալատեցի Կարապետ Պատրիարքի քարոզները այնքա՜ն խորն են իրենց բովանդակութեամբ, որ բոլորս հաճելի ընթերցանութեամբ հոգեկան լիցք կ՚ապահովենք անոնցմէ։ Ահա թէ ինչու կը թելադրենք, որ հաւատացեալը ընթերցէ Պալատեցւոյ խրատականները։

Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք Աստուծոյ ներկայութիւնը Պալատեցու խրատականներուն մէջ։



Տ. Յովնան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի

ԿԱՐԱՊԵՏ ՊԱՏՐԻԱՐՔ ՊԱԼԱՏԵՑԻՆ ԵՒ «ՏԱՐԵԿԱՆ ՔԱՐՈԶԳԻՐՔԸ»

Սիրելի ընթերցողին ենք ներկայացնում «Ոսկեղենիկ» մատենաշարի չորրորդ հատորը՝ 19-րդ դարի առաջին քառորդի Կ. Պոլսի պատրիարք Կարապետ Արք. Պալատեցու «Տարեկան Քարոզգըրքից» ծաղկաքաղ, գրաբարից աշխարհաբար փոխադրութեամբ։

Կարապետ Պատրիարք Պալատեցու մասին կենսագրական տուեալներ շատ չեն պահպանուել[1]։ Ծնուել է 1783 թ., մանուկ հասակից հոգեւոր կեանքի կոչուելով՝ աշակերտել է Պօղոս Պատրիարք Ալեքսանդրեցուն, որ ընթերցողին յայտնի է «Խրա-

---

[1] Կարապետ Արք. Պալատեցու կենսագրական որոշ մանրամասներ ներկայացրել ենք «Էջմիածին» հանդէսում, 2018, թիվ Թ, էջ 72-80։

տի թանգարան» բարոյախրատական գրքով։ Ուսումնառութեան մի շրջան է ունեցել 19-րդ դարի սկզբներին բացուած՝ Արմաշի վանքի դպրանոցում, տարբեր տարիների եղել է նուիրակ Վանում, առաջնորդ Ամասիայի, Մարզուանի։ 1823-31 թթ. ընտրուել է եւ մօտ մէկ տասնամեակ պաշտօնավարել Կ. Պոլսի պատրիարք։

Պատմութիւնը պահպանել է Կարապետ Պալատեցու պատրիարքութեան շրջանի յատկապէս շինարարական մի քանի նախաձեռնումներ։ Կարապետ Պալատեցու պաշտօնավարման շրջանում անուանի շատ հայեր կային օսմանեան արքունիքում, որոնց աջակցութեամբ պատրիարքը վերանորոգում է Կ. Պոլսի Սկիւտարի Ս. Խաչ հայոց եկեղեցին։ 1826-ին Կ. Պոլսում պատահած հրդեհի հետեւանքով Ս. Աստուածածին աթոռանիստ Մայր եկեղեցին եւ պատրիարքարանը ամբողջովին հրոյ ճարակ եղան։ Սուլթան Մահմուտ Բ.-ի հրովարտակով, ճարտարապետ Գրիգոր Ամիրա Պալեանի ու Կարապետ Տէօվլէթեանի պատրաստած յատակագծերով կառուցել է քարաշէն եկեղեցին, որի բացումը կատարւում է 1828-ին։ Կարապետ Պալատեցին վախճանուել է 1850-ին եւ թաղուել Սկիւտարի գերեզմանատանը։

Կ. Պոլսի ստեղծագործող մեր այս պատրիարքից յայտնի է «Լապտեր հոգւոյ» խորագրով երկասիրութիւնը, որ քրիստոնէական պարզ ուսուցում է հարց ու պատասխանի ձեւով և տպագրուել է 1826 թ.[2]։ Հեղինակի մէկ այլ երկ՝ աշխարհաբարի փոխադրուած, «Ծանուցում քահանաներին՝ ապաշխարութեան խորհրդի վերաբերեալ» խորագրով, տպագրուել է վերջերս[3]։

Կարապետ Արք. Պալատեցու ներկայ քարոզները քաղել ենք Արեւմտեան թեմի Առաջնորդարանում պահպանուող «Տարեկան Քարոզք» ձեռագրից, որ քննելու համար սիրայօժար տրամադրեց Թեմական Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը։ Ձեռագիրը Հայաստանից կամ Կ. Պոլսից ԱՄՆ տեղափոխելու հանգամանքները դեռևս անյայտ են։ Ձեռագիրը հաստ կազմով թղթեայ գիրք է, 323 էջերով, 32x25 մեծութեան, մանր շղագիր գրութեամբ։ «Քարոզգրքի» 4 այլ ձեռագրեր պահւում են Երևանի Մաշտոցեան Մատենադարանում։

---

[2] **Կարապետ Եպս.**, Լապտեր հոգւոյ, Կ. Պոլիս, 1826 թ., 57 էջ։

[3] **Կարապետ Արք. Պալաթեցի**, Ծանուցում քահանաներին՝ ապաշխարութեան խորհրդի վերաբերեալ, թարգմ. և ընդ. խմբ.՝ Ա. Դիլանեան, Ս. Էջմիածին, 2012 թ.։

Քարոզգիքը գրուած է մեր եկեղեցու տօնացոյցին համապատասխան՝ ամէն մի քարոզ նուիրելով այս կամ այն տօնին կամ սուրբին, թուով 115 քարոզ։ Առանձնապէս մանրակրկիտ են ներկայացուած Մեծ պահքի օրերի քարոզները՝ թուով 32, որոնցից իւրաքանչիւրը նուիրուած է բարոյական-կրօնական խնդիրների, ինչպէս՝ «Պահք կամ պահեցողութիւն», «Կոչումն ապաշխարութեան», «Զգուշութիւն ի մեղաց» եւ այլն։ Աստուածաշնչական, հոգեւոր գրականութեան, մարդու հոգեկերտուածքի քաջ ճանաչումից ծնուած խրատական գրուածք է «Տարեկան քառզգիրքը», այն քրիստոնեային ուղղորդում է ապաշխարութեան, ողորմածութեան, պարկեշտութեան, ուղղորդում է զերծ մնալու արատներից... Ու թէեւ գրուել են գրեթէ 200 տարիներ առաջ, սակայն կարծես մեր օրերի մարդուն են ուղղուած, այնքան որ արդիական են արծարծուող թեմաները։ Միայն մէկ մէջբերում ներկայացնենք այդ առումով, տեսնելու համար, որ կարծես հէնց հիմա են գրուել եւ մեր բոլորի մասին են. «Զեռքերն ու երեսը լուանալուց առաւել հարկ է լեզուն լուանալ»։ Եւ այսպիսի պատգամներով լեցուն են Կ. Պալատեցու քարոզները։

Մեծ թուով մտածող ու ստեղծագործող հոգևորականներ ունենք, որ դեռևս լիարժէք ծանօթ չեն ընթերցողին։ «Ոսկեղենիկ» մատենաշարի նպատակներից մէկն է՝ նման հեղինակներին դարձնել հանրութեանն առաւել ճանաչելի, նորովի հրատարակել նրանց ստեղծագործութիւնները։ Վստահ ենք՝ Կարապետ Արք. Պալատեցին իր կարեւոր տեղը պիտի ունենայ հայ հոգեւոր գրականութեան, քարոզիչութեան անդաստաններում։ Եւ մատենաշարի այս հատորը իր չափով կարող է նպաստել Կարապետ Արք. Պալատեցուն ստեղծագործող հոգևորականների շարքում տեսնելու համար։

ՆՈՐԱՅՐ ՊՕՂՈՍԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու դոցենտ



Կարապետ Արք. Պալատեցու «Տարեկան Քարոզգրքի»՝ Արեւմտեան թեմի Առաջնորդարանի ձեռագրի տիտղոսաթերթը:

1. ԱՍՏԾՈՅ ՍԷՐԸ ՄԱՐԴՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ

«Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տուեց»։ (Յովհ. 3. 16)

1. Նիկոդեմոս անունով մի մարդ՝ փարիսեցի գիտնական և օրէնքի վարդապետ ու հրեայ իշխանաւոր, ցանկանում էր տեսնել Յիսուսին և լսել Նրա վարդապետութիւնը, սակայն բացայայտօրէն Յիսուսի մօտ գնալ չհամարձակուեց՝ երկիւղ ունենալով տեղի փարիսեցիներից, և գնաց գիշերը՝ Նրան հարցնելու և Նրանից լսելու համար։ Բարեխնամ Յիսուս քաղցրութեամբ ընդունեց Նիկոդեմոսին և գիտենալով, որ նա Սուրբ Գրքի գիտակ է, նրան աւանդեց սուրբ խորհուրդների բարձրագոյն վարդապետութիւնը, մասնաւորապէս՝ մկրտութեան մասին, որն աւելի վաղ Ինքը՝ Յիսուսը սահմանել էր կատարել ջրով և հոգով։ Յիսուս ասաց

նաև Իրեն սպասուող չարչարանքների և մարդկանց փրկութեան համար Խաչի վրայ մահուան մասին՝ բերելով պղնձէ օձի օրինակը, որը Մովսէսը կանգնեցրեց՝ թունաւոր մահաբեր օձերից խայթուածների բժշկութեան համար: «Նոյնպէս և Ես,- ասաց Յիսուս,- Իմ կամքով պիտի Խաչը բարձրանամ»: Եւ քանի որ դա երկնաւոր Հօր՝ մարդկանց նկատմամբ ունեցած սիրոյ պտուղն է, Յիսուսը յաւելեց. «Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տուեց»:

2. Մարդու նկատմամբ Աստծոյ սէրը նախաւառաջ արարչութեամբ ակնյայտօրէն երևաց, քանի որ արարածները միայն խօսքով ստեղծուեցին, իսկ մարդը՝ ամենակարող Աստծոյ ձեռքով: Կենդանի էակների համար Աստուած ասաց. «Թող երկիրն արտադրի կենդանի շունչ» *(հմմտ. Ծնն. 1. 24)*, իսկ մարդուն ստեղծելիս Ի՛նքը՝ «Աստուած նրա դէմքին կենդանութեան շունչ փչեց» *(Ծնն. 2. 7)*: Ուրիշ արարածները որևէ խորհրդով չստեղծուեցին, իսկ մարդուն ստեղծելիս ամենասուրբ Երրորդութեան խորհուրդը յայտնուեց՝ ասելով. «Մարդ ստեղծենք մեր պատկերով»:

Յայտնի է, որ արարածները բաժանւում են երեք կարգի: Առաջինն անշունչ իրերն են՝ քարերը, փայտը և այլն: Երկրորդն անխօս կենդանիներն են, իսկ երրորդը բանականները՝ հրեշտակները և մարդիկ: Բանականութիւնը երկու գերագոյն զօրութիւն ունի՝ միտքը և կամքը: Միտքը այնպիսի զօրութիւն է, որ մշտապէս միտուած է դէպի ճշմարտութեան գիտութիւնը, իսկ կամքն ազատօրէն յանգում է բարուն, խորշում է չարից և իշխանութիւն ունի իր արարածների նկատմամբ, սակայն միաժամանակ կամքը չի բռնանում ու ինքնիշխան է, և ահա այդ պատճառով է ասւում՝ «մարդը արարուեց ըստ Աստծոյ պատկերի»:

Արդ, առաջին արարչութեան ժամանակ Աստուած Իր սէրը հաւասարապէս ցոյց տուեց հրեշտակների և մարդկանց նկատմամբ՝ իմացական բնութիւն պարգևելով նրանց: Իսկ երկրորդ արարչութեան ժամանակ Նրա սէրը առաւելապէս դրսևորուեց մարդկանց նկատմամբ, քանի որ թէև առաջինի ժամանակ իւրաքանչիւրին տուեց Իր պատկերը, սակայն երկրորդի ժամանակ Ինքը՝ Բանն Աստուած առաւ մարդկութեան պատկերը՝ մարդանալով, որի համար ասում է սուրբ Պօղոսը.

«Նա օգնելու համար երբէք հրեշտակներին ձեռք չերկարեց» *(Եբր. 2. 16)*:

3. Ծննդոց գրքի սկզբում գրուած է, որ այս աշխարհի ստեղծումից առաջ «Աստծոյ Հոգին շրջում էր ջրերի վրայ»՝ Իր համար հաճելի բնակարան փնտրելով, իսկ երբ մարդը ստեղծուեց, Աստուած բնակւեց նրանում՝ իբրև Իր տաճարում, և այս մասին է սուրբ Պօղոսն ասում. «Արդարև, կենդանի Աստծոյ տաճար էք դուք» *(Բ Կորնթ. 6. 16)*: Իսկ թէ որքանով է հաճելի այս տաճարը Հոգի Աստծուն, յայտնի է դառնում նրանից, որ երբ ջրհեղեղի ժամանակ Աստծոյ հոգին վերացաւ մարդկանցից մեղքերի պատճառով, այդժամ որևէ հանդիսաւոր բան տեղի չունեցաւ, այլ միայն, ինչպէս գրուած է. «Տէր Աստուած ասաց. Իմ ոգին յաւիտեան թող չմնայ այդ մարդկանց մէջ, որովհետև նրանք մարմնաւոր են» *(Ծնն. 6. 3)*:

Իսկ երբ Բանը մարմին առաւ և վճարեց մարդկանց մեղքերի համար, որով և Սուրբ Հոգին վերադարձաւ մարդկանց մէջ, տեսէ՛ք, թէ այդժամ ինչպիսի՛ մեծ հանդիսաւորութեամբ Նա եկաւ, քանի որ գրուած է. «Եւ յանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման, և լցրեց

ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եւ նրանց երևացին բաժանուած լեզուներ, նման բոցեղէն լեզուների, որոնք և նստեցին նրանցից իւրաքանչիւրի վրայ» *(Գործք 2. 2-3):* Սրանք մարդու հանդէպ սիրոյ նշաններն են: Սրանով է նաև, որ ճանաչում ենք Աստծոյ սէրը, քանի որ մեղանչեցին հրեշտակները, մեղանչեցին նաև մարդիկ, բայց Աստուած միայն մարդկանց փրկեց, որի պատճառով Աստուած մարդասէր է կոչւում և ոչ երբէք՝ հրեշտակասէր:

4. Թէպէտ Աստուած սիրում է Իր արարած ամէն բան, սակայն մարդուն առաւե՛լ է սիրում: Մարդու հանդէպ այս մեծագոյն սէրը Աստծոյ Որդին բացայայտօրէն ցոյց տուեց Իր մարդեղութեամբ, մանաւանդ երբ ասաց. «Եթէ ցորենի հատիկը հողի մէջ ընկնելով չմեռնի, միայն հատիկն ինքը կը մնայ, իսկ եթէ մեռնի, բազում արդիւնք կը տայ» *(Յովհ. 12. 24):* Քրիստոս Իրեն անուանում է ցորենի հատիկ և կամենում է ասել, որ եթէ ցորենի հատիկը չսերմանուի հողում, արդիւնք չի տայ կամ էլ միայնակ կը մնայ, «ըստ այսմ և Ես,- ասում է Քրիստոս,- եթէ իբրև ցորեն չսերմանուեմ գերեզմանում, միայն Ես կը մնամ, իսկ եթէ սերմանուեմ, բազում արդիւնք կը

տամ»: Ի՞նչ արդիւնք է այս, ո՛վ Փրկիչ, ո՞վ է մարդը, որ Դու յիշում ես նրան:

Բայց դուք սիրոյ ուրիշ նշանների մասին ևս լսէ՛ք: Երբ Յուդան դուրս եկաւ վերնատնից՝ հրեաների մօտ գնալու և Նրան մատնելու համար, այնժամ Յիսուսն ասաց Իր աշակերտներին. «Այժմ մարդու Որդին փառաւորուեց» *(Յովհ. 13. 31):* Տեսէ՛ք, փոխանակ ասէր. «Ահա այժմ Ես Յուդայի ձեռքով պիտի մատնուեմ հրեաներին՝ Իմ թշնամիներին, և նրանք պիտի խաչեն Ինձ», ասում է՝ «Այժմ մարդու Որդին փառաւորուեց», և այս կերպ ցոյց է տալիս Իր անպատմելի խոնարհութիւնը, որով Նա փրկեց մարդկային սերունդը: Ուստի և Գեթսեմանում, երբ մօտ էր մատնուելուն, ասաց Իր աշակերտներին. «Հոգիս տխուր է մահու չափ» *(Մատթ. 26. 38),* կարծէս թէ ասէր. «Այս Իմ տրտմութիւնը յաւէրժ չի տևելու, այլ մինչև Իմ մահը: Իսկ երբ Իմ մահուամբ փրկեմ մարդկային ազգը, այնժամ ուրախութիւն կը լինի ե՛ւ Ինձ, ե՛ւ ձեզ համար»:

5. Ուրիշ խօսքերով ևս Յիսուս պարզորոշ ցոյց է տալիս Իր աստուածային սէրը, որ ունի մարդու նկատմամբ, քանի որ, յիրաւի, ո՞վ է տեսել, ո՞վ է լսել երբևէ, որ տէրն իր ծառային պարտապան չդարձ-

նելու համար իր սիրելի որդուն պարտապան դարձնի կամ իր ծառաներին ապրեցնելու համար իր որդուն տանջանքների ու մահուան մատնի: Բայց ահա երկնաւոր Հայրն արեց դա՝ մարդկանց փրկութեան համար Իր Միածին Որդուն ուղարկելով: Արդարև, չափազանց զարմանալի է Աբրահամի պատմութիւնը, որը իր սիրելի որդի Իսահակին կամենում էր Աստծուն պարգևել, բայց կայ դրանից առաւել զարմանալին, այն՝ որ երկնաւոր Հայրն է Իր Միածին սիրելի Որդուն մահուան մատնում: Ի՞նչն է առաւել մեծ ու սքանչելի թւում, ո՛վ Աստծոյ սիրելիներ, այն, որ Աբրահամն իր միակ որդուն կամեցաւ մահուա՞ն մատնել, թէ՞ այն, որ Հայր Աստուած Իր Միածին Որդու՛ն մահուան մատնեց:

Այնքա՛ն տարբերութիւն կայ այս երկուսի միջև. Աբրահամն իր որդուն յանձնում էր Արարչի սիրուն, այն դէպքում, երբ ամենքն են պարտաւոր իրենց անձերը Աստծուն յանձնել, մինչդեռ Հայր Աստուած Իր Որդուն նուիրեց յանուն մարդկութեան հանդէպ ունեցած սիրոյ, որին, սակայն, երբևէ պարտական չէր: Աբրահամը կամենում էր իր որդուն մատուցել Աստծուն մի առանձնական վայրում, որպէսզի

մայրն անկարող լինէր տեսնելու դա, մինչդեռ Աստուածահայրն Իր Որդուն մատուցեց Գողգոթայում, որտեղ Նրա ամենասիրելի մայրը ևս ականատես եղաւ այդ իրադարձութեանը: Նաև՝ Աբրահամն իր որդուն յօժարութեամբ մատուցեց Տիրոջը, մինչդեռ երկնաւոր Հայրը դա արեց Իր սիրելի Որդու՝ Քրիստոսի ուսերին դնելով մարդկութեան մեղքերի ծանրութիւնն ու դրա հետևանքով առաջ եկող բազում պատուհասները, որպէսզի այդկերպ Քրիստոսը վճարի մեր փոխարէն և քաւի մեր մեղքերը: Իսահակը, պարանով կապուած, դրուեց սեղանի վրայ, մինչդեռ Քրիստոսը մեխերով գամուեց խաչափայտին: Նաև տարբերութիւնն այն էր, որ Իսահակը խոյի հետ փոխանակուեց, իսկ Քրիստոսն Ի՛նքը մեզ համար ողջակէզ եղաւ: Այս պատճառով է մի իմաստուն վարդապետ ասել. «Ապրեց Իսահակը, և մորթուեց խոյը. մեռաւ Քրիստոսը, որպէսզի ապրի մեղաւորը: Աստծոյ Որդին մեռաւ մարմնապէս, որպէսզի մարդու որդին ապրի հոգեպէս»:

6. Արդ, Աստծոյ այս բարձրագոյն և մեծագոյն սիրոյ դիմաց մենք ինչպէ՞ս կարող ենք հատուցել: Թէև Նա մեզնից ոչինչ չի պահանջում, այլ միայն որ

սիրենք Նրան, որի համար էլ առաջին այս պատ-ուիանը տուեց. «Քո Տէր Աստծուն պիտի սիրես քո ամբողջ հոգով, քո ամբողջ էութեամբ ու քո ամբողջ ուժով» *(Բ Օր. 6. 5):* Ծանր չէ բնաւ այս պատուիրանը. Աստուած սիրեց ու արարեց մեզ, սիրեց մեզ ու փրկեց, մի՞թէ մեծ բան է, որ մենք սիրենք Նրան մեր ողջ հոգով, ողջ էութեամբ ու ողջ ուժով: Այսպէս էր սիրում Աստծուն մարգարէն, որն ասում է. «Սիրում եմ քեզ, Տէ՛ր, զօրութի՛ւն իմ. ո՛վ Տէր, պահպանի՛չ իմ, ապաւէ՛ն իմ և փրկի՛չ» *(Սաղմ. 17. 2)*: Ցգո՛յշ լինենք, որպէսզի պայման չդնենք Աստծուն սիրելու համար, քանի որ Նա առանց պայմանի սիրեց մեզ:

«Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր միածին Որդուն տուեց»: Ուրեմն մենք ևս առանց որևէ պայմանի սիրենք Նրան՝ սիրելով ողջ հոգով, ողջ էութեամբ ու ողջ ուժով: Տե՛ս, թէ մեզնից ինչպիսի՛ սէր է պահանջւում, որի մասին այս խօսքն է ասում իմաստունը. «Որդյա՛կ, տու՛ր ինձ քո սիրտը» *(Առակ. 23. 26):* Սիրտն է սիրոյ աթոռը. այն խնդրելով՝ Աստուած մարդու ո՛ղջ սէրն է խնդրում, իսկ սատանան կամենում է այդ սիրոյ կէսն իրեն վերցնել. չարը գիտի, որ սիրոյ միայն կէսը Աստծուն հաճելի չէ: Այս իմաստով յարմար

օրինակ կայ Սողոմոնի առաջին դատաստանում *(Գ. Թագ. 3. 16)*, երբ կենդանի մանկան մայրը չի կամենում, որ իր երեխային մէջտեղից կիսեն, իսկ մեռածի մայրն ասում է՝ «կտրեցէ՛ք մէջտեղից», այսպէս նաև Աստուած մարդու սէրն ամբողջապէս է ցանկանում, և ոչ թէ՝ կէսը միայն:

Այժմ գուցէ հարց ծագի, թէ Աստուած ինչու՞ մարդկանց փրկութեան համար հրեշտակներին չուղարկեց, ինչպէս արեց Ղովտի դէպքում և փրկեց նրան Սոդոմից: «Ո՛չ,- ասում է Եսային:- Մեր Աստուած... Ի՛նքը պիտի գայ ու փրկի մեզ» *(Եսայի 35. 4)*: Իսկ թէ ինչու է այսպէս, պատասխանում են իմաստուն մեկնիչները այսպէս. «...Որպէսզի մարդու միակ սէրը երկուսի չբաժանուի, մէկը՝ Աստծուն, իբրև իր ստեղծողի, և միւսը հրեշտակին, իբրև իր փրկչի, այլ որպէսզի մեր ողջ սէրը Աստծուն մնայ»:

Նա, որ ստեղծեց մեզ, Ի՛նքն էլ փրկեց մեզ, և Աստծուն ճշմարտապէս սիրողը նա է, ով սիրում է Նրան ամենայն կերպ և ամբողջովին:

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

«Բարեպաշտների ճանապարհներն ուղիղ են»։
(Եսայի 26. 7)

1. Մարդն այս աշխարհում ճանապարհ է ընկել ոչ միայն իր ծննդից դէպի մահն ընթանալու, այլ մանաւանդ երկրից երկինք բարձրանալու համար, քանի որ ամէն բանի վախճանը մարդու համար ամենաբարի արարիչ Աստուածն է: Բայց դէ մարդն ի՞նչ, հազիւ արբունքի հասած՝ տեսնում է իր առաջ երկու ճանապարհ. մէկը դէպի վեր՝ երկինք է տանում, իսկ միւսը վար է իջեցնում, այսինքն՝ մէկը դէպի Արքայութիւն է բարձրացնում, միւսը՝ հեշտասիրութեան մէջ ընկղմում:

Առաքինութիւնը, որ դէպի վեր՝ երկինք է տանում մարդուն, դժուարին է թւում, քանի որ ինչպէս ասում են, առաքինութեան ճիւղերը քրտինքով և չարչարանքով են ծլարձակում: Իսկ հեշտասիրու-

թիւնը, թէև դէպի դժոխք է իջեցնում, սակայն իր դէմքին մեղմ կերպարանք տալով՝ իրեն դիւրին է ցոյց տալիս:

Ըստ այդմ, ո՞ր ճանապարհն ընտրի մարդը, ո՞ր ճանապարհով գնայ՝ դժուարի՞ն, թէ՞ դիւրին: Արդարև, շատերն են կամենում դիւրին ուղիով ընթանալ, բայց նրանք, որոնք խելամիտ են ու նաև լուսաւորուած են Սուրբ Գրքով, ճանապարհորդներիս անցած ուղու ոչ թէ արտաքին տեսքին են նայում, այլ ներքին հանգամանքներին և դրա վրայ հենուելով են իրենց առաջ նպատակ են դնում, թէ ո՛ր ճանապարհն ընտրեն, որով առաջ ընթանան: Այս է ասում սուրբ մարգարէ Եսային. «Բարեպաշտների ճանապարհներն ուղիղ են, հարթ ու դիւրին են աստուածապաշտների ճանապարհները» (*Եսայի. 26. 7*):

2. Իսկապէս, առաքինութեան ընթացքը մեծ ջանք է պահանջում, քանզի «նեղ է ճանապարհը, որ տանում է դէպի կեանք» (*Մատթ. 7. 14*), սակայն ով փափագում է այդ նպատակին հասնել, նրա համար նեղ ճանապարհն անգամ դիւրին է դառնում: Յակոբն Ասորիք գնալիս կամեցաւ մայրամուտին մի տեղ քուն մտնել և, ըստ Սուրբ Գրքի, «առաւ

այնտեղի քարերից մէկը, դրեց գլխի տակ ու քնեց այնտեղ» (*Ծնն. 28. 11*)։ Եւ քարեղէն բարձի վրայ քաղցր քուն մտաւ։ Ասում եմ «քաղցր», քանի որ նա երազում տեսաւ մի սանդուղք, որը մինչև երկինք էր հասնում, և հրեշտակներ, որոնք ելնում ու իջնում էին դրա վրայով։ Քարը, որը Յակոբը դրեց իր գլխի տակ, նշանակում է չարչարանք, որին առաքինի մարդը պէտք է համբերի յանուն Արքայութեան։ Եւ ինչպէս Յակոբը քարի վրայ քաղցր քուն մտաւ, նոյնպէս և քաղցր են դառնում բոլոր ջանքերն առաքինի մարդու, որը կամենում է դէպի երկինք՝ հրեշտակային դասը մտնել։

Ի՞նչ չի անի վաճառականը իր նիւթեղէն առևտրի համար. ծովի միջով կ’անցնի, օտար երկիր կը մեկնի, քաղցի ու ծարաւի կը դիմանայ։ Ի՞նչ չի անում զօրականը անցաւոր պսակի արժանանալու համար. ծանր զէնք է կրում, նախայարձակ է լինում պատերազմի դաշտում, մարտնչում է թշնամու դէմ։

Եւ եթէ այսպիսի դժուարութիւնները տանելի են յանուն առօրեայ շահի կամ յանուն անցաւոր փառքի, ի՞նչը կարող է անհնար լինել յանուն Արքայութեան և յանուն անվախճան երկնային փառքի։

Եւ ուրեմն մարգարէն իրաւամբ է ասում, թէ՝ «Ամբարիշտների ճանապարհներն ուղիղ չեն»:

3. Չափազանց շատ ուժ են վատնում բարեպաշտներն իրենց ճանապարհին, մինչև իսկ դառն տանջանքներն են համբերութեամբ տանում: Տե՛սէ՛ք, օրինակ, արեգակը ձեր աչքերին լոյս է բերում, և յայտնի է, որ նա իր լոյսի պայծառութիւնը բարեգթօրէն պահպանում է միշտ. թո՛ղ որ երկինքն ամպի ու շանթեր արձակի, նա, միևնոյն է, մշտապէս լուսաւորում է և վեհանձնօրէն բազմատեսակ շողարձակումներով ընթանում է իր ճանապարհով: Բարեպաշտները ևս, արեգակի օրինակով, երբ սկսում են շողալ, այլևս երբէք չեն շեղւում իրենց ուղուց, ինչ խոչընդոտ էլ պատահի, քանզի համբերութեամբ դիմանում են ցաւերին ու վշտերին, կախարդանքին և թշնամութեանը, սովին, չքաւորութեանը և մնացեալ բոլոր պատուհասներին:

Պատահական չէր, որ արեգակն իբրև օրինակ բերեցի բարեպաշտներին բնութագրելու համար, քանի որ բարեպաշտներն արեգակի նման ծագելով ու իրենց ուղիղ ճանապարհով ընթանալով՝ հասնում են իրենց նպատակին, որի համար ասում

է մեր Տէր Յիսուս Քրիստոսը. «Այն ժամանակ արդարները երկնքի արքայութեան մէջ կը ծագեն ինչպէս արեգակը» *(Մատթ. 13. 43)*:

Ինչու՞ ուրիշ օրինակով յայտնեմ ճշմարտութիւնը, երբ ահա նրանք՝ արդարները, մեր աչքի առաջ են: Քարքարոտ չէ՞ր սուրբ Ստեփանոս Նախավկայի ճանապարհը, սակայն որքա՛ն դիւրացաւ այդ ճանապարհը նրա համար, որ մինչև իսկ տեսաւ իր երանելի նպատակը. «Ահա տեսնում եմ,- ասում է նա,- երկինքը բացուած և մարդու Որդուն, որ կանգնած է Աստծու աջ կողմը» *(Գործք 7. 55)*: Փշոտ չէ՞ր մեր Լուսաւորչի ճանապարհը խորից էլ խոր վիրապի մէջ, սակայն այնքա՛ն դիւրացաւ այդ ճանապարհը, որ նա միշտ տեսնում էր Տիրոջ հրեշտակին: Ահա, տեսէ՛ք, թէ որքա՛ն դիւրին ու անցանելի են աստուածապաշտների ճանապարհները:

4. Իսկ եթէ մէկին անտանելի թուայ այն ճանապարհը, որով գնացին սուրբ Ստեփանոսն ու մեր սուրբ Գրիգոր Լուսաւորիչը և ուրիշ սրբեր, ապա թող իմանայ, որ ուրիշ ճանապարհներ էլ կան, որոնց վրայ եթէ յայտնուի, կարող է հեշտութեամբ առաջ ընթանալ, եթէ կամենայ:

Առաջին, ամենահաստատուն ճանապարհը ճշմարտութեան ճանապարհն է, որն ընտրեց նախամեծար Դաւիթը. «Քո ճշմարտութեան ճանապարհն ընտրեցի» *(Սաղմ. 118. 30)*:

Կայ երկրորդ ճանապարհ, որը շատ յարգի է. դա գթութեան ճանապարհն է, որի մասին մեր Տէրն ասում է. «Ողորմութիւն եմ կամենում և ոչ զոհ» *(Մատթ. 9. 13)*:

Կայ նաև աւելի ապահով ճանապարհ, այն է՝ անմեղութեան ճանապարհը, որի մասին ասում է Դաւիթը. «Երանի նրանց, ովքեր անբիծ ուղի են բռնել և ընթանում են Տիրոջ օրէնքով» *(Սաղմ. 118. 1)*:

Միւս ճանապարհը, որն աւելի կարճ է, աղքատութեան ճանապարհն է, որով եթէ մէկն ընթանայ, աւելի նուազ կը սխալուի, քան միւսները, և ամենքից աւելի շուտ կը հասնի նպատակակետին, ըստ այն խօսքի, թէ. «Երանի՛ հոգով աղքատներին, որովհետև նրանցն է երկնքի արքայութիւնը» *(Մատթ. 5. 3)*:

Յաջորդ ճանապարհն աւելի խաղաղ է. դա սիրոյ ճանապարհն է, որը ձգւում է դէպի Աստուած, որը և՛ ընկերոջը, և՛ թշնամուն իբրև բարեկամ է

ընդունում, ուստի արդարև կարելի է այս ճանապարհը խաղաղ կոչել: Եւ այս մասին է մեր Տէրն ասում. «Ով Ինձ սիրում է, պիտի սիրուի իմ Հօրից. Ես էլ նրան պիտի սիրեմ և Ինձ պիտի յայտնեմ նրան» *(Յովհ. 14. 21)*: Կան սրանց նման ուրիշ ճշմարիտ ճանապարհներ, որոնցով ընթանալով՝ բարեպաշտները հասնում են երանաւէտ կեանքի ու օթևանում այնտեղ:

5. Սակայն կան այնպիսի մարդիկ, որոնք այսպիսի ուղիղ ու դիւրին ճանապարհները թողած՝ գնում են հոգեմաշ ճանապարհով և ընկնում դժոխքի խորխորատը: Իսկ ովքե՞ր են նրանք:

Նախ՝ հպարտները, որոնք ցանկանում են վեր ելնել լեռնային, զառիվեր ճանապարհով: Կը հարցնէք, թէ ու՞մ են նման հպարտները. նրանք նման են նապաստակին, որ շատ աւելի հեշտութեամբ բարձրանում է զառիվերը, քան թէ այնտեղից իջնում, քանի որ նրա առջևի ոտքերն աւելի կարճ են, քան հետևինները: Այդ կերպ նաև հպարտները հպարտութեան լեռից դժկամութեամբ են իջնում, բայց սրընթաց բարձրանում են դէպի աւագութեան տեղերը: Եւ նապաստակի առջևի ոտքերի նման՝ հպարտների փափագն առ Աստուած կարճ

է հետին «ոտքերից»՝ անցողիկ աշխարհի ձգտումից: Չէ՞ որ զուր չի ասւում, որ «ով բարձրացնում է իր անձը, պիտի խոնարհուի»:

Հոգեմաշ ճանապարհը նախընտրողների երկրորդ խումբը ագահներն են, որոնց ցանկացածը Տէրը աշխարհի մեծութիւն է կոչում: Իսկ թէ ուր է այս փշոտ ճանապարհն ագահին հասցնում, պարզորոշ ցոյց է տալիս սուրբ առաքեալը, երբ ասում է. «Ովքեր հարստանալ են ուզում, ընկնում են փորձութեան, որոգայթի և բազում անմիտ ու վնասակար ցանկութիւնների մէջ, որոնք ընկղմումտանում են մարդկանց դէպի կործանում և դէպի կորուստ» *(Ա Տիմ. 6. 9)*:

Կան այնպիսիք էլ, որոնք ախորժում են գնալ տղմոտ ճանապարհով. նրանք անառակ կեանք վարողներն են, որոնց մասին ասւում է. «Մշտապէս պիղծ են նրա ճանապարհները» *(Սաղմ. 9. 5)*:

Կան նաև այնպիսի մարդիկ, որոնք սիրում են գնալ խաւարի ճանապարհով, սրանք նախանձներն են, որոնց «վա՛յ» է կանխագուշակում Սողոմոնը. «Վա՛յ նրանց,- ասում է,- ովքեր ուղիղ ճանապարհը թողած՝ կը գնան խաւարի ճանապարհով, ովքեր կուրախանան չարիքներ գործելով

և կը խնդան դէպի չարը խոտորուելով» *(Առակ. 2. 13-14)*: Նրանց նպատակակէտը դժոխքի բանտն է, քանզի գրուած է. «Ամբարիշտների ճանապարհը-ները նման են խաւարի, և նրանք չգիտեն, թէ ինչ-պէս պիտի սայթաքեն» *(Առակ. 4. 19)*: Իսկ մենք պի-տի իմանանք, որ ամբարիշտները սայթաքելով դժոխքի խորխորատը պիտի ընկնեն, մինչդեռ բա-րեպաշտների ճանապարհները ու անցանելի և անվրէպ հասցնում են Երկնքի արքայութեանը:

ՊԱՀՔ ԿԱՄ ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆ

«Եւ քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահեց»։ (Մատթ. 4. 2)

1. Երբ Աստուած ստեղծեց մարդուն, կամեցաւ նրան աստիճանաբար բարձրացնել ու Երկնքի արքայութեան բարիքները վայելելու պատուին արժանի դարձնել և իբրև այդ վերելքի առաջին աստիճան սահմանեց պահքը՝ այն կարգելով բոլոր պատուիրաններից առաջ։ Եւ եթէ առաջին մարդն ի սկզբանէ պահէր այդ պատուիրանը, Աստուած նախ նրան իրաւունք կը տար ուտելու կենաց ծառից և ապա՝ կը բարձրացնէր նրան Երկնքի արքայութիւն։ Սակայն քանի որ մարդն առաջին աստիճանին բարձրանալ չկամեցաւ, Աստուած երկրորդին էլ թոյլ չտուեց մօտենալ, այլ արտաքսեց նրան դրախտից և կենաց ծառը յանձնեց սերովբէների պահպանութեանը։ «Գուցէ,- ասաց Տէրը,- նա ձեռ-

քը երկարի, քաղի կենաց ծառի պտղից և ուտի ու յաւիտենապէս ապրի»:

Իսկ մեր ամենագութ Փրկիչ Յիսուս Քրիստոսը երբ աշխարհ եկաւ, կամենալով մարդուն վերադարձնել իր նախկին փառքը՝ վերստին սահմանեց պահքը՝ ոչ միայն խօսքով, այլև գործով՝ Իր օրինակով, և «քառասուն օր ու քառասուն գիշեր ծոմ պահեց»: Եւ ինչպէս ուսուցիչն է իր աշակերտին ցանկանում գրել սովորեցնել, ինքն է գրում նրա առաջ ոչ թէ իր համար, այլ իր աշակերտի, որպէսզի նա սովորի, նոյնպէս և Քրիստոսը ոչ թէ Իր համար ծոմ պահեց, այլ մեզ համար, որպէսզի մեզ սովորեցնի: Նա Իր մկրտութիւնից յետոյ անմիջապէս շտապեց անապատ՝ ծոմ պահելու, որպէսզի մենք, որ մկրտուած ենք յանուն Հօր և Որդու և Սուրբ Հոգու, սովորենք սահմանուած օրերի պահեցողութեանը:

2. Քրիստոսը պահեցողութեամբ յաղթեց փորձողին և մեզ էլ նոյնը պատուիրեց, քանի որ մեր կեանքի պատերազմում մենք Քրիստոսի զինուորն ենք: Սուրբ Աւետարանի ոչ մի հատուածում չենք կարող ընթերցել, թէ սատանան յանդգնեց մերձենալ Տիրոջը, երբ Նա իր առաքինութիւնների գոր-

ծերն էր կատարում, այլ միայն այնժամ մօտեցաւ, երբ Տէրը ծոմ էր պահում, քանի որ նա՝ ամենաչարը, յիշում էր, թէ ինչպէս առաջին մարդը որկրամոլութեան պատճառով վտարուեց, և ուրեմն պահքն է մարդու ազատութեան գրաւականներից մէկը, ուստի պահեցողութեան ժամանակ է մօտենում: Եւ արդարև. «Կերակուրը մեզ դրախտից դուրս հանեց, իսկ պահքը մեզ վերստին վերադարձնում է այնտեղ»: Այս մասին է ասում նաև սուրբ Եկեղեցին. «Պատուիրանը չպահելով՝ մեռանք, բայց դու Քո օրինակը շնորհեցիր, որպէսզի պահելով կենդանանանք»:

Մեծ է աղօթքի զօրութիւնը, սակայն պէտք է պահքը նրան ընկեր դարձնել, որպէսզի աղօթքի այդ զօրութիւնն իրականանայ. «Այս տեսակ դևը այլ կերպ դուրս չի ելնում, եթէ ոչ աղօթքով ու ծոմապահութեամբ» *(Մատթ. 17. 20)*:

Տեսէ՛ք, թէև աղօթքն է հրաշքներ գործում, բայց պահքն է նրա գործակիցը: Եւ **եթէ աղօթքը հոգևոր կեանքի նաւի առագաստն է, ապա պահքը նրա ղեկն ու խիղճն է**: Եթէ աղօթքն իբրև բժիշկ ենք առաքում, ապա պահքը դեղն է բժշկութեան: Մովսէսը պահեցողութեամբ արժանի եղաւ Աստուած-

տեսութեանը, Եղիան Ենովքի հետ դասուեց. շատ էին Հին Կտակարանի առաքինի սրբերը, բայց Քրիստոսն Իր այլակերպութեան օրը միայն այս երեքին թափոր կազմել տուեց և Իր հետ պայծառացրեց, քանի որ միայն նրանք պահեցողութեամբ Իրեն ընկերակից եղան: Երեք երիտասարդները բաբելոնեան հնոցի մէջ պահքի շնորհիւ անկիզելի մնացին: Դանիէլը պահքով իրենից հեռացրեց առիւծների կատաղութիւնը և անվնաս մնաց նրանց ժանիքներից:

Այլ պատեհ օրինակ ևս կայ՝ նինուեացիների պահքը, որի շնորհիւ նրանք փրկուեցին յանկարծահաս պատուհասից: Տարբերութիւնն այն է միայն, որ նրանք իրենց թագաւորի հրամանով պարտաւորուեցին պահք պահել, իսկ մենք՝ մեր երկնաւոր Թագաւորի հրամանով: Չէ՞ որ պահեցողութեան պատուերը ո՛չ թէ մարդը կամ հրեշտակը, այլ Ի՛նքը՝ Աստուած տուեց՝ նախ դրախտում ասելով Ադամին. «Բարու և չարի գիտութեան ծառից չուտէ՛ք», և ապա մարդացած Աստուած պահքը սահմանեց Ի՛ր օրինակով, նաև խօսքով՝ ասելով. «Կգան օրեր, երբ որ փեսան նրանցից կը վերցուի, ապա այդ օրերին ծոմ կը պահեն» *(Ղուկ. 5. 35)*:

Ուրեմն, նինուէացիներից առաւել մե՛նք են պարտաւոր խստօրէն պահք պահել:

3. Խորամանկ է սատանան, մարդու դէմ պատերազմելու համար նախ նրա թոյլ կողմին է դիմում, որպէսզի դիւրութեամբ կարողանայ յաղթել: Երբ Յիսուսի թոյլտուութեամբ սատանան մօտեցաւ Նրան փորձելու, սկզբից չառաջարկեց երկրպագել իրեն, այլ նախ ասաց. «Ասա՛, որ այս քարերը հաց դառնան»: Երբ տեսաւ, որ իր այդ ջանքը ի դերև ելաւ, շարունակեց. «Քեզ այստեղից ցա՛ծ գցիր», և միայն յետոյ ասաց. «Ընկի՛ր ու երկրպագի՛ր ինձ»: Այս օրինակով սատանան նաև մեր առաջ է նախ որկրամոլութիւնն իբրև որոգայթ լարում, որի մէջ եթէ ընկնենք, նա այնուհետ մեզ ագահութեան խորխորատի մէջ կը քաշի, իսկ յետոյ էլ կը գցի հպարտութեան վիհի մէջ, ու այդպիսով մեղաւորը կը սկսի արհամարհել փրկութեան դեղը: Այս մասին է ասել իմաստունը. «Ամբարիշտն արհամարհում է չարիքները, երբ հասնում է դրանց խորքերը» *(Առակ. 18. 3):*

Ուստի հենց սկզբից է պէտք պահքը պահել: Գուցէ քեզ աննշան թուայ պահքի պատուիրանը, քանի որ եթէ համեմատես միւս պատուիրանների

հետ, գուցէ այն փոքր համարես և արհամարհես, սակայն այդ դէպքում քո այդ փոքր բացը քեզ թոյլ կը տայ արհամարհել նաև մեծագոյն պատուիրանները: Սա իմ խօսքը չէ, այլ Տիրոջ, որն ասում է. «Քչի մէջ անիրաւը շատի մէջ էլ անիրաւ է» *(Ղուկ. 16. 10):* Գող սատանան, քեզ արթուն տեսնելով, չի համարձակւում մեծամեծ մոլութիւններ քո մէջ մտցնել, իսկ երբ անհոգ քնած ես, մի փոքր մոլութիւն քո մէջ գցելով՝ բացում է դուռը առաւել մեծ մոլութիւնների համար: Եթէ այդ փոքրը տուն մտած չլինէր, դուռը փակուած կը մնար, և գողը դիւրին կերպով չէր կարողանայ տուն մտնել ու թալանել քեզ: Ուրեմն տե՛ս պահեցողութիւնն արհամարհելու վնասները և զգուշութեա՛մբ պահիր այն:

4. Նաև այս էլ իմանաք, որ պահքը երկու տեսակի է լինում՝ մարմնաւոր և հոգևոր: **Մարմնաւոր պահքը զգուշութիւնն է կերակուրներից, իսկ հոգևորը՝ զգուշութիւնը մեղքից**: Մէկն ամուր պարիսպ է ընդդէմ թշնամիների, իսկ միւսը՝ այդ պարիսպը պահպանող քաջարի զօրք: Պարիսպն առանց զօրքի հնարաւոր չէ պաշտպանել, և ոչ էլ զօրքն է կարող ապահով պատերազմել առանց պարսպի: Մարմնաւոր պահքը նաւ է, իսկ հոգևորը՝

ղեկ: Նաւն առանց ղեկի չի կարող ուղիղ ընթանալ, և ոչ էլ ղեկն առանց նաւի կարող է որևէ օգտակար գործ անել:

Այլ կերպ ասած՝ մէկը մարմինն է, միւսը՝ հոգին, և մարդն էլ ո՛չ սոսկ մարմին է և ո՛չ սոսկ հոգի, այլ կազմուած է երկուսի միութիւնից. ո՛չ մարդու հոգին կարող է առանց մարմնի որևէ բան անել, ոչ մարմինը՝ առանց հոգու: Կամենում եմ ասել, որ ո՛չ պահքն է ընդունելի առանց ուրիշներին բարեգործութիւն անելու, և ո՛չ բարեգործութիւնը՝ առանց պահքի: Եթէ քրիստոնէական վարքը հայելու նմանեցնենք, մարմնաւոր պահքն ապակին է, իսկ հոգևորը՝ արծաթը. այս երկուսից է կազմուած բարեպաշտութեան հայելին, և մէկն առանց միւսի ոչինչ չի կարող արտացոլել: Արդարև, հարկաւոր է մարմնաւոր պահքը, քանի որ եթէ դրախտում եղած ժամանակ այն անհրաժեշտ եղաւ, որքա՜ն առաւել՝ դրախտից դուրս եղած ժամանակ: Եթէ պատերազմից առաջ անգամ շեշտւում է զէնքի կարևորութիւնը, որչա՜փ առաւել այն կարևոր է պատերազմի ժամանակ: Եւ եթէ արդար Ադամին պահքը անհրաժեշտ էր իբրև կանխարգելիչ դեղ, առաւել ևս մեզ՝ մեղաւորներիս է այն հարկաւոր

իբրև բժշկութեան դեղ: Սակայն մարմնաւոր պահքը կատարեալ չէ, եթէ չզուգակցուի հոգևոր պահեցողութեամբ, որն է՝ Աստծոյ պատուիրանները պահպանելը:

Գրուած է. «Սրբիցէ՛ք պահս» *(Յովէլ 1. 14)*: Իսկ յայտնի է, որ պահքը մաքրւում է աղօթքով և ողորմութեամբ, քանի որ այս երեքը միասին են արժանի Տիրոջ տաճարի սպասաւորութեանը. լոյսը աղօթքն է, իւղը՝ ողորմութիւնը, լապտերը՝ պահքը: Յիմար կոյսերը լապտեր ունէին, սակայն իւղ և լոյս չունէին, քանի որ իմաստուններից էին խնդրում և ասում. «Ահա՛, մեր լապտերները հանգչում են» *(Մատթ. 25. 8)*: Այդ պատճառով էլ նրանք չկարողացան մտնել երկնային խորաններ, իսկ իմաստունները, այդ երեքը միասին ունենալով, ներս մտան: Այս մասին է գրուած. «Բարի են աղօթքները՝ պահեցողութիւններով և ողորմութիւններով» *(Տոբ. 12. 8)*:

Կառքը չորս անիւ ունի, երեքը որ կողմ պտտուեն, չորրորդն էլ նոյն ուղղութեամբ պիտի ընթանայ, եթէ անգամ հակառակ շրջուի: Հինգ զգայարան ունի մարդը, եթէ չորսը մոլութեան մէջ ընկնեն, ապա բերանն էլ նոյն մոլութեան մէջ

կընկնի, եթէ անգամ կերակուրներից խստագոյնս պահք պահի: Եւ **ի՞նչ օգուտ, եթէ մէկը հրաժարուի մսից, բայց հայհոյի, սուտ խօսի ու չարութեամբ վարկաբեկի իր ընկերոջ անունը**:

5. Իսրայէլացիները, երբեմն տրտնջալով Աստծոյ դեմ, ասում էին. «Ինչպէ՞ս է, որ մենք ծոմ պահեցինք, և դու չտեսար» *(Ես. 58. 3):* Այս նոյնն է, թէ ասես. «Ինչու՞ մեր պահքը Քո առաջ ընդունելի չեղաւ», ինչին պատասխանում է մարգարէն՝ Աստծոյ առաջ ասելով. «Ձեր ծոմապահութեան օրերին ձեր ցանկութիւններն էք կատարում», որով կամենում է ասել, որ «Ա՛յն է ձեր պահքի անզօր լինելու պատճառը, որ պահքի օրերին շարունակում էք կատարել ձեր չար կամքը»: Եւ մարգարէն սկսում է մէկ առ մէկ թուել նրանց չար արարքները՝ ասելով. «Կսկիծ էք պատճառում բոլոր նրանց, ովքեր ենթակայ են ձեզ: Հակառակութեան և կռիւների մէջ էք պահում և հարուածում էք տկարին» և այլն: «Այսպիսի պահեցողութիւն չընտրեցի ես,- ասում է Տէրը,- այլ դու քանդի՛ր անիրաւութեան հանգոյցը և հանի՛ր քո սրտից ոխակալութիւնն ու յանցանք մի՛ գործիր քո եղբօր դէմ. խորտակի՛ր քո վաճառականական խարդախութիւնն ու բռնու-

թիւնը՝ հատուցելով քո պատճառած բոլոր վնասները, ների՛ր ու արձակի՛ր նեղեալներին և պատռի՛ր բոլոր անիրաւ մուրհակները, այսինքն՝ խոստովանութեամբ արձակի՛ր հոգիդ մեղքերի շղթաներից: Քաղցածների՞ն բաժանիր քո հացը, այսինքն՝ քաղցածներին կերակրի՛ր քո կերակուրներից, աղքատներին ու անտուններին տա՛ր քո տուն և հագցրու՛ մերկերին»: Այդժամ քո պահքն ընդունելի կը լինի և Աստուած կը լսի քեզ, քանի որ հենց դա՛ է կատարեալ պահքը, որ պէտք է պահել:

Արդ, բարեպաշտութիւն փափագէ՛ք, որպէսզի ձեր պահքն արդիւնաւէտ լինի, ուստի պահէ՛ք այս օրինակով՝ զգուշանալով մեղքից և փութալով բարեգործութիւն անել՝ ըստ աստուածահաճոյ բարի կամքի:



Հատուած Կարապետ Արք. Պալատեցու «Տարեկան Քարոզգրքից». Քարոզ ԼԳ- «Պարտք քրիստոնէութեան»:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

«Երկինքների երկինքը Տիրոջն է, բայց երկիրը նա տուեց մարդկանց որդիներին»։ (Սաղմ. 113. 16)

1. Այս աշխարհում երկու բան կայ, որ մարդիկ պէտք է ուսանեն՝ գիտութիւնը և արհեստը։ Գիտութիւնն աւելի նուրբ է, քան որևէ արհեստ, ընդ որում եթէ արհեստ կարող են սովորել պարզ մարդիկ, գիտութիւնը հասանելի է միայն ազնուական և հանճարեղ մտքին։ Իսկ աստուածաբանութիւնը, իբրև գիտութիւն, առաւել քան նուրբ է, քանի որ եթէ բնական գիտութիւնները զգայարաններով են ճանաչելի, ապա աստուածաբանութիւնը, որ գիտութիւն է գերբնականի մասին, ըմբռնելի է միայն հաւատով։ Եւ այդ գիտութեան գանձարանը՝ Աստուածաշունչ Սուրբ Գիրքը, ոչ ամէն մտքի համար է ըմբռնելի։ Անգամ առաքեալները դեռևս Տիրոջ չարչարանքներից առաջ չէին կարողանում հասկանալ գրուածքները, և միայն Իր Յարութիւ-

նից յետոյ Յիսուս «բացեց նրանց մտքերը, որ հասկանան գրուածքները» *(Ղուկ. 24. 45):*

Արդ, եթէ Սուրբ Գիրքն այդչափ նուրբ է, ապա ուրեմն ինչու՞ է Դաւիթն այս դիւրին խօսքը գրել Սաղմոսներում. «Տիրոջն է երկիրն իր ամբողջութեամբ» *(Սաղմ. 23. 1):* Ո՞վ չգիտի, որ Տիրոջն է երկիրն իր ամբողջութեամբ, այսինքն՝ ողջ տիեզերքը, և կամ ո՞վ կարող է երկմտել, թէ Տէրն է, որ բաժին է տալիս Իր արարածներին: Ինչու՞ է, ուրեմն, սուրբ մարգարէն ակնյայտը աղաղակելով քարոզում. քանի որ նա ոչ թէ աստուածապաշտներին, այլ կռապաշտների՛ն է քարոզում, նրանց, ովքեր ապստամբելով Աստծոյ ճշմարտութեան դեմ՝ Տիրոջ երկիրը բաժանում էին և երկրի ամէն մի կողմը մի կուռքինն էին համարում: Ու միայն Հրէաստանի կողմն էին ճշմարիտ Աստծունը կարծում, քանի որ համարում էին, թէ «Իսրայէլի Աստուածը լեռների Աստուած է և ոչ թէ դաշտերի Աստուած» *(Գ. Թագ. 20. 23):*

Նաև Ասորեստանի Սենեքերիմ արքայի զօրապետ Ռափսակն էր աղաղակելով դիմում Երուսաղէմի ամէն մի բնակչի. «Թող ձեզ չխաբի Եզեկիան՝ ասելով, թէ «Աստուած պիտի փրկի ձեզ». արդեօք

ազգերի աստուածները կարողացա՞ն Ասորեստանի արքայի ձեռքից փրկել իրենց այս կամ այն երկիրը, որ ձեր Աստուածը կարողանայ իմ ձեռքից փրկել Երուսաղէմը» *(Ես. 36. 18, 20):* Տեսէ՛ք, թէ ինչպէս է անօրէն Ռափսակը իւրաքանչիւր երկրին մի աստուած «բաժին» հանում, իսկ ճշմարիտ Աստծուն տալիս է միայն Երուսաղէմը:

Այնպէս, ինչպէս ապստամբներից իւրաքանչիւրը, բռնութեամբ մտնելով ուրիշների թագաւորութիւնը, իրեն է հպատակեցնում գրաւած երկիրը և բնակիչներից հարկեր է վերցնում, այդպէս էլ հեթանոսները, մտնելով Տիրոջ աշխարհը, ամէն մէկն իր համար մի հատուած է կորզում և բնակիչների կողմից երկրպագութիւն է ստանում: Այս տեսնելով՝ սուրբ մարգարէն բողոքով դիմում է մոլորեալներին. «Ինչու՞ էք,- ասում է,- մոլորուած շրջում, ինչպէ՞ս էք կարողանում պէս-պէս աստուածներին վերագրել երկրի կողմերը. իմացէ՛ք, որ Տիրոջն է երկիրն ամբողջութեամբ»: Արդարև, արժանաւոր խօսք է գրի առնուած Աստուածաշունչ գրքում, սակայն այս խօսքից առաւել զարմանալի է, երբ լսում ենք, թէ «Աստուած այս երկիրը տուեց մարդկանց որդիներին», քանի որ նոյն սուրբ մարգարէն դար-

ձեալ ասում է. «Երկինքների երկինքը Տիրոջն է, բայց երկիրը նա տուեց մարդկանց որդիներին»:

2. Ամենաբարի Արարիչ Աստուած ինչպէս Իր պատկերը շնորհեց մարդկանց որդիներին, նոյնպէս և, իբրև տիեզերապետութիւն, երկիրն է տալիս նրանց: Առաջինի մասին Սուրբ Գիրքն ասում է. «Աստուած մարդուն ստեղծեց Իր պատկերով» *(Ծնող. 1. 26):* Իսկ երկրորդի մասին ասում է Աստուածը. «Տիրեցէ՛ք դրան»,- այսինքն՝ ողջ երկրին: Արդ, ինչպէս Աստուածն է Տէրը ողջ երկրի, նոյնպէս և մարդն է տէր, սակայն ի՞նչ տարբերութիւն կայ Աստծոյ և մարդկանց միջև: Գիտցէ՛ք, որ եթէ Աստուած ինքնիշխան Տէր է, ապա մարդը տէր է Աստծոյ իշխանութեան ներքոյ. Աստուած ինչպէս կամէնում է, այնպէս է տիրում երկրին, իսկ ահա մարդը պարտաւոր է տիրել ըստ Աստծոյ կամքի, այս պատճառով է Աստուած Եսայու գրքում ասում. «Քեզ Իմ անունով պիտի կոչեն՝ Իմ կամքը» *(Եսայի 62. 4):*

Այս դժուարըմբռնելի խօսքը Իր քարոզի ժամանակ պարզաբանեց Աստծոյ Որդին՝ մի պարզ առակի միջոցով՝ ասելով. «Մի տանուտէր կար, որ այգի տնկեց... և այն տուեց մշակներին» *(Մատթ. 21. 33)*:

Այդ մարդը Աստուած է, որ աշխարհի՝ այգու իրական Տէրն է, իսկ մշակները մարդիկ են, որոնք Աստծոյ կողմից այգու տէր կարգուեցին, այդ պատճառով նաև Աւետարանում Աստուած անուանւում է մեծատուն, իսկ մարդը՝ տնտես: Մեծատուն Աստուածն ըստ Իր կամքի տիրում է աշխարհին: Տնտես մարդը պարտաւոր է տիրել ըստ Աստծոյ կամքի, իսկ մի օր էլ նրանից հաշիւ պիտի պահանջուի, ինչպէս անիրաւ տնտեսից պահանջուեց: Ցիմար է նա, ով հաշիւ տալ չի կարողանայ կամ էլ կը մեծամտանայ՝ յամարձակուելով սեփականացնել իրեն հանձնուածը, ինչպէս արեցին հին մշակները, որոնք ասում էին. «Մերը կը լինի ժառանգութիւնը»: Այդ պատճառով նրանք զրկուեցին այն պատուից, որ ունէին. այգին ուրիշ մշակների յանձնուեց, որպէսզի նրանց խնամածութեան ներքոյ լինելով՝ ճիշտ ժամանակին պտուղ տար, որով էլ մշակները Երկնքի արքայութեանը կարժանանային:

«Երկինքների երկինքը Տիրոջն է, բայց երկիրը նա տուեց մարդկանց որդիներին», սակայն ո՛չ նրա համար, որ նրանք յաւիտեան երկրի վրայ մնան, այլ որ պատեհ ժամին Երկինք բարձրանան: Երկիրը

տուեց և Երկնքի՞ն հաղորդակից դարձրեց, Տէրը երկիրը տուեց առանց վարձի, սակայն Երկինքը՝ ոչ առանց վարձի, այլ՝ վարձով: Երկիրն ինքնին մարդկանց ուսուցանում է Աստծուն վարձ տալ ու այդպիսով Երկինքը ժառանգել, քանի որ ինքը՝ երկիրը, տալիս է մարդկանց իր պտուղը *(Սաղմ. 66. 7):* Արդ, երեք բան ունի մարդը, որոնցից մարդը պարտաւոր է հասոյթ տալ Արարիչ Աստծուն. դրանք են՝ հոգին, մարմինը և ունեցուածքը:

3. Նախևառաջ մարդը պարտաւորւում է Աստծուն հասոյթ տալ իր հոգուց, քանի որ մարդու հոգին է, որ իր ազատ կամքով կարող է գործել բարին և չարը: Հոգու բարեգործութիւններն են, ինչպէս յայտնի է՝ աղօթքը, բարի մտածմունքը, սրտի սրբութիւնը, կարիքաւորների նկատմամբ ցաւակից վերաբերմունքը և սրանց նման այլ ոչ նիւթական բարեգործութիւններ: Իսկ ահա հոգու չարագործութիւններն են ատելութիւնը, հայհոյութիւնը, չարամտութիւնը, սրտի անմաքրութիւնը, աղքատների նկատմամբ անգթութիւնը և հոգու այլ այսպիսի մեղքեր:

Ըստ այդմ, քրիստոնեան պարտաւոր է հասոյթ տալ Աստծուն իր հոգուց, այսինքն՝ սիրել Աստծուն

և իր ընկերոջը, աղօթքի կանգնել ջերմեռանդօրէն, իրագործել բարի մտքերը, սուրբ սիրտ ունենալ և ողորմած լինել կարիքաւորների նկատմամբ: Առաւելևս պարտաւոր է եղբայրասիրութիւն ունենալ, քանի որ այն լրացնում է բոլոր օրէնքները, որի մասին ասում է սրբազան Պօղոս առաքեալը. «Ամբողջ օրէնքը այս մէկ խօսքի մէջ է ամփոփւում. «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպէս՝ ինքդ քեզ»» *(Գաղ. 5. 14):* Այս կանոնը սուրբ առաքեալն իրենից չի յօրինում, այլ յիշեցնում է Տիրոջ պատուիրանը, քանի որ Ինքը՝ Տէ՛րն է ասում Սուրբ Աւետարանում. «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպէս քո անձը» *(Ղուկ. 10. 27):*

Եւ արդ, սէրը մեզ կրկնակի բարիք է բերում. նախ՝ վանում է չարը, որը մենք մեզ, բնականաբար, չենք կամէնում, և երկրորդ՝ մեզ մղում է դիմացինի համար գործել ա՛յն բարիքը, որը մենք ինքներս այդքան փափագում ենք ստանալ: Ըստ առաջինի՝ հարկաւոր է սիրել ընկերոջը, այդ մասին է ասում Տօբիթը. «Ինչը դու ատում ես, ուրիշին չանես» *(Տօբ. 4. 16)*: Իսկ երկրորդի մասին ասում է մեր Տէրը. «Այն ամէնը, ինչ կը կամէնաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպէս և դո՛ւք արէք նրանց» *(Մատթ. 7. 12):* Սա՛ է

եղբայրասիրութեան օրէնքը. ոչ միայն որևէ չար բան չանել ու չցանկանալ եղբօրը, այլև փափագել ու ջանք գործադրել դիմացինին բարիք գործելու համար: Իսկ եթէ ուզում ես իմանալ, թէ որն է այդ ամէնի վարձը, լսիր սուրբ Յովհաննէս Աւետարանչին. «Ով սիրոյ մէջ է ապրում,- ասում է առաքեալը,- բնակւում է Աստծոյ մէջ, և Աստուած բնակւում է նրա մէջ» *(Ա Յովհ. 4. 16):*

4. Երկրորդ՝ քրիստոնեան պարտաւոր է հասոյթ տալ Աստծուն իր մարմնից: Մարդու զգայարաններն այն դռներն են, որոնց միջոցով մարդը գործում է, քանի որ մարդն աչքով տեսնում է, ականջով՝ լսում, բերանով՝ խօսում և ձեռքերով՝ գործում: Ուստի մարմնի հասոյթներն են՝ աչքով Աստծոյ գործերը տեսնելը և Նրանից գոհանալն ու ձեռքերով բարիք գործելը, իսկ մարմնի չարագործութիւններն են՝ պագշոտաբար նայելը, անվայել խօսակցութիւններ լսելը, ամօթալի բաներ խօսելը և չարիք գործելը: Արդարութեան կամ չարութեան իւրաքանչիւր գործ զգայարանների միջոցով է գործւում: Օրինակ՝ լեզուի մասին գրուած է. «նրանց լեզուները ինչպէս սուսեր են» *(Սաղմ. 56. 5):* Նաև՝ «Լեզուս նման է արագ գրող դպրի գրչի»

(Սաղմ. 44. 2): Բայց ի՞նչ ընդհանրութիւն կայ սրի ու գրչի միջև: Սուրը սպանութեան գործիք է, իսկ գրիչը գործիք է գրչութեան, սակայն լեզուն այս երկու գործառոյթն էլ կարողանում է իրականացնել, քանի որ ոմանք լեզուով սպանում են՝ ուրիշի համբաւի մասին բամբասելով, իսկ ոմանք էլ լեզուով օրհնում ու փառաւորում են Աստծուն: Նայէք մի գործին և ապա միւսին ու տեսէք, թէ որքան հակառակ են այդ երկու գործերը իրար:

Բերանի մասին գրուած է. «Անէծքով, դառնութեամբ ու նենգութեամբ լի է բերանը նրա» *(Սաղմ. 9. 7)*, և թէ՝ «Բերանն իմ իմաստութիւն պիտի խօսի» *(Սաղմ. 48. 4):* Այսինքն՝ մէկն իր բերանով անիծում է, իսկ միւսն իմաստուն բաներ է ասում: Միևնոյն «գործիքով» կրկին հակառակ գործեր են կատարում:

Ձեռքերի մասին գրուած է. «Նրանց աջը լի է կաշառքով» *(Սաղմ. 25. 10)*, և թէ՝ «Ձեռքերիս կարկառումն իբրև երեկոյեան պատարագ թող լինի» *(Սաղմ. 140. 2)*: Այդպէս մէկն իր ձեռքերը կաշառքով է լցնում, իսկ միւսը՝ առ Աստուած բարձրացնում:

Գրուած է նաև ականջների մասին. «Ասէս օձի, վիշապ օձի թոյնով խցանուած են նրա ականջ-

ները» *(Սաղմ. 57. 5),* և թէ՝ «Առակներին պիտի ականջ դնեմ» *(Սաղմ. 48. 5)*: Տեսնու՞մ ես՝ մէկը փակում է իր ականջները, որպէսզի չլսի Աստծոյ պատգամներն ու չքաղցրացնի իր սիրտը, իսկ միւսն իր ունկը խոնարհեցնում է Աստծոյ առակաւոր խօսքերը լսելու համար: Արդ, հարկ է, որ քրիստոնեան հասոյթ տայ Աստծուն իր զգայարանների աստուածահաճոյ գործերի միջոցով:

5. Եւ երրորդ՝ մարդ պարտաւոր է հասոյթ տալ Աստծուն նաև իր ունեցուածքից: Ամէն ինչ, որ ունի մարդ, իրենից չէ, որ ունի, այլ Աստծուց է ստացել: Այս մասին ասում է սրբազան առաքեալը. «Ի՞նչ ունես, որն Աստծուց ստացած չլինես» *(Ա. Կոր. 4. 7):* Աշխարհի թագաւորներն իրենց զօրքին վարձ են տալիս ըստ նրանց թուաքանակի, սակայն երկնաւոր թագաւորը՝ Աստուած, այդպէս չի վարւում, այլ ոմանց պէտք եղածից աւելին, իսկ ոմանց էլ՝ չափազանց քիչ է տալիս, քանի որ ամենքին կամենում է վարձատրել հանդերձեալ կեանքում: Որպէսզի ովքեր պէտք եղածից աւելին ստանան, կարեկից լինելով աղքատներին՝ երկնային վարձն ընդունեն, իսկ ովքեր աւելի պակաս ստանան, համբերելով

աղքատութեանը՝ նոյնպէս երկնքից վարձ ստանան՝ արդէն յարկ եղածի չափով:

Երկուսն էլ՝ հարուստ թէ աղքատ, երկնաւոր վարձատրութեան միևնոյն ճանապարհով են ընթանում, սակայն աղքատների ճանապարհն աւելի դիւրին է, և թերևս այդ պատճառով մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսն ասաց, թէ «հարուստը դժուարութեամբ կը մտնի Երկնքի արքայութիւն» *(Մատթ. 19. 23)*: Բայց Տէրը նաև, գթալով հարուստներին, հեշտացրեց նրանց ճանապարհը՝ պատուիրելով ողորմութիւն անել կարիքաւորներին՝ համարելով, որ հենց Իրեն՝ Տիրոջն են անում, «քանի որ,- ասում է,- իմ այս փոքր եղբայրներից մէկին արեցիք այդ, ի՛նձ համար արեցիք» *(Մատթ. 25. 40)*: Այս պատճառով դատաստանի ժամանակ Նա պիտի ասի ողորմածներին. «Քաղցած էի, և ինձ ուտելիք տուիք, ծարաւ էի, և ինձ ջուր տուիք խմելու, մերկ էի, և ինձ հագցրիք»,- և այսպէս՝ ըստ կարգի:

Այս ամէնից պարզ երևում է, որ երբ մէկը աղքատի համար ինչ-որ մի բան է անում, Քրիստոսը դա համարում է Ի՛ր համար արուած, որի մասին ասում է նաև իմաստունը. «Աղքատին ողոր-

մութիւն տուողը փոխ է տալիս Աստծուն» *(Առակ. 19. 17)*: Իսկ ահա Սուրբ Աւետարանն էլ մի մուրհակ է, որում գրուած է. «Տուէ՛ք, և պիտի տրուի ձեզ» *(Ղուկ. 6. 38)*: Մենք արժանահաւատ մարդկանց առանց որևէ կասկածի փոխ ենք տալիս և նրանց մուրհակն էլ զգուշութեամբ պահում ենք. Աւետարանը հենց այդ մուրհակն է, որ մենք պէտք է պահենք մեզ մօտ, քանի որ Քրիստոսից աւելի արժանահաւատ որևէ մէկը չկայ: «Երկինք և երկիր պիտի անցնեն,- ասում է Նա,- բայց իմ խօսքերը չպիտի անցնեն» *(Մատ. 24. 35)*, իսկ Նրա խօսքը ա՛յս է. «Տուէ՛ք, և պիտի տրուի ձեզ»: Ուրեմն, իմ սիրելի՛ ունկնդիրներ, մեր հոգուց, մարմնից և ունեցուածքից նուիրե՛նք որևէ բանի անկարօտ Աստծուն, որպէսզի նաև մենք, երբ ժամանակը գայ, ողորմութիւն գտնենք Նրանից:

ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

«Նա չէ՞ ընտրեալը, որ ինքն իրեն է գովաբանում»։
(Բ Կոր. 10.18)

1. Ովքեր ցանկանում են ոսկի կամ մարգարիտ փնտրել, խորը խոնարհւում են. մէկը հողի մէջ, իսկ միւսը՝ ծովի։ Ըստ Տիրոջ մեկնաբանութեան՝ Երկնքի արքայութիւնը թաքնուած գանձ ու գեղեցիկ մարգարիտ է, որը գտնելու ընդամէնը մէկ միջոց կայ՝ խոնարհութիւնը։

Բոլոր ամբարտաւանները դուրս պիտի նետուեն, և միայն խոնարհները պիտի արժանանան Երկնքի արքայութեանը։ Եթէ խոնարհութիւնը մեղաւորներին արդար է դարձնում, ինչպէս մաքսաւորի դէպքում, ապա որքան առաւել արդարներին կատարեալ արդար

կը դարձնի, չէ՞ որ ճշմարիտ արդարները խոնարհութեամբ էին կենցաղավարում:

Երեք երիտասարդները, որ առաքինի էին, երբ հնոցի մէջ նետուեցին, չյիշեցին իրենց առաքինութիւնների մասին, այլ ասացին. «Մեղանչեցինք ըստ ամենայնի, անօրէնութիւն ու յանցանք գործեցինք», և այս ասելու շնորհիւ դասակից եղան հրեշտակին: Իսկ հրեշտակները երբ հպարտացան, դևերի վերածուեցին: Երբ մարդիկ խոնարհուեցին, ոչ միայն դասակից եղան հրեշտակին, այլև իրենք հրեշտակացան, և հնոցը, ինչպէս հրեշտակին, այնպէս էլ երիտասարդներին չկարողացաւ վնասել:

Սուրբ Պետրոսը խոնարհութեամբ ասում է Տիրոջը. «Հեռու՛ գնա ինձնից, Տէր, քանի որ ես մեղաւոր մարդ եմ»: Նոյնպէս և սուրբ Պօղոսն է խոնարհութեամբ ասում. «Արժանի չեմ առաքեալ կոչուելու», սակայն նա Փեսային բարեկամ դարձաւ, և Քրիստոսն Իր ձեռքը դրեց նրա գլխին: Պէտք չէ ասել, թէ ով ի սկզբանէ արդէն սուրբ էր, խոնարհուելով առաւել պայծառացաւ: Տե՛ս, հեթանոսների հարիւրապետը նոյնպէս խոնարհուելով ասաց. «Արժանի չեմ, որ իմ տուն

մտնես», և այդպէս բոլոր հրեաներից աւելի զարմանալի գտնուեց: Այս ամէնին նայելով՝ սուրբ Պօղոսն ասում է. «Ոչ թէ նա է ընտրեալը, ով ինքն իրեն է գովաբանում, այլ նա, ում Տէրն է գովում» *(Բ Կորնթ. 10. 18):*

2. Ինքն իրեն գովաբանելը նշանակում է պատուել, մեծարել և փառաւորել սեփական անձդ, բայց դու լսի՛ր ինձ ու տե՛ս, որ իր անձը գովաբանող հրեշտակի վախճանը սատանայի վերածուելն է, քանի որ նա մտքում ասում էր. «Ամպերից էլ վեր ելնեմ, նմանուող լինեմ Բարձրեալին»: Բայց նա այլ պատասխանը լսեց. «...ահաւասիկ դժոխք ես իջնելու և երկրի խորքերը» *(Ես. 14. 15):* Բարձրեալին նմանուել կամեցաւ, բայց անարգուեց ամենքից առաւել. այս է, ահա՛, սեփական անձը պատուելի համարողի ու գովաբանողի վախճանը: Իսկ ում Տէրն է գովում, նա ընտրեալ է դառնում, իրապէ՛ս է պատուում և իսկապէս՝ փառաւորւում:

Տէրը ուրիշ մէկին չի գովաբանում, այլ միայն խոնարհութեան ճանապարհով ընթացողին: Յայտնի է, որ Տէրը գովաբանեց Զաքէոսին, և երբ տեսաւ, որ վերջինս ելել է ժանտաթզենու վրայ,

հրամայեց նրան իսկոյն իջնել. «Զաքէո՛ս,- ասաց,- շտապի՛ր, իջի՛ր այդտեղից» *(Ղուկ. 19. 5):* Իսկ ինչու՞ է հրամայում իջնել ծառից, եթէ Զաքէոսը ծառի վրայ էր, հնարաւո՞ր չէր խօսել նրա հետ: Մի իմաստուն այսպէս է մեկնաբանում. «Քրիստոս նրան ծառից իջեցնելով, նախ նրա խոնարհութեան մէջ համոզուեց, քանի որ Յիսուս ում ընտրում էր, նախ խոնարհութեամբ էր փորձում, ուստի նաև Զաքէոսին հրամայեց իջնել ծառից»: Այդպէս նաև մինչև Յովսէփին Եգիպտոսի իշխանութիւնը յանձնելը նախ նրան կոփեց ստրկութեամբ և նոր միայն տէրութեան գահին նստեցրեց: Մովսէսին բարձրացրեց՝ Իսրայէլի առաջնորդութիւնը նրա ուսերին դնելով, բայց նախ նուաստ վիճակի միջով անցկացրեց՝ կարգելով ոչ բանական արարածների՝ ոչխարների հովիւ, և յետոյ միայն կարգեց բանական էակների՝ մարդկանց հովիւ: Եւ այսպէս իր համար խոնարհ բաժին խնդրող ամէն ոք լսում է Տիրոջից. «Բարեկա՛մ, աւելի վե՛ր մօտեցիր» *(Ղուկ. 14. 10):*

Փառքի հասնելու միակ եղանակը փառքից փախչելն է: Եթէ կամենում ես փառքի հասնել, մի՛ ձգտիր փառքի: Ով պատիւ չի փնտրում, նրան

ամենքը պատւում են, իսկ ով փնտրում է, արհամարհւում է ամենքից:

3. Թէև խոնարհութիւնն ըստ իր իմաստի որոշակի ցածրութիւն է ենթադրում, սակայն սուրբ Յովհան Ոսկեբերանն այն առաքինութիւնների գլուխ է անուանում՝ Քրիստոսի խօսքին հետևելով, որ ասում է. «Երանի՛ հոգով աղքատներին» *(Մատթ. 5. 3):* Հոգով աղքատները խոնարհներն են: Որևէ մէկն իր գլխին չի կարող աւելի գեղեցիկ զարդ ունենալ, քան խոնարհութիւնն է, քանի որ Նա, ով երկինքների երկնքում է բնակւում՝ Աստուած, ցանկանում է նայել ա՛յդ զարդին, որի մասին ասւում է ամենասուրբ կոյս Մարիամի դէպքում. «Որովհետև Նա իր հայեացքը դարձրեց իր աղախնի խոնարհութեան վրայ» *(Ղուկ. 1. 48):*

Խոնարհների դէմքերն աստուածային շնորհներով այնպէ՛ս են գեղեցկացած, որ որևէ նկարիչ անկարող է նմանօրինակ մի բան պատկերել, եթէ անգամ հազար երանգներ իրար խառնի:

Խոնարհների աչքերն այնքա՛ն են հեզահայեաց, որ միչև իսկ Աստծուն կարող են տեսնել՝ «Երանի՛

նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» *(Մատթ. 5. 8)*:

Խոնարհների շուրթերը հոգևոր օրհնութիւն են բարբառում առ Աստուած և մարդասիրութեան խօսքեր՝ մտերիմների նկատմամբ:

Խոնարհների ձեռքերն ու ոտքերն իրենց լաւ գործերն են ի ցոյց դնում:

Խոնարհների սրտերը պատարագ են Աստծոյ համար, քանի որ «խոնարհ հոգին է պատարագն Աստծոյ» *(Սաղմ. 50. 19)*:

Ահա սրա՜նք են խոնարհների զարդերը:

4. Իսկ հպարտների զարդերն են պայծառ հանդերձանքը, շքեղ տունը, ձիերն ու ջորիները, ոսկեզարդ կառքերը, որոնց միջոցով հպարտօրէն կամենում են շլացուցիչ երևալ, որովհետև մարդ լինելու պատիւը կորցրած լինելով՝ ձգտում են այլ կերպ իրենց վրայ վերցնել գոնէ ուրիշների խօսքերն ու փառքը: Այս ախտով հիւանդացաւ Նաբուգոդոնոսորը, քանի որ ոսկեձոյլ արձան կանգնեցնել տուեց ու կամեցաւ այդ ոսկու միջոցով փառքի հասնել և ո՛չ իր կենդանի պատկերի միջոցով, և այդ պատճառով կենդանու կերպարանք ստացաւ:

Զուր է մարդ հպարտանում իր մարմնի շնորհներով. եթէ նա ուժեղ է, ուրեմն աւելի պիտի խոնարհուի, քանի որ գազաններն իրենից ուժեղ են, ուստի մեծ ամօթ է գազանների շնորհով պարծենալը: Եթէ գեղեցիկ է, ապա սիրամարգից աւելի գեղեցիկ չէ, որի գոյնզգոյն փետուրները մահուանից յետոյ անգամ պայծառ փայլում են, իսկ մարդկային գեղեցկութիւնը դեռ մահից առաջ խամրում է: Եթէ փորենք մեռածների՝ խորը փոսում գտնուող մարմինները, երբէք չենք կարող տարբերել գեղեցիկը տգեղից, քանի որ գեղեցիկներն ու տգեղները միանման հող են դարձել:

Ինչպէս իր մարմնի շնորհներով, այնպէս էլ աշխարհիկ հարստութեամբ զուր է հպարտանում մարդը, քանզի եթէ հարստութիւնը ոսկին, արծաթը և պատուական քարերն են, ապա դրանք մարդու սեփականութիւնը չեն, այլ՝ աշխարհի: Մենք ոչինչ չենք բերել աշխարհ և ոչինչ չենք կարող աշխարհից տանել: Ոչ ոք իր ունեցած որևէ բան աշխարհից դուրս կիրառել չի կարողանայ և դեռ կենդանուց էլ ստորին վիճակում է յայտնուելու: Նրա համար լաւ կը լինէր բնաւ բանական չլինել,

քան թէ, կոչուած լինելով թագաւոր լինել, սպասաւորից աւելի վատը լինել: Լաւ կը լինէր, եթէ նա բնաւ իր գլխին թագ չդնէր, քան թէ նման վատ բանական մարդ լինէր:

5. Գրուած է. «Հովիտներն առատ ցորեն պիտի բերեն» *(Սաղմ. 64. 14):* Հովիտները՝ բլուրներից ցած գտնուող հարթավայրերը, այն բանի շնորհիւ են առատ ցորեն տալիս, որ անձրևների ջրերը, անկարող լինելով մնալ լեռների վրայ, իջնում ու պտղաբեր են դարձնում դրանք: Լեռներն օրինակն են հպարտների, որոնց վրայ չի իջնում Աստծոյ շնորհների անձրևը. «Տէրը հակառակ է ամբարտաւաններին. Նա շնորհ է տալիս խոնարհներին» *(Առակ. 3. 34):* Իսկ հովիտներն օրինակն են խոնարհների, որոնց վրայ միշտ իջնում է Աստծոյ շնորհը, քանի որ Նա «շնորհ է տալիս խոնարհներին»: Այս պատճառով էլ **խոնարհները բազում առաքինութիւններ են ունենում**: Ծառերը, որոնք տնկուած են հովիտներում, այնքան հողմակոծութեան չեն ենթարկւում, որքան այն ծառերը, որոնք լեռների վրայ են: Ըստ այս օրինակի՝ խոնարհներն աւելի անվրդով են հողմերի փորձութիւններից, քան

հպարտները: Եւ ինչպէս մանր ձկները դիւրութեամբ են ճողոպրում ցանցից կամ ուռկանից, իսկ աւելի մեծերը՝ ոչ, նոյնպէս և նրանք, որ խոնարհեցնում են իրենց անձը, յաղթող են դուրս գալիս սատանայի փորձութիւններից: Եւ սրան հակառակ, ինչպէս կայծակներն առաւել յաճախ հարուածում են բարձրադիր, քան ցածրադիր վայրերին, նոյնպէս և ամբարտաւանները մի՛շտ վտանգի են ենթակայ:

Յայտնի է, որ Յոբը, բազմիցս պատերազմելով սատանայի դէմ, միշտ յաղթող գտնուեց, իսկ ինչպէ՞ս. ըստ Սուրբ Գրքի՝ նա յաղթեց սատանային՝ լինելով աղբանոցում *(Յոբ. 2. 8):* Զարմանալի է, որ Յոբը, աղբանոցում նստելով, սատանայի բոլոր որոգայթները կորստեան մատնեց, և այդ ա՛յն բանի շնորհիւ, որ աղբանոցում նստածի համար ներքև ընկնելու տեղ չկայ, այլ հակառակը՝ նա կարող է վեր բարձրանալ Նրա՛ օգնութեամբ, ով «բարձրացնում է աղքատներին գետնից և տառապեալներին վեր քաշում աղբանոցից» *(Սաղմ. 112. 7):*

Գրուած է. «Գաբրիէլ հրեշտակը Աստծոյ կողմից ուղարկուեց Գալիլիայի մի քաղաքը, որի անունը

Նազարէթ էր» *(Ղուկ. 1. 26):* Արդ՝ ինչու՞ է Տէրը Նազարէթն ընտրում Յիսուսի մարդեղութեան համար, և ոչ թէ մէկ այլ քաղաք: Ըստ մի իմաստունի՝ դրա պատճառն այն է, որ Նազարէթն անպարիսպ ու փոքրիկ մի քաղաք էր: Եւ ի՞նչ է սա ենթադրում: Մէկ ուրիշ իմաստուն յաւելում է, որ Քրիստոս փոքրիկ Նազարէթ քաղաքում է ծնւում ու մեծանում, իսկ Երուսաղէմ մեծ քաղաքում՝ չարչարւում և խաչ բարձրացւում: Տեսէ՛ք, որ մեր փրկութիւնը խոնարհութեան մէջ է թաքցուած, իսկ մեր ամբարտաւանութեան, հպարտութեան մէջ այն վտանգուած է: Ամենասուրբ կոյս Մարիամը Նազարէթում է յղանում Յիսուսին, Երուսաղէմում՝ կորցնում. այսպէս և մեր փրկութիւնը հպարտութեամբ վտանգւում է, իսկ խոնարհութեան մէջ ապահով է մնում: Ապա ուրեմն՝ խոնարհութի՛ւն ունենանք մեր անձերում, որպէսզի կարողանանք փրկութեան հասնել մեր Տէր Յիսուս Քրիստոսով: Ամէն:

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ

«Ողորմութիւն եմ ուզում և ոչ թէ զոհ»։
(Մատթ. 12.7)

1. Սուրբ Աւետարանի պատմութիւններից մէկն այն մասին է, որ երբ Յիսուս շաբաթ օրով աշակերտների հետ քայլում էր արտի միջով, աշակերտները, որ քարոզի պատճառով քաղցած էին մնացել, սկսեցին հասկեր պոկել և ուտել, իսկ փարիսեցիներն այս տեսնելով, յանդիմանեցին Յիսուսին՝ ասելով. տե՛ս, Քո աշակերտներն անում են մի բան, որը թոյլատրելի չէ անել շաբաթ օրը։ Յիսուսն էլ երկու օրինակով արդարացրեց Իր աշակերտներին։ Նախ՝ Դաւթի օրինակով, որն իր հետ եղած մարդկանց հետ մտաւ Աստծոյ տունն ու կերաւ առաջաւորութեան հացը *(Ա Թագ. 21. 6)։* Բայց քանի որ նա այդպէս արեց, որպէսզի յագեցնի իր

քաղցը, այդ արարքն անմեղադրելի համարուեց, «ապա ուրեմն նաև Իմ աշակերտներն են անմեղադրելի,- ասում է Յիսուս,- քանի որ, ինչպէս Դաւթի դէպքում էր, քաղցի պատճառով այդ արեցին»:

Իսկ իբրև երկրորդ օրինակ՝ Յիսուսը բերում է քահանաներին, որոնք շաբաթ օրերին տաճարում զանազան ողջակիզութիւններ են անում: Բայց քանի որ դա կրօնի գործ էր, այդ պատճառով նրանք անմեղ էին համարւում, «ապա ուրեմն նաև Իմ աշակերտները,- ասում է Նա,- անմեղ են, քանի որ պաշտօնեաներն են նոր՝ բարձրագոյն կրօնի», որի մասին է նաև այս խօսքը. «Բայց ես ասում եմ ձեզ, որ տաճարիցն էլ մեծն է այստեղ»: Ապա Յիսուսը յաւելեց այն խօսքը, որը Օսէէ մարգարէն նախապէս ասել էր. «Ողորմութիւն եմ ցանկանում և ոչ թէ զոհաբերում» *(Օսէէ 6.6):* Չէր կամենում զոհաբերութիւն, քանի որ ողորմութիւն առաւել շատ էր կամենում. ահա այս մասին է մեր այս ատենաբանութիւնը:

2. Ողորմածութիւնը հոգևոր արհեստ է, որի ուսուցիչը Քրիստոսն է: «Ողորմութիւն եմ կամենում»,- ասում է Նա: Այս արհեստի

արհեստանոցը երկնքում է, իսկ նրա ստեղծագործություններն էլ ոչ թե երկաթից ու պղնձից են, այլ բարի կամքից ու բարեմտությունից: Իսկ նրա վաստակը երկնային ու երկրային բարիքներն են: Այս արհեստը բոլոր արհեստներից ազնուագոյնն է, քանի որ այն ոչ թե ոտքերին հագնելու մի բան է ստեղծում, այլ դէպի երկինք է ուղղում մեր ոտքերը, ոչ թե կտաւից հանդերձներ է կարում, այլ երկնային հարսանիքի համար պատշաճ լուսեղէն պատմուճան է հագցնում, ոչ թե քարէ տներ է շինում, այլ երկնքում՝ Աբրահամի գոգում է հանգչեցնում, և ոչ թե միայն մարմինն է բժշկում հիւանդութիւններից, այլ նաև հոգին է ամբողջովին ապաքինում մեղքից: «Ողորմութիւն տուէք, և ահա ամէն բան սուրբ է ձեզ համար» *(Ղուկ. 11. 41):*

Տեսնու՞մ ես այս արհեստի զօրութիւնը: Արհեստը մէկն է, բայց նրա գործերը՝ բազում: Հող մշակելը կերակրում է միայն, ջուլհակութիւնը միայն զգեստաւորում է, հիւսնութիւնը միայն պատսպարում է: Իսկ ողորմածութիւնն անում է ամէն բան՝ կերակրում է երկնային հացով, զգեստաւորում է լուսեղէն պատմուճանով և

բնակեցնում է երկնքում՝ լուսեղէն ապարանքների մէջ:

Հող մշակելը չափազանց դժուար գործ է, քանի որ հարկաւոր է եզներ լծել, հողը հերկել, ձմռանը պայքարել ցրտի դէմ, ամռանը պաշտպանել շոգից: Իսկ ահա ողորմութիւնը բաւականին դիւրին է, քանզի այն չունի այսպիսի դժուարութիւններ. ո՛չ եզների կարիք կայ, ո՛չ հերկելու, ո՛չ ձմռան ցրտից կամ որևէ այլ վնասակար բանից պաշտպանելու: Թէև երկրում ես սերմանում ողորմութիւնը, սակայն հաւաքում ես երկնքում, ուր ո՛չ գողն է գալիս գողանալու, և ո՛չ ցեցն է ապականում այն: Նաև՝ երկրում սերմանուածը միայն այստեղ է մեզ պիտանի, իսկ ողորմածութեան արհեստը և՛ այստեղ, և՛ հանդերձեալ կեանքում է պէտք գալու. այստեղ սերմանում ես, իսկ հանդերձեալ կեանքում՝ հնձում: Այս ոչ թէ իմ խօսքն է, այլ սուրբ Պօղոսի, որի միջոցով Հոգին էր խօսում. «Իսկ բարին գործելուց,- ասում է նա,- չձանձրանանք, որովհետև յարմար ժամանակին պիտի հնձենք» *(Գաղ. 6. 9):*

Մնացեալ արհեստները կապուած են իրար հետ, ինչպէս մշակութիւնը՝ դարբնութեան, քանի

որ եթէ դարբինը մշակին խոփ և մանգաղ չտայ, վերջինս չի կարող մշակել հողը: Այդպէս նաև ջուլհակը բազում ուրիշ արհեստներ է ծառայեցնում իր գործին, այլապէս անգործ կը մնայ: Այսպէս նաև միւսները, իսկ ահա ողորմութիւնը կախուած չէ որևէ այլ բանից, այլ միայն՝ մեծ կամքից և բարի մտքից:

3. Եւ թող ոչ ոք չասի, թէ ողորմութիւն անելու համար ունեցուածք է յարկաւոր: Ընթերցի՛ր սուրբ Աւետարանի պատմութիւնը և տե՛ս, որ մի չքաւոր այրի երկու լումայ գցեց գանձանակի մէջ, ու դա մեծ ողորմութիւն համարուեց նրա կողմից, քանի որ այդ տեսնելով՝ Յիսուսն Իր մօտ կանչեց Իր աշակերտներին և ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ չքաւոր այրին աւելի շատ գցեց, քան գանձանակի մէջ միւս բոլոր դրամ գցողները» *(Մրկ. 12. 43):* Ուստի եթէ դու ոսկու մեծ ձուլակտոր չունես, բայց մի բաժակ սառը ջուր ես տալիս ծարաւներին, այս արհեստի գագաթնակետին հասած կը լինես: Կեանքի պայմանները յաճախ ողորմութիւն են պահանջում, ուրեմն տու՛ր դիմացինիդ նրան անհրաժեշտը և կը կուտակես անկողոպտելի գանձ, անմահ կեանք և յաւիտենական տուն:

Եթէ մէկը քեզ սովորեցնէր մի հմտութիւն, որով կարողանայիր պահպանել ունեցուածքդ առանց որևէ կորստի, մարմինդ՝ առանց հիւանդութեան, և դու էլ միանգամայն երջանիկ լինէիր, արդեօք ամէն բան չէի՞ր տայ՝ այդ արհեստը ուսանելու համար: Եւ ահա ողորմածութիւ՛նն է այդ արհեստը, որ անկորուստ պահպանում է ունեցուածքդ. «Գանձեր դիզեցէ՛ք ձեզ համար երկնքում, որտեղ ո՛չ ցեց և ո՛չ ժանգ չեն ոչնչացնում, և ո՛չ էլ գողերը պատերն են ծակում ու գողանում» (*Մատթ. 6. 20):* Այն անմահ է դարձնում մարմինդ. «Ողորմութիւնը փրկում է մահից» *(Տոբ. 12. 9):* Եւ լիովին երջանկացնում է անձդ՝ քեզ Աստծուն նմանեցնելով. «Գթասի՛րտ եղէք, ինչպէս որ ձեր Հայրը գթասիրտ է» *(Ղուկ. 6. 36):*

4. Արարիչը մեզ հրամայեց ողորմած լինել ոչ միայն այն պատճառով, որ այս արհեստը շատ օգտակար է, այլև մեզ խնամելու նպատակով այն սերմանեց մեր մէջ: Քանզի մենք մեր աչքով ակնյայտ տեսնում ենք, թէ ինչպէս են ծնողները խնամում զաւակին, եղբայրները՝ եղբայրներին, ազգակիցները՝ ազգակիցներին և մարդը՝ մարդուն: Երբ տեսնում ենք կեղեքուած մէկին,

զայրանում ենք կեղեքողի վրայ, երբ տեսնում ենք կարիքի մէջ եղող մէկին, վշտանում ենք, սգաւորին տեսնելով՝ արտասւում, իսկ «ամբարիշտները անողորմ են» *(Առակ. 12. 10):* Ուստի մենք երախտապարտ ենք աղքատին օգնելիս, երբ վարձ ենք ստանում մեր աշխատանքի համար, քանի որ **երբ մենք աղքատին քիչ ենք տալիս, Աստուած հատուցում է մեզ բազմապատիկը**: Այս «առևտուրը» չափազանց շահաւէտ է, քանի որ ոչ թէ հարիւրի վրայ քսան կամ երեսուն ենք աւելացնում, այլ անցաւորի միջոցով անանցն ենք ձեռք բերում՝ մեծ առաւելութեամբ, և երկրաւորի միջոցով՝ երկնայինը:

Արդարև, այս ամէնը հենց այդպէս է լինելու, և Տէրն Ինքն է դա յայտնի դարձնելու դատաստանի ժամանակ, քանզի այնժամ Նա արդարներին հրաւիրելու է Իր արքայութիւն՝ ասելով. «Քաղցած էի, և ինձ ուտելիք տուիք, ծարաւ էի, և ինձ ջուր տուիք՝ խմելու, օտար էի, և ինձ ներ մէջ առաք, մերկ էի, և ինձ հագցրիք...» և այսպէս շարունակ *(Մտթ. 25. 35-36):* Եւ բոլոր յիշատակուածները ողորմութեան գործերն են: Իսկ ձախակողմեաններին տէրը պիտի ուղարկի դէպի անշէջ հուրը՝ ասելով.

«Քաղցած էի, և ինձ ուտելիք չտուիք, ծարաւ էի, և ինձ ջուր չտուիք...» և այսպէս շարունակ:

Ի՞նչ է սա նշանակում: Մի՞թէ միայն ողորմութիւնն է առաքինութիւն, և մեղք է միայն անողորմութիւնը: Ինչու՞ Տէրը արդարների այլ առաքինութիւնները չի յիշատակում, չի ասում, թէ՝ եղբայրասէր էիք, խոնարհ էիք, համբերող էիք և այլն: Որովհետև **ողորմութեան մէջ ամփոփուած են մնացեալ բոլոր առաքինութիւնները**: Նոյնկերպ նաև մեղաւորներին չի յանդիմանում՝ ասելով, թէ եղբայրատեաց էիք կամ հպարտ և կամ ամբարիշտ, քանի որ անողորմութեան մէջ պարունակւում են մնացեալ բոլոր մեղքերը:

5. Ողորմութիւնը ոչ միայն տուողին է օգուտ, այլև նրա ժառանգներին, ուստի եթէ մէկը կամենում է իր ժառանգների համար բարիք գործել, թող որ բազում ողորմութեան գործեր անի, քանի որ ողորմածների զաւակները որևէ բանի կարօտ չեն մնայ, որի մասին ասում է Դաւիթը. «Մանուկ էի ես և ծերացայ, բայց արդարին արհամարհուած չտեսայ կամ նրա զաւակին՝ հաց մուրալիս» *(Սաղմ. 36. 25):* Օրինակով բացատրեմ սա: Յայտնի է, որ ողորմած էր Աբրահամը, դրա

շնորհիւ որքա՜ն շատ օգուտ եղաւ նրան. մնացեալ մեծութիւնները դեռ մի կողմ, նաև նրա գոգում արդարների հանգիստը սահմանուեց: Եւ ոչ միայն այսքանը, դեռ նրա ժառանգների վրայ էլ բարիք տարածուեց, քանզի թէև Աբրահամի որդիները՝ իսրայէլացիները, ամբարտաւան ժողովուրդ էին, բայցևայնպէս իրենց ողորմած հօր շնորհիւ Աստծոյ զանազան ողորմութիւններին արժանացան:

Ինչու՞ Աստուած անապատում իսրայէլացիներին հրեշտակների հացը պարգևեց, որի մասին ասում է Դաւիթը. «Չհաց հրեշտակաց կերին մարդիկ» *(Սաղմ. 77. 25):* Որովհետև Աբրահամը՝ նրանց հայրը, կերակրեց հրեշտակներին: Աբրահամն իր ծառի հովանու ներքոյ բազում աղքատների էր պատսպարում, ուստի և անապատում ամպը հովանի եղաւ նրա որդիներին:

Աբրահամը «բաժանեց ու տուեց աղքատներին. նրա արդարութիւնը կը մնայ յաւիտեան» *(Սաղմ. 111. 9):* Տեսէ՛ք այս անգին ժառանգութիւնը և նման ժառանգութիւն թողէք ձեր որդիներին: Եւ ամէնն իմանալով՝ մենք և մեր որդիները մեզ քարոզուած

ողորմածութիւնը կրենք մեր մէջ, ուսուցանենք այս օգտակար արհեստը: Սովորե՛նք ողորմութիւն անել, քանի որ մենք ևս կարիք ունենք Աստծոյ ողորմութեանը՝ այստեղ և հանդերձեալ կեանքում, սակայն այդ ողորմութեանը չենք կարող արժանանալ ուրիշ կերպ, այլ միայն՝ աղքատներին բաժին տալով. «Տուէ՛ք, և պիտի տրուի ձեզ» *(Ղուկ. 6. 38)*:

ՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՄԷՋ

«Զգո՛յշ եղէք այդ օրէնսգէտներից, որ ուզում են շքեղ զգեստներով ման գալ»։ (Մարկ. 12. 38)

Յայտնի է, որ մարդուն երեք տեսակի՝ հոգևոր, մարմնական և արտաքին բարիքներ են պատշաճում։

Հոգևորը հոգու առաքինութիւններն են, որ ճշմարիտ բարիք է, քանզի անկորուստ են մնում և երկնքում են գանձւում։

Մարմնականը մարմնի գեղեցկութիւնն է և ոյժը, որ թէև ներքին երևոյթ են, բայց կերպարանք ունեցող բարիք են, քանզի դիւրաւ և արագ անցնում-գնում են։

Իսկ արտաքին բարիք են ունեցուածքը, ինչքը, որոնցից ամենամօտիկը մարմնի համար հագուստն է։ Արտաքինը կարելի է և բարիք

չհամարել, քանզի ստանալիս տանջում է տիրոջը և հետզհետէ հոգու վրայ հոգսեր աւելացնում:

Բայց արի ու տես, որ հպարտութեան անիրաւ մեղքը ոչ միայն հոգևոր ու մարմնաւոր բարիքների մէջ է կարողանում մտնել, այլ նաև արտաքին բարիքների մէջ է սպրդում և մտնում: Գիտէ՞ք, քանի՛ հոգևոր անձինք են հպարտութեան ախտով վարակուել և իրենց հոգևոր բարիքներն ունայնացրել: Բացայայտ տեսնում ենք, որ այն թագաւորում է նաև մարմնական բարիքի վրայ:

Իսկ ի՞նչ տեղ ունի արտաքին բարիքը, որ թէև մարմնից դուրս է, սակայն նրա վրայ նոյնպէս յաճախ թագաւորում է հպարտութիւնը, ինչպէս Իսրայէլի դպիրների դէպքում, երբ նրանք կամենում էին շրջել երևելի հանդերձանքով, որոնցից Իր աշակերտներին զգուշանալ է յորդորում երկնաւոր վարդապետ Յիսուս Քրիստոսը՝ Սուրբ Աւետարանի միջոցով ասելով. «Զգուշացէ՛ք օրէնսգէտներից, որոնք ուզում են պատմուճաններով շրջել և սիրում են ողջոյններ ընդունել հրապարակներում» *(Ղուկ. 20. 46):*

2. Երևելի ու թանկարժէք հագուստները պաճուճուած են տեսակ-տեսակ զարդերով:

Սակայն դրանք, լինեն թանկարժէք, թէ էժան, նոյն կէրպ են ծածկում մեր մերկութիւնը և նոյն կերպ տաքացնում: Եւ ի՞նչ առաւելութիւն ունի թանկը կամ էժանը:

Ամէն առարկայ մի նպատակի է կոչուած, և երբ փոխւում է այդ նպատակը, մոլութեան է վերածւում: Հագուստի նպատակն է՝ ծածկել մերկութիւնն ու պահպանել մարմինը ցրտից: Իսկ եթէ փոխւում է դա, սնապարծութեան ու մահացու մեղքի է վերածւում: Հագուստն այնքան պէտք է լինի, ասում է Սուրբ Պօղոսը, որքան կարիքն է պահանջում՝ չպէտք է «զարդարուել մարգարտով ընդելուզուած ոսկեայ հիւսքերով կամ պճնազարդ զգեստներով» (Ա Տիմ. 2. 9): Ինչ կերակուր կամ հագուստ ունենք, ասում է Սուրբ Պօղոսը, նրանով պիտի բաւարարուենք, որով նա կամենում է ասել, որ հագուստն այնպիսին պէտք է լինի, որ ընդամէնը հագնել կարողանանք:

Պարկեշտութիւնը փայլ է ստանում հագուստի ընտրութեամբ: Այն աչք է շոյում արտաքինից. նախ՝ նիւթից, որը պէտք է յարմար ու գործածելի լինի, ոչ աւելին: Երկրորդ՝ ձևից, որ պարզ լինի և ոչ թէ ձևաւոր՝ տեսնողներին ցոյց տալու համար:

Երրորդ՝ մաքրութիւնից, որ վայելուչ լինի և ոչ թէ աղտոտ, իսկ սրանցից աւելին մոլութիւն է:

Բայց գուցէ ոմանք ասեն, թէ ամօթ է անզարդ, էժան զգեստներ հագնելը, քանզի երբ մարդիկ տեսնեն, կը պախարակեն: Հարց տամ՝ ո՞վ է ստիպում, որ իրեն շատ նայեն. նա, ով երևելի հագուստնե՞ր է կրում, թէ՞ նա, ով հասարակ է հագնւում: Յայտնի է, որ հասարակ զգեստ հագած մարդուն նայում են ու անցնում. երևելի հագուստ հագած մարդուն ակնապիշ նայում են ու հետաքրքրւում. «Տեսնես ո՞վ է այս մարդը, որտեղի՞ց է...»:

Արդ՝ ո՞րն է աւելի ամօթալի, երբ ամենքը նայում ու քննարկման նի՞ւթ են դարձնում անձդ, թէ՞ երբ որևէ մէկը չի նայում և անցնում է: Ուրեմն եթէ ոչ ամօթի, ապա ինչի՞ համար է պճնուելը: Ընդունի՛ր, քեզանից աւելի անմի՞տ ես համարում քեզ նայողին, սթափուի՛ր անմտութիւնից. եթէ չես կամենում որսալ, ինչու՞ ես զարդարանքովդ որոգայթ լարում:

3. Ի՞նչ է հագուստը: Ցստակ է՝ մեր աղքատութեան նշանն է, քանզի երբ մարդը երջանկութեան մէջ էր դրախտում, նրա հագին

կար միայն լուսեղէն պատմուճան, իսկ երբ մեղք գործեց, այնժամ հագուստի կարիք ունեցաւ: Տեսաւ Աստուած մարդուն մեղքերի մէջ և որպէս մեղաւորութեան նշան՝ նրան կաշուեայ հագուստներ հագցրեց, որպէսզի նա տեսնի, ճանաչի իր մեղքերն ու ապաշխարի: Ուստի հագուստն ինքնին մարդկանց որդիների անարգանքի յաւէրժական յիշատակն է, քանզի տրուեց՝ որպէս պատիժ մեղքերի համար, և ինչպէս մեղքերը, այնպէս էլ հագուստ կրելու կարիքը փոխանցուեց մարդու որդիներին:

Ցիմար է այն պարծենկոտը, որ ուրախանում է իր ոսկեայ շղթաներով, որ թէև ոսկեայ են, բայց միևնոյն է՝ կապանքներ են: Իր ողջ ունեցուածքից զրկուած և ծառայի սեղանի փշրանքներին անգամ կարօտ մնացած հարուստը կարո՞ղ է արդեօք պարծենալ, թէ ոսկի ունի իր բերանում: Բայց ահա այդպիսի մի բանով է պարծենում մարդկութիւնը, քանի որ զրկուելով լուսեղէն պատմուճանից՝ հողի սողունների և վայրի կենդանիների կարիքն է ունենում, որպէսզի դրանց մաշկը ծածոց դարձնի իր մարմնի համար:

Խոհեմ մարդն իր համար փառք է համարում ոչ շքեղ հանդերձանքը, իսկ ով կամենում է յարգանքի արժանանալ հագուստի շնորհիւ, ցոյց է տալիս, թէ չունի յարգանքի արժանի մէկ այլ բան: Դու ի՛նքդ զարդ դարձիր հագուստին, և ոչ թէ հագուստը՝ քեզ: Սադափը, որից մարգարիտ է ծնւում, ողորկ լինի, թէ խորդուբորդ, վնասակար չէ մարգարտին, քանզի դրանից մարգարտի գինը վաճառելիս չի նուազում:

4. Դաւիթ մարգարէն ասում է. «Արքայադստեր ողջ փառքը իր մէջ է» *(Սաղմ. 44:14):* Արքայադուստրը նոյնպէս մարդ է, որ ստեղծուած է ամենամեծ թագաւոր Աստծոյ պատկերով, ուրեմն նրա ամբողջ փառքը, այսինքն՝ զարդեղէնը, գեղեցկութիւնը պէտք է ներսում՝ հոգում լինեն, ոչ թէ մարմնի վրայ: Իսկ եթէ հակառակն է լինում, անարգութեան է վերածւում, ըստ գրուածի, որ ասում է. «Ես ծառաներ եմ տեսել, որ ձի հեծած են շրջել, և իշխաններ, որոնք երկրի վրայ քայլել են ծառաների նման» *(Ժող. 10:7):* Ոչ մէկի համար ընդունելի չէ այդպիսի անկարգութիւնը: Երկիրը, որ ամէն ինչ անտրտունջ կրում է իր վրայ, դա չի՛ տանի, որի մասին գրուած է. «Երեք բան կայ,

որոնցից դողում է երկիրը, և մի չորրորդն էլ կայ, որից չի կարողանում հանդարտուել. ծառան է դա, երբ թագաւոր է դառնում» *(Առակ. 30. 21-22):*

Երբ Աստուած ստեղծեց մարդուն, նրա ներսում պատուական հոգին դրեց, ինչպէս բնութիւնը հողի ներսում պահում է ոսկին, արծաթն ու պատուական քարերը, կամ ինչպէս դառն կեղևի տակ պահւում են անուշահամ պտուղները: Իսկ պճնասէր մարդը իր բեհեզեայ հագուստի տակ պահում է միս ու ոսկոր, արիւն ու այլ բաներ, ինչպէս դպիրներն էին, որոնց Տէրը նմանեցնում է մեռելների գերեզմաններին, քանի որ զարդարուած գերեզմանի պէս արտաքինից գեղեցիկ են, բայց ներսից լի են գարշութեամբ: Այդպէս դպիրները արտաքուստ զարդարուած էին երևելի հանդերձանքով, բայց ներքուստ լցուած էին մեղքերի գարշահոտութեամբ:

5. Պարկեշտութեան այս առաքինութիւնը ոչ միայն հագուստով, այլ ձեր բոլոր զգայարաններով պէտք է փայլի: Գիտէք, որ մկրտութեան պահին մեր զգայարանները օծւում են հոգու իւղով, ուրեմն՝ դրանցից պէտք է անուշահոտութիւն բուրի առ Աստուած՝ ըստ Սուրբ Պօղոս առաքեալի ասածի.

«Քրիստոսի բուրմունքն ենք Աստծոյ առաջ» *(Բ Կոր. 2. 15)*: Ուրեմն՝ եթէ ձեր զգայարանները պարկեշտութեան զարդեր չունենան, անուշահոտութեան փոխարէն գարշահոտութիւն կը գայ դրանցից, և ինչպէ՞ս Աստուած կը հոտոտի:

Դու մարդ ես, որևէ գարշահոտ բան ձեռքդ չես առնում, աւելին՝ զզւում ու երես ես դարձնում դրանցից: Իսկ Աստուած ինչպէ՞ս պէտք է Իր ձեռքերում ընդունի քեզ, եթէ քաղցր չես բուրում: Չէ՞ որ գրուած է. «Արդարների հոգիներն Աստծոյ ձեռքին են» *(Իմաստ. 3. 1)*: Իսկ գարշահոտութիւն բուրողները կ՚ընկնեն Աստծոյ ձեռքերից, որի մասին դարձեալ գրուած է. «Նրանք քո ձեռքից մերժուեցին»:

Եթէ կամենում էք անուշահոտութիւն լինել Աստծոյ համար, ձեր բոլոր զգայարանները զարդարէ՛ք պարկեշտութեամբ: Պարկեշտ առաքինութիւնները հայելու պէս ցոյց են տալիս մարդու ներսը, քանի որ դրանց միջոցով երևում է մարդու բնոյթը: Ինչպէս ժամացոյցի սլաքի աշխատանքը անիւների՝ կարգաւորուած լինելու նշան է, այնպէս էլ զգայարանների՝ աչքերի, լեզուի, ձեռքերի և այլ անդամների շարժումները նշան են

կարգաւորութեան, երբ պարկեշտութեամբ են կարգաւորուած: Իսկ եթէ զուրկ լինեն պարկեշտութիւնից, յոռութեան նշան են, քանզի գրուած է՝ «Մարդու հագուստը, երեսի ծիծաղը և ոտքի քայլքը պատմում են նրա մասին» *(Սիրաք. 19. 27)*:

ՉԳՈՒՇԱՑԻ՛Ր ՄԵՂՔԻՑ

«Խուսափի՛ր չարից և բարիք գործի՛ր»։
(Սաղմ. 33. 15)

1. Մեղքը լինում է երկու տեսակի. Այն ծնւում է նախ՝ ինչ–որ բան անելու և ապա՝ ինչ-որ բան չանելու պատճառով: Եւ այդպէս կարող ենք մէկը կոչել մեղք, միւսը՝ յանցանք: Եւ քանի որ արգելուածն անելը մեղք է, իսկ պատուիրուածը չանելը՝ յանցանք, ուստի այս երկուսն էլ հաւասարապէս դատապարտելի են: Սուրբ Աւետարանում երկու չար ծառաներ են յիշատակւում. մէկն իր մտքում ասաց. «Իմ տէրը ուշանում է գալ» *(Մատթ. 24. 48)*, և սկսեց հարուածել ծառայակիցներին, ուտել ու խմել հարբեցողների հետ: Իսկ միւսն առաւ իր տիրոջ արծաթը, գնաց, հողը փորեց և թաքցրեց այն *(Մատթ. 25. 18):* Այն

առաջինն ինչ-որ մի բան անելով մեղք գործեց, երբ վնասեց իր ծառայակիցներին, կերաւ-խմեց զեխութեամբ, իսկ երկրորդը զանցառութեամբ մեղք գործեց, քանի որ չաւելացրեց իր տիրոջ արծաթը, այլ թաքցրեց հողի տակ: Եւ երկուսն էլ նոյն կերպ պատժուեցին. մէկին տէրը հարուածեց սպանեց ու կեղծաւորներին բաժնեկից դարձրեց: Միւսին էլ հրամայեց տանել արտաքին խաւարը, այսինքն՝ դատապարտեալների բնակավայրը:

Տեսէք, մեղաւորն ու յանցաւորը նոյն կերպ պատժուեցին, այդ պատճառով է Դաւիթ մարգարէն խրատում աստուածապաշտներին հաւասարապէս զգուշանալ և՛ մեղքից, և՛ յանցանքից: Առաջինի մասին ասում է. «Խուսափի՛ր չարից», իսկ երկրորդի մասին՝ «Բարիք գործի՛ր». այս երկուսի մասին խօսենք աւելի մանրամասն:

2. Մարգարէն ասում է՝ «Խուսափի՛ր չարից», և չի ասում՝ «Մի՛ գործիր չարը», որով կամենում է մատնանշել, թէ մարդը որքա՛ն պէտք է զգուշանայ չարից, ոչ միայն չարիք չգործի, այլև ընդհանրապէս չմօտենայ չարին, իսկ եթէ զգայ, որ այս կամ այն գործը չար է, ինքնակամ հեռանայ դրանից,

որովհետև գուցէ մէկը վստահ է, որ չար բան չի անում, սակայն հնարաւոր է, որ մօտենալով անգամ մեղանչելու առիթ ունենայ:

Ինչու՞ է այսքան զգուշացնում՝ հեռու մնալ չարից. որովհետև այս զգուշութիւ՛նն է բարի գործերի սկիզբը: Ու նաև, եթէ մէկը կամենում է բարիք գործել, ապա պէտք է նախ խուսափի ու փախչի չարից: Այս կերպ ամենաբարի Արարիչ Աստուածը, երբ կամեցաւ երկիրը ծաղիկներով ու ծառերով զարդարել, նախ մաքրեց այն՝ ջրերը մի տեղում հաւաքելով. «Թող երկնքի տակ գտնուող ջրերը,- ասում է,- հաւաքուեն մի տեղ, և երևայ ցամաքը»: Ջրերը նախատիպն են մոլութիւնների, որոնք անհրաժեշտ էր նախ հեռացնել, որպէսզի երևար ցամաքը. այդպէս՝ մեղքից մաքրուած մարդու հոգում ծլարձակում են առաքինութիւնների ծառերն ու ծաղիկները:

Այդպէս են անում նաև հողագործները. նախ հողը մաքրում են փշերից ու քարերից, ապա տնկում են որթը կամ ցանում սերմերը: Եւ ուրեմն, եթէ մէկը կամենում է արդիւնաւէտ բարեգործութիւն անել, պէտք է նախ մեղքի փշերից և քարերից սրբուի: Աբրահամը հաւատքի

հայր եղաւ՝ կատարելով աստուածային այս հրամանը. «Հեռացի՛ր քո երկրից, քո ցեղից ու քո հօր տնից» *(Ծնն. 12.1):* Աբրահամը չէր ընդունի փրկութեան աւետիսը, եթէ չհեռանար կռապաշտների երկրից, այդ կերպ մենք ևս չենք կարող մեր փրկութեան աւետիսը ստանալ, եթէ նախ չհեռանանք մեր մեղքերից: Մովսէսն աստուածախօս եղաւ, բայց մինչ այդ նա նախ հեռացաւ փարաւոնի տնից, ինչպէս սրբազան առաքեալն է ասում. «Հաւատո՛վ է, որ Մովսէսը երբ մեծացաւ, մերժեց փարաւոնի դստեր որդի կոչուել» *(Եբր. 11. 24):* Այսպէս մենք ևս Աստծոյ հետ դաշն կը կապենք, եթէ մեղքի տնից հեռանանք դէպի ապաշխարութեան անապատները:

Մանանան չէր իջնի եբրայեցիների բանակի վրայ, եթէ մինչ այդ Եգիպտոսի ալիւրը սպառուած չլինէր: Եգիպտոսի ալիւրը մեղքի նախօրինակն է, իսկ մանանան նախատիպն է սուրբ Հաղորդութեան, որին արժանի չենք լինի, եթէ չսպառենք մեր բոլոր մեղքերը: Աստուած իսրայէլացիներին Քանանի երկիրը պարգևելիս նրանց նախ պատուիրեց ոչնչացնել այդ երկրում եղած ամէն բան, որպէսզի այնտեղի մարդիկ իրենց

չար գործերով իսրայէլացիների համար մեղքի մէջ ընկնելու առիթ չդառնային: Աւետեաց երկիրը մեր հոգին է, որը մենք այստեղ ծառայեցնում ենք մեր թշնամիներին, այսինքն՝ մարմնին, աշխարհին և սատանային: Այժմ, սակայն, Աստուած կամենում է այն դարձեալ պարգևել մեզ, միայն թէ հենց սկզբից պատուիրելով, որ վերացնենք այնտեղի բոլոր չար բնակիչներին, այսինքն՝ մեղքը և մեղք գործելու ցանկութիւնը, որպէսզի մեզ համար այլևս մեղքի մէջ ընկնելու առիթ չլինի: Երբ Իսրայէլը պարտութիւն կրեց Գայիի մարդկանցից, Աստուած Յեսուի միջոցով ասաց Իսրայէլին. «Նզովք կայ ձեր մէջ, դուք չէք կարող կանգնել ձեր թշնամիների առաջ, մինչև որ նզովքը ձեր միջից չվերացնէք» *(Յեսու 7. 13):* Այս խօսքով նաև մե՛զ է դիմում, որպէսզի մեզնից վերացնենք մեղքի նզովքը: Ու քանի որ ինչքան բեռնաւորուած լինենք մեղքով, այնքան անկարող կը լինենք մարտնչել հոգևոր թշնամիների դէմ, ուստի մեզ մեծ զգուշութիւն է հարկաւոր մեղքից հեռու մնալու համար:

3. Սուրբ մարգարէ Դաւիթն ասում է. «Ով սիրում է մեղքը, ատում է իր անձը» *(Սաղմ. 10. 6),* քանի որ մեղքը մեծ չարիք է հասցնում այն գործողին: Նախ,

տակնուվրայ է անում մեղաւորի կեանքը, քանի որ մեղքը թունաւոր մեղր է. ճաշակելիս քաղցր է թւում, սակայն աստիճանաբար թունաւորում է, ու եթէ այն սիրում և ուտում ես, նշանակում է՝ ատում ես ինքդ քեզ:

Երկրորդ՝ մեղքը տակնուվրայ է անում խիղճը, կատաղի է դարձնում մեղաւորին, չարութեամբ բացում է իր բերանը և դառը խօսքերով անդադար ներքուստ տանջում է նրան: Եւ եթէ, ըստ իմաստունի, «լաւ է բնակուել անապատում, քան թէ անզգամ, լեզուանի և բարկացկոտ կնոջ հետ» *(Առակ. 21. 19),* ապա ի՞նչ ասել չար լեզուի ու դահիճ խղճմտանքի հետ բնակուելու մասին. ահա թէ ինչու՝ ով սիրում է մեղքը, ատում է իր անձը:

Երրորդ՝ մեղքը կորստեան է մատնում շնորհները, այդ թւում և՝ Աստծոյ որդի լինելը և Արքայութիւնը ժառանգելը, ու մեղաւորին իր իսկ ատելութեան գերին է դարձնում: Նաև մեղաւորին մատնում է չար գազանների՝ մոլութիւնների ձեռքն ու ապականում է նրա հոգին, ուստի եթէ կամենում ես սիրել քեզ, մի՛ սիրիր մեղքը և մի՛ մօտեցիր, մի՛ հպուիր մեղքին, այլ հեռացի՛ր նրանից: Թիթեռն այնքա՞ն է սիրում ճրագի բոցը, որ մինչև անգամ

յարձակւում է նրա վրայ և ցանկանում ճաշակել, սակայն այրւում է հրից. և այդպէս, սիրելով կրակի բոցը, նա ատում է իր անձը: Երբ Եւան տեսաւ, որ պտուղը գեղեցիկ ու ախորժելի է ուտելու համար, ցանկութեամբ առաջնորդուեց, մօտեցաւ ու կերաւ և կորստեան մատնուեց: Այնպէս, ինչպէս Եւան սիրեց մեղքն ու այդպիսով ատեց իր անձը, այդպէս էլ բոլոր նրանք, ովքեր հարում են մեղքին, ատելով ատում են իրենց անձը:

Չորրորդ՝ մեղքը մարդուն Աստծոյ բարկութեան առջև է կանգնեցնում և դժոխքի յաւիտենական պատիժների բաժին է դարձնում: Այնտեղ՝ դժոխքում, մեղաւորի մեղքերը նրան կանգնեցնում են Աստծոյ առջև, և այդժամ մարդը ինչը սիրել է, դրանից էլ տանջւում է: Ուրեմն, միանգամայն ճշմարիտ է այն խօսքը, որն ասում է. «Ով սիրում է մեղքը, ատում է իր անձը»: Չէ՞ որ այն հիւանդը, որը սիրում է վնասակար կերակուր ուտել, ատում ու կորստեան է մատնում իր անձը, իսկ նա, ով ժուժկալ է վնասակար բաներ ուտելիս և ըմպելիս ու յօժարութեամբ է դառը դեղ ընդունում, սիրում և փրկում է իր անձը: «Ով կամենայ իր անձը փրկել, այն կը կորցնի» *(Մատ. 16. 25).* նա իրեն կը փրկի

օգտակարը ուտելով, չի կորցնի իր անձը՝ չարը սիրելու պատճառով: Դու ևս սիրի՛ր քո ախտը, ինչպէս քո փտած ոտքը, որը, եթէ չկտրես, կը մեռնես: Ճիշտ այդպէս, որքան էլ սիրես քո դրամը, եթէ այն չտաս հաց գնելու համար, քաղցած կը մնաս, իսկ քեզ դրամից զրկելով՝ կապրեցնես անձդ՝ կերակուր ունենալով: Այսուհետև, ուրեմն, զգուշացի՛ր մեղքից և այդպէս իսկապէ՛ս կը սիրես ինքդ քեզ:

4. Զգուշութեան մի գեղեցիկ օրինակ է սուրբ Յովհաննէս Մկրտչի կեանքը. յայտնի է, որ նա մանուկ հասակում, հեռանալով աշխարհից, մեկուսացաւ անապատում, ինչու՞, որպէսզի հեռու լինի մեղքի պատրանքից: Մի՞թէ նա, որ մօր արգանդից իսկ սուրբ էր և ոչ մի մեղք չէր գործել, անապատում ապաշխարելու կարիք ունէր, այն էլ՝ ոչ թէ մէկ կամ երկու, այլ շուրջ երեսուն տարի: Մարիամ Մագդաղենացու ապաշխարելն, օրինակ, զարմանք չի առաջացնում, քանի որ նա մեղանչել էր, սակայն այս արդարն ինչու՞ ապաշխարեց: Որևէ մէկը թող չասի, թէ մանկակոտոր Հերովդէսի երկիւղից Յովհաննէսը մնաց անապատում, որովհետև եթէ այդպէս լինէր, ապա կարող էր

այնտեղից վերադառնալ Հերովդէսի վախճանից յետոյ, ինչպէս որ Յիսուսը վերադարձաւ Եգիպտոսից:

Ուրեմն ճիշտ է այն, որ, ինչպէս ասացի, Յովհաննէսը անապատ հեռացաւ մանուկ հասակում և երկար ժամանակ մնաց այնտեղ, որպէսզի հեռու լինի մեղքի պատրանքից: Դուք մի՛ զարմացէք Յովհաննէսի այսպիսի զգուշութիւնից, այլ հիացէ՛ք Փրկչի այն արարքից, որ երբ կամեցաւ ծոմ պահել, գնաց անապատ և այնտեղ ծոմապահութեան դիմեց: Ձեր մտքում միշտ վա՛ռ պահէք Սրբութեան այս վարմունքը, քանի որ պահեցողութեան նպատակով անապատ գնալով՝ Փրկիչը մեզ օրինակ է տալիս, որ մենք ևս, մանաւանդ պահք պահելիս, առաւել զգուշանանք մեղքից ու մեղքի պատրանքից:

5. Մեղքից զգուշանալու երկու հնար կայ. մէկը մտքի միջոցով է, միւսը՝ գործերի: Մտքի շնորհիւ մեղքից զգուշանալու առաջին հնարը Տիրոջ չարչարանքների մասին մտածելն է, ինչպէս խրատում է մեզ սրբազան առաքեալ Պօղոսը՝ ասելով. «Ապա ուրեմն՝ մտաբերեցէ՛ք Յիսուսին, որ այսպէս համբերեց իր հանդէպ մեղաւորների

ունեցած հակառակութեանը» *(Եբր. 12. 3)*: Այս խորհուրդն էր ամփոփուած, երբ անապատում իսրայէլացիները, նայելով ձողի վրայի պղնձէ օձին, ազատւում էին խայթող օձերի թոյնից, որի մասին է Տէրն ասում. «Եւ ինչպէս որ Մովսէսը անապատում բարձրացրեց օձը, այնպէս էլ մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի ով Նրան հաւատում է, յաւիտենական կեանքն ընդունի» *(Յովհ. 4. 14-15):* Այս պատճառով է սուրբ Եկեղեցին Մեծ պահքի օրերին մեր առջև դնում Տիրոջ խաչելութեան պատկերը, որպէսզի մտաբերենք ամէնը:

Մեղքից զգուշանալու երկրորդ հնարը Աստծոյ ներկայութեան մասին մտածելն է՝ յիշելով, որ Նա ամենուր է, և մենք որտեղ էլ մեղանչենք, մեղանչած պիտի լինենք Նրա ամենատես աչքի առաջ, ինչպէս անառակ որդին, որը խոստովանելով ասաց. «Հայր, մեղանչեցի Երկնքի դէմ և Քո առաջ» *(Ղուկ. 15. 25)*: Իսկ մինչ այժմ ո՞վ է արդեօք, որ մեղանչել է թագաւորի առաջ և չի պատժուել: Այս մտածումը շատ զօրաւոր է, քանզի ըստ Դաւթի՝ եթէ «չկայ Աստուած նրա աչքերի առջև, մշտապէս պիղծ են նրա ճանապարհները» *(Սաղմ. 9. 21):* Ուրեմն ով

Աստծուն մշտապէս իր աչքերի առաջ ունի, նրա վարքի ճանապարհը մաքուր կը լինի:

Երրորդ հնարը մարդու վախճանի մասին մտածելն է, որ կարող է լինել մահը, դատաստանը, դժոխքը և Արքայութիւնը. այս բոլորը եթէ մարդ միշտ իր մտքում ունենայ, ազատ կը լինի մեղքից: «Յիշի՛ր քո վախճանը, և յաւիտեան չես մեղանչի» *(Սիրաք 7. 40):*

Իսկ ահա գործերի միջոցով առաջին հնարը կատարեալ հնազանդութիւնն է Աստծուն և, հետևաբար, աստուածայիններին, որոնք հոգևոր և մարմնաւոր ծնողներ են, նաև՝ բարի դաստիարակներ, քանի որ գրուած է. «Խոնարհ մարդը խօսում է զգուշութեամբ» *(Առակ. 21. 28):* Երկրորդ հնարը հանապազօրեայ աղօթքն է, ինչպէս ասում է Տէրը. «Այդ տեսակը ուրիշ բանով չի ելնի, եթէ ոչ ծոմապահութեամբ ու աղօթքով (Մարկ. 9. 28): Երրորդ հնարը Սուրբ Գրքի ընթերցանութիւնն է կամ յօժարութեամբ լսելը, քանի որ երբ աղօթում ենք, մե՛նք ենք Աստծոյ հետ խօսում, իսկ երբ ընթերցում ենք, Աստուած է մեզ հետ խօսում: Իսկ ինչպէ՞ս կարող է սատանան մօտենալ մեզ, եթէ մենք մտերիմ լինենք Աստծոյ

հետ։ Չորրորդ հնարն էլ մեղքի պատրանքից փախչելն է։ Եւ ահա այս հնարներո՛վ է, որ մարդը կարող է զգուշանալ մեղքից՝ ըստ սուրբ մարգարէի կարևոր խրատի. «Խուսափի՛ր չարից ու բարի՛ք գործիր»։

ԲԱՄԲԱՍԱՆՔ

«...Եւ ապա Յիսուս բռնեց նրա լեզուից»։
(Մարկ. 7. 33)

1. Չենք սխալուի, եթէ Տէր Յիսուսին, ում տարբեր անուններով են կոչում, նաև բժիշկ անուանենք: Մեծագոյն աստուածաբան սուրբ Յովհաննէսն է Նրան այդպէս անուանում՝ ասելով. «Բժիշկ, որ ձրի ես բժշկում»: Դիւրութեամբ էր բժշկում Յիսուս, քանի որ բորոտին սրբում էր՝ «Կամենում եմ, սրբուի՛ր» ասելով, անդամալոյծին ստիպում էր քայլել՝ «Վե՛ր կաց, վերցրու՛ մահիճդ և գնա՛ քո տուն» ասելով, դևերին հալածում էր՝ միայն հրաման տալով, մահացածին յարութիւն էր տալիս ձայնով միայն:

Այս ամէնը զարմանալի չէ, որովհետև հենց խօսքն ասուեց, եղան երկինքն ու երկիրը,

երկնաւորներն ու երկրաւորները: Զարմանալին այն է, որ ինչպէս սուրբ Աւետարանն է պատմում, երբ Յիսուսի առաջ բերեցին խուլ ու յամր մէկին, որպէսզի բժշկի, Յիսուս «Բռնեց նրա լեզուից, դէպի երկինք նայեց, հոգոց հանեց և ասաց՝ «եփփաթա», որ նշանակում է՝ «բացուի՛ր»: Եւ ապա բացուեց յամրի լեզուն:

Այս ի՞նչ նոր ու սքանչելի օրինակ է, ի՞նչ կարիք կար բռնելու նրա լեզուից, նայել երկինք, հոգոց հանել և ապա միայն ասել՝ բացուի՛ր: Ինչու՞ Տէրը բացուելու հրաման տուեց ոչ թէ միանգամից, այլ այդքան գործողութիւններից յետոյ միայն: Յիսուս դա արեց ոչ թէ այն պատճառով, որ Իր համար դժուար էր բանալ յամր մէկի լեզուն, այլ քանի որ լեզուն բոլոր անդամներից աւելի վտանգաւոր է, այդ պատճառով է հոգոց հանելով և տարբեր գործողութիւններով լեզուն բացում, որպէսզի զանազան չարախօսութիւնները վերացնի: Դրա համար է նաև, որ Տէրը դեռ արարչագործութեան ժամանակ հոգաց և երկու «դուռ» տուեց լեզուին՝ ատամնաշարն ու շրթունքները՝ այդպիսով ուսուցանելով, որ մեծագոյն զգուշութիւն պէտք է ունենալ լեզուի

նկատմամբ: Ահա թէ ինչու այս դրուագում յամրի լեզուն բանալիս Յիսուս «բռնեց նրա լեզուից, դէպի երկինք նայեց, հոգոց հանեց և ասաց՝ եփփաթա»:

2. Արդարև, **եթէ լեզուն ճշտութեամբ տնօրինենք, երկնքի բանալին է, իսկ եթէ թիւր կերպով՝ բանալին է դժոխքի**: Եգիպտոսի Ամասիա անունով թագաւորը Պիանդոսին՝ իր իմաստասէրներից մէկին, պատուի արժանացրեց՝ խնդրելով իր համար պատրաստել մի այնպիսի կերակուր, որը միաժամանակ և՛ լաւ բան լինէր, և՛ վատ: Իմաստունը նրան լեզու մատուցեց, քանի որ լեզուն լաւ բան է, երբ բարին ես խօսում, և վատ բան է, երբ խօսում ես չարը: Այս մասին նաև Սողոմոնն է ասում. «Մահն ու կեանքը լեզուի իշխանութեան տակ են» *(Առակ. 18. 21):* Իսկ լեզուն ոչ թէ իր բնութեամբ է շարժւում, այլ՝ ըստ մեր կամքի, քանի որ մեզնից է կախուած՝ մենք այն ամբողջովին մեղքի՞ գործիք կը դարձնենք, թէ՞ արդարութեան:

Եւ արդ, լսէ՛ք, թէ ինչպէս են ոմանք լեզուն իբրև մեղքի գործիք ծառայեցնում, իսկ ոմանք՝ իբրև արդարութեան գործիք: Առաջինի մասին Դաւիթն ասում է. «Նրանց լեզուներն ասես սուր սուսեր են»

(Սաղմ. 56. 5): Իսկ երկրորդի մասին ասում է. «Լեզուս նման է արագ գրող դպրի գրչի» *(Սաղմ. 44. 2):* Տեսէ՛ք, «սուսեր» լեզուով սպանութիւն գործեցին, իսկ դպիրը աստուածային գրքերի օրէնքները գրի առաւ, առաջինների լեզուներն իբրև սուսեր եղան, իսկ սրանը՝ իբրև գրիչ, այսինքն՝ ո՛չ ըստ լեզուի բնութեան, այլ ըստ այն տնօրինողների ընտրութեան, քանզի այլ բան է լեզուի բնութիւնը, մէկ այլ բան՝ նրա գործը:

Արդ, սուր է բամբասողի լեզուն, այն վիրաւորում է բոլոր նրանց, որոնց մասին խօսում է, միևնոյն ժամանակ անկարող է այդ վէրքերը բժշկել: Բամբասողի լեզուն կարող է անգամ իր աղաւնի եղբօրը բամբասել, թե նա օձ է, բայց չի կարող օձ կարծեցեալին իբրև աղաւնի ներկայացնել, քանի որ լեզուն ունակ է պարկեշտին վատահամբաւ դարձնել, մինչդեռ անկարող է վատ համբաւը հեռացնել: Լեզուն կարող է ջերմեռանդի մասին ասել, թէ նա կեղծաւոր է, սակայն չի կարող կեղծաւոր կարծեցեալին ներկայացնել իբրև Աստծուց երկիւղ ունեցողի:

3. Բամբասողի լեզուն շատ նման է օձի լեզուին. ըստ բնագէտների՝ օձի լեզուն փափուկ է,

երկսայրի, երկար ու գարշահոտ: Այդպիսին է նաև բամբասողի լեզուն. փափուկ է, քանի որ մեղմութեամբ է խօսում, երկսայրի է, քանի որ կրկնակի վերքեր է առաջացնում՝ նախ՝ բամբասողի հոգին է մահացու վիրաւորում չար մեղքերով, և յետոյ՝ լսողի միտքն է թունաւորում: Երկար է բամբասողի լեզուն, քանի որ հասնում է մինչև իսկ հեռուներում գտնուող մարդկանց՝ թէ՛ ողջերին, և թէ՛ անգամ մեռածներին: Ի վերջոյ, գարշահոտ է բամբասողի լեզուն, քանի որ ուրիշ ոչինչ չի ախորժում խօսել, այլ միայն՝ գարշութիւն: Որքան գարշելի ու զազիր են այն որդերը, որոնք ապրում են վէրքերի տակ, նոյնքան գարշելի ու նողկալի է լեզուն բամբասողների, որոնք այն մշտապէս ծառայեցնում են ուրիշների թերութիւնները յիշատակելու համար, իսկ մարդկանց թերութիւնները հենց հոգևոր վէրքեր են:

Աղտեղութիւնը հարկ է ծածկել և ոչ թէ յայտնի դարձնել: Որևէ մէկը չի կարող հպուել աղտեղութեանը՝ առանց ինքն իրեն աղտոտելու: Իսկ աղտոտուածը շարժւում և գարշահոտութիւն է տարածում: Ի՞նչ օգուտ կարող է լինել հին վէրքերը

նորոգելուց, ինչպէս անում են բամբասող լեզուները՝ խորը խոցելով եղբայրներին: Ուրեմն ինչպէս օձի ու բամբասողի լեզուներն են նման, նոյնպէս նման են նրանց պատիժները: Օձի մասին գրուած է. «Անիծեալ լինես երկրի բոլոր անասունների ու գազանների մէջ» *(Ծնն. 3. 14):* Իսկ բամբասողի մասին գրուած է. «Ինչպէս 10 մարդու մարմնի մէջ մխրճուած նետն է, այնպէս էլ խօսքն է անմիտ մարդու սրտում» *(Սիր. 18.10):*

4. Թէև բոլոր մեղքերի համար վրէժխնդիր եղողը Աստուած է, բայց բամբասանքի մասին աւելին է ասում Սողոմոնը. «Նախանձախնդիր ականջը լսում է ամէն բան» *(Իմաստ. 1. 10):* **Բամբասողը կարծում է, թէ իր խօսքերը անյայտ պիտի մնան, բայց Աստուած լսում է ամէն բան**, քանի որ Տէրը «նախանձախնդիր ականջ» ունի: Եւ Նա ոչ միայն լսում ու իմանում է բամբասողների մտքերը, այլև տեսնում է նրանց գործերը: Այս մասին է գրուածը. «Ահա՛ նա կանգնած է մեր պատի հետևում» *(Երգ. 2. 9):* Յայտնի է, որ Նա ունկնդիր է մեր խօսքերին, նաև, «ձգուելով դէպի պատուհանները, նայում է ճաղերից ներս», որպէսզի նաև տեսնի մեր գործերը, ուրեմն ամէն ինչում զգոյշ պիտի լինենք,

ինչպէս չարագործութեան, նոյնպէս և չարախօսութեան մէջ:

Աստուած մարդուն լեզու է տուել ո՛չ թէ իր եղբօր մասին բամբասելու, այլ նրան ուսուցանելու համար. ուստի եթէ եղբայրդ սխալուեց, խրատի՛ր նրան, ապա թէ ոչ՝ լու՛ռ մնայ: Երկինքն ու երկիրը և նրանցում եղած ամէն բան քեզ խօսելու քի՞չ նիւթ են տալիս, չե՞ս բաւարարւում, որ այդ ամէնը թողած, այնպիսի բաների մասին ես խօսում, որ պատուաբեր չէ քեզ: Հանցաւորի համար Դատաւոր կայ, որը Աստծոյ Միածին Որդին է, և քանի որ Նա է դատաւորը թէ՛ ողջերի, և թէ՛ մեռեալների, դու մի՛ փորձիր յանձն առնել Միածնի այդ պատիւը: Իսկ եթէ այնքան ժուժկալութիւն չունես քո մէջ և կամենում ես խօսել, քո յանցանքների մասին խօսիր Աստծոյ առաջ, և այդժամ ոչ թէ յանցանք, այլ յաղթութիւն կը համարուի քո այդ «բամբասելը»:

5. Եւ յիշելով այն խօսքը՝ թէ «Քրիստոս բռնեց յամրի լեզուից», դուք նո՛յնպէս բռնէք ձեր լեզուն՝ երբևէ ձեր եղբօր մասին չբամբասելու համար: Օրինակ վերցրէք Փրկչից, որ Իրեն լքած աշակերտներին եղբայր անուանեց. «Գնացէ՛ք

ասացէք Իմ եղբայրներին, որ գնան Գալիլիա և այնտեղ Ինձ տեսնեն» *(Մատթ. 28. 10)*: Այսպէս և դուք, եթէ անգամ ձեր դէմ մեղանչած լինի ձեր եղբայրը, մի՛ վատաբանէք նրան, յիշէ՛ք, որ դուք ևս շատ թերութիւններ ունէք Աստծոյ առաջ, բայց Նա ներում է ձեզ և համբերում, ուրեմն դուք ևս ներէք ձեր եղբօրը: Իմացէ՛ք, որտեղ բամբասանք է եղել, այնտեղ բազում չարիքներ են ծնունդ առել, տներ կործանուել, բարեկամութիւններ քանդուել, և որ ամէնից սարսափելին է՝ բամբասանքը բարկացնում է Աստծուն ու մոլորեցնում մարդկանց: Ինչպէ՞ս պիտի բամբասողները վճարեն այսքա՜ն պատճառած վնասների դիմաց: «Մի՛ դատէք, որ չդատուէք» *(Մատթ 7. 1)*: Բայց եթէ քեզ համար սովորութիւն է դարձել դատելը, նախ քո ա՛նձը դատիր, և այդ դէպքում չի լինի մէկը, որ կը մեղադրի քեզ: Եթէ տեսնես ճանապարհից շեղուած մէկին, իսկոյն մտաբերիր քո յանցանքները, և այդժամ ինքդ քեզ ազատած կը լինես բամբասանքի մեծ մեղքից: Ոչ միայն խօսելը, այլև ուրիշների թերութիւնների մասին լսելն անգամ չար ախտ է և արժանի է կշտամբանքի: Բամբասողը սատանային է կրում իր լեզուի վրայ,

իսկ ունկնդրողը՝ իր ականջի մէջ։ Եթէ չար լեզուն բամբասում է, դու տէ՛ր եղիր քո ականջներին և մի՛ լսիր բամբասանքի այդ խօսքերը, այլ, ինչպէս իմաստունն է ասում. «Խցի՛ր ականջներդ փշերով, չարախօս լեզուին ականջ մի՛ դիր»։

ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

«Ապա ժողովրդին ասաց. «Տեսէ՛ք, որ զգոյշ լինէք ամէն տեսակ ագահութիւնից, որովհետև մարդու կեանքը իր կուտակած հարստութեան մէջ չէ»։ (Ղուկ. 12.15)

1. Ինչպէս թռչունները երկնքում և ձկները ջրում են կարողանում պոչի միջոցով ուղղորդել իրենց ընթացքը, այդպէս էլ մարդիկ կարող են երկրի վրայ, մահուան մասին խորհելով, բարի վարքով ընթանալ։ Քրիստոնէական վարդապետութիւնն ուսուցանում է, որ չորս բան է մարդուն ուղղութիւն տալիս՝ անխուսափելի մահը, ահեղ դատաստանը, ահաւոր դժոխքը և անճառելի Արքայութիւնը։ Այս չորսն էլ նախազգուշացնում են մարդուն մեղքերից հեռու մնալու մասին։ Բայց առաւելաբար զգուշացնում է մահուան մասին մտածումը, քանի որ մահը միւս երեքից ամենամօտն է մարդուն և

ամենքի դռանն էլ մօտենում ու համարձակ ներս է մտնում՝ ինչպէս աղքատ խրճիթներին, այնպէս էլ թագաւորների պալատներին: Այդ պատճառով մահուանը «անխուսափելի» բնորոշումը տուեցինք: Այս առնչութեամբ մեր երկնաւոր վարդապետ Յիսուս Քրիստոսը, իր ունկնդիրներին յորդորելով զգուշանալ ագահութիւնից, միաժամանակ յիշեցնում է մարդու կեանքի կարճատև լինելու մասին: «Տեսէք,- ասում է,- և զգոյշ եղէք ամէն տեսակ ագահութիւնից, որովհետև մարդու կեանքը իր կուտակած հարստութեան մէջ չէ» *(Ղուկ. 12.15):* Իր այս խօսքով Յիսուսը կամենում է ասել, որ մարդու կեանքը կախում չունի նրա ունեցուածքի մեծութիւնից, և այնպէս չէ, որ ով շատ հարստութիւն ունի, ուրեմն երկար պիտի ապրի՝ այն վայելելու համար, այլ ինչպէս աշխարհն է անցաւոր, նոյնպէս էլ մարդու կեանքն է կարճատև:

2. Մեր Տէրը յորդորում է մեզ զգուշանալ ագահութիւնից, ինչպէս խելագարութիւնից, քանի որ ագահութիւնը հենց խելագարութիւն է, իսկ ագահն էլ նման է այն յիմար մարդուն, որն իր տունը աւազի վրայ է շինում, և այդ տան

կործանումը շատ մեծ է լինում *(Մատթ. 7.26):* Ով այս աշխարհում գանձ է կուտակում կամ այն թաքցնում է իր ծոցում, երբևէ չի կարող զերծ լինել հոգսերից: Իսկ նրանք, որոնք երկնքում են գանձեր կուտակում, ապահով կեանքով են ապրում: Հողագործների մէջ առաւել հարուստ կարող է լինել նա, ով իր սերմերը շտեմարանում կուտակելու փոխարէն ցանում է հանդերում: **Չկայ առաւել բերրի մի անդաստան, քան աղքատների ձեռքերը. այնտեղ ցանուած սերմերը երբէք անպտղաբեր չեն լինում,** այլ առատ բերք են տալիս և՛ այս, և՛ հանդերձեալ կեանքում: Իսկ ագահները սերմացու ցորենը բերրի հողի փոխարէն անմտօրէն տանում և փոսի մէջ են լցնում, որտեղ այն, անշուշտ, դատապարտուած է անպտղութեան:

Եթէ կամենում էք տեսնել, թէ ինչ տեսք ունի նման յիմար ագահ մարդը, ապա նայէ՛ք գեհենի գուբի մէջ և կը տեսնէք անգութ հարուստին, որն իր երկրային կեանքի ընթացքում ծիրանի և այլ թանկարժէք հագուստներ ունէր, ամէն օր ճոխ ուրախութիւն էր անում, բայց իր դռան առջև ընկած աղքատ Ղազարոսին ողորմութիւն չէր

տալիս *(Ղուկ. 16.19):* Իսկ այժմ ու՞ր են չքացել նրա թանկարժէք հագուստները, ու՞ր է ամենօրեայ ուրախութիւնը. աղքատութեան մէջ է այդ յիմարը երկնքում: Եւ ի՞նչ ասեմ աղքատութեան մասին այս աշխարհում. որքան էլ մարդ աղքատ լինի, կարող է անվճար ջուր խմել ինչքան ցանկանայ, այնինչ այն հարուստը մի կաթիլ ջրի կարօտից տանջւում էր դժոխքում, և Աբրահամը դա՛ էլ չտուեց նրան:

Ագահի այդպիսի խաւար պատկեր կարելի է նշմարել դժոխքի մթին խորքերում: Նայէ՛ք հիմա մէկ այլ պատկերի՝ այն արձանին, որը կանգնեցրեց Նաբուգոդոնոսոր արքան Բաբելոնի Դուրա դաշտում: Այդ արձանը ոսկեղէն էր՝ իբրև աշխարհի հարստութեան խորհրդանիշ, սակայն հողի վրայ էր կանգնեցուած՝ իբրև մարդկային կեանքի կարճութեան խորհրդանիշ:

Այնքան կարճատև է մարդու այս կեանքը, որ Փիլիմոն իմաստասէրն այդ մասին ասում է. «Ոչ այլ ինչ է մարդկային այս կեանքը, եթէ ոչ՝ ծնուել և մեռնել միայն»: Ուրեմն եթէ մարդու կեանքն այդքան կարճատև է, ապա որքա՛ն աւելի կարճատև պիտի լինի նրա ձեռքով ստեղծածի

կեանքը։ Ցիրաւի, ազնիւ մետաղ է ոսկին, սակայն այն աւելի թանկ չէ, քան մարդու կեանքը։

3. Ուրեմն՝ ինչու՞ ենք միայն այս անցաւոր կեանքի մասին հոգ տանում, եթէ չենք կարող վստահ լինել, որ վաղն իսկ չենք մեռնելու, մինչդեռ անանցի հանդէպ անհոգ ենք մնում։ Երբ տուն ենք կառուցում, հաստատուն հիմք ենք դնում և հոգում շինուածքի ամրութեան մասին, որպէսզի այն երկար ժամանակ կանգուն մնայ, քանի որ մտածում ենք՝ գուցէ երկար ապրենք ու բնակուենք այդտեղ։ Եւ նոյն կերպ, երբ մեզ համար երկնքում դրախտ ենք ստեղծում, կրկին մտածում ենք, որ այն հաստատուն հիմք ունենայ, որպէսզի այնտե՛ղ ապրենք ու վայելենք։ Ինչպիսի՛ յիմարութիւն՝ չարչարուել ու տառապել այս աշխարհի անցաւոր բարիքների համար, իսկ ճշմարի՛տ բարիքների հանդէպ անհոգ գտնուել։ Վաճառականներն իրենց շահի համար զանազան երկրներ են գնում, մեծամեծ ջանքեր են թափում ու անգամ մեռնում են, իսկ մենք՝ հոգևոր վաճառականներս, ծոյլ ենք մնում. չէ՞ որ քրիստոնեան ևս վաճառական է, որ գեղեցիկ մարգարիտներ է փնտրում *(հմմտ. Մատթ. 13. 45)*։ Հակառակը՝ տգեղն ու անարգը փնտրելուն

ենք հետամուտ լինում: «Նա, ով Արքայութիւն է փափագում,- ասում է Յովհան Ոսկեբերանը,- արհամարհում է ագահութիւնն ու ծառան է դառնում Քրիստոսի»:

Ծառայ մի՛ դարձիր մամոնային. այն որևէ մէկին այնքան չի պատուում, որքան իրեն արհամարհողներին, և որևէ մէկին այնպէս ամօթահար չի անում, որքան իրեն ցանկացողներին: Եւ ոչ միայն ամօթահար է անում, անգամ սպանու՛մ է: Ի՞նչն էր, որ Յուդային խեղդամահ արեց ու գեհենի բաժին դարձրեց, ո՞չ արդեօք արծաթը: Արծաթսիրութեան մոլուցքն էր պատճառը, որ Յուդան իր մեծ Վարդապետին երեսուն արծաթի դիմաց մատնեց հրեաներին: Տեսէ՛ք, ուրեմն, արծաթի տուած վնասը ոչ թէ նիւթն է, այլ նրա հանդէպ մոլի ցանկութիւնը:

4. Երեք գլխաւոր մոլութիւններ կան, որոնք մարդուն մեծ սխալների են դրդում: Առաջինը մարմնի ցանկութիւնն է, երկրորդը՝ ցանկութիւնը փառքի, երրորդը՝ ունեցուածքի ցանկութիւնը: Կամ, այսպէս ասեմ, հեշտասիրութիւնը, փառասիրութիւնը և փողասիրութիւնը, որը հենց ագահութիւնն է: Այս երեքի մասին խօսելով՝

Յովհաննէս Աւետարանիչն ասում է. «Այն ամէնը, ինչ աշխարհի մէջ կայ, մարմնի ցանկութիւն է, աչքերի ցանկութիւն և այս կեանքի ամբարտաւանութիւն» *(Ա Յովհ. 2. 16):* Այս երեք սխալներն հետևեալ կերպ են գործում. հեշտասէրը մեծ ոգևորութեամբ ցանկանում է տենչալիին, սակայն զզուանքով հետ է դառնում: Փառասերը յօժար կամքով հասնում է փառքին, սակայն յետոյ սիրտը տրտմութեամբ է լցւում, իսկ ագահն էլ հոգու տանջանքով երբ հասնում է մամոնային, այլևս հետ չի դառնում իր ուղուց, այլ միաւորւում է նրա հետ ու իր յոյսը հիմնաւորապէս մամոնայի վրայ է դնում: Եւ եթէ անգամ իմանում է, որ այն, ինչին ինքը ձգտում էր, անիրաւութիւն է, ամենևին չի մտահոգւում այդ մասին, այլ ամբողջովին դէպի այդ մոլութիւնն է ընթանում ու մոլորւում:

Դրա պատճառն այն է, որ մամոնան մարդու սրտի մէջ չէ, ասես դրսում մի արկղի մէջ է, և քանի որ ագահ մարդը չի յագենում այդ դրսի «բարիքից», ուստի տենչում է իր սիրտը մօտեցնել իրենից դուրս գտնուող մամոնային ու, ասես իր սիրտը հանում դնում է մամոնայի արկղի մէջ, որպէսզի

լիացնի ու յագեցնի սիրտը: Սա կռապաշտութեան մի նոր օրինակ է, ինչպէս ասում է սրբազան առաքեալը *(Կորնթ. 3. 5):* Ասացի նոր օրինակ, որովհետև կռապաշտները արջառ են զոհում կուռքերին, իսկ ագահները Քրիստոսի արեամբ գնուած իրենց հոգիներն են իբրև զոհ մատուցում, ուստի և դառնում են սատանայի բաժին ու ոչ թէ Քրիստոսի, որի մասին Բարսեղ վարդապետը ասում է. «Անհնար է, որ ընչասէր մարդը տեսնի Քրիստոսի երեսը»:

Շատերը հարստութիւն ունէին, ինչպէս, օրինակ, Աբրահամը, Իսահակը, Յակոբը և միւսները, սակայն նրանք հոգով աղքատ էին, այսինքն՝ խոնարհ ու ողորմած: Եթէ դու մօտդ թոյն պահես, դրանից ինքդ չես վնասուի, ինչպէս որ դեղավաճառները, որոնք թոյն ունեն՝ չեն վնասւում, բայց եթէ այն խմես, արդէն կը վնասուես: Այսպէս էլ հարստութիւն ունենալու դէպքում չես վնասուի, բայց եթէ երազես դրա մասին ու յոյսդ դրա վրայ դնես, շատ մեծ վնասներ կը կրես: Այսպիսի՞ն է գանձեր դիզող մարդու վախճանը, նրա վերջը դժոխքի խորքն է: Իսկ նա,

ով կամենում է Աստծո՛վ հարստանալ, և՛ այստեղ, և՛ հանդերձեալ կեանքում երանելի կը լինի:

5. Ուրեմն՝ միայն Աստծոյ վրա՛յ դնենք մեր յոյսը: Սարգիս Շնորհալին ասում է. «Աստուած մեծը տուեց մեզ և փոքրը չպիտի՞ տայ»: Նա մեզ հոգի ու մարմին տուեց, որը մեծ բան է, և մի՞թէ այն, ինչ պէտք է հոգուն ու մարմնին, որը փոքր բան է, չի տայ: Մի՞թէ Աստուած մեզ ստեղծել է այն բանի համար, որպէսզի լքի մեզ: Լսէ՛ք, թէ ինչ է ասում մարգարէն. «Ինչպէս որ հայրը գթում է իր որդիներին, այնպէս Տէրը պիտի գթայ իրենից երկիւղ կրողներին» *(Սաղմ. 102. 13):* Նաև սրբազան առաքեալ Պետրոսն է ասում. «Ձեր բոլոր հոգսերը նրա վրայ դրէ՛ք, որովհետև Նա է, որ հոգում է ձեր մասին» *(Ա. Պետր. 5. 7):*

Այս ասուածները երկու օրինակով է հաստատւում. մէկը ագռաւների օրինակն է, որոնց Աստուած կերակրում է, և միւսը վայրի շուշանի օրինակը, որին Աստուած զեղեցիկ զգեստաւորում է: Ուրեմն՝ որքա՛ն առաւել մարդկա՛նց կը կերակրի ու կը զգեստաւորի Նա:

Քրիստոսը, համեմատելով շուշանը Սողոմոնի հետ, ասում է. «Ասում եմ ձեզ, որ Սողոմոնն իր ողջ

փառքի մէջ այնպէս չհագնուեց, ինչպէս այդ շուշաններից մէկը», այսինքն ասում է, որ վայրի շուշանին որևէ մէկը չի մշակում, մինչդեռ Սողոմոնի շուրջ բիւրաւոր սպասաւորներն էին շրջում, շուշանի մասին որևէ մէկը հոգ չի տանում, մինչդեռ Սողոմոնի կարիքներին էին ծառայում երկրի հանքերը, ծովի մարգարիտները և ծառաները, այդուհանդերձ շուշանի «զարդերը» շատ աւելի գեղեցիկ են, քան Սողոմոնինը, որովհետև Աստուա՛ծ է խնամում շուշանին: Հեթանոսներն իրե՞նք են հոգում իրենց պէտքերը, իսկ ճշմարիտ Աստծուն պաշտողները չպիտի՛ հոգան այդ ամէնի մասին, քանի որ ճշմարիտ Աստուած գիտի այն ամէնը, ինչ նրանց անհրաժեշտ է: Ինչպէս երեխաները, որ անկարող են հոգալ իրենց կարիքները և անգամ չգիտեն, թէ իրենց ինչ է անհրաժեշտ, սակայն ծնողները գիտեն այդ ամէնն ու հոգում են իրենց զաւակների մասին, ուրեմն որքա՜ն առաւել երկնաւոր Հայրը, որ ամենքի Արարիչն է, գիտէ և հոգում է Իր զաւակների մասին: «Բայց դուք,- ասում է,- խնդրէ՛ք նախ Աստծոյ արքայութիւնն ու Նրա արդարութիւնը, և մնացեալ ամէն բան ձեզ կը

տրուի աւելիով»։ Այսինքն՝ դուք միայն Աստծոյ արքայութիւնը խնդրէք և Նրա արդարութիւնը գործէք, իսկ մարմնաւոր բարիքները ձեր ցանկացածից աւելի կը տրուեն ձեզ։

ՊԷՏՔ ՉԷ ԱՐՀԱՄԱՐՀԵԼ ՈՐԵՒԷ ՄԷԿԻՆ

«Զգո՛յշ եղէք, մի՛ արհամարհէք»։
(Մատթ. 18. 10)

1. Յիսուսի աշակերտները, իրենց անկատարութեան պատճառով, իրենց վիճակին անվայել մի բանավէճ սկսեցին, թէ «ո՞վ է նրանցից մեծը»։ Մօտեցան Յիսուսին և ասացին. «Մեզնից ո՞վ է մեծ Երկնքի արքայութեան մէջ»։ Մանկական մի հարցում էր սա, քանի որ տակաւին մանուկ էին մտքով, այդ պատճառով էլ Յիսուս մտքով ոչ հասուն Իր աշակերտներին նիւթական օրինակով ուսուցանեց. Իր մօտ կանչեց մի փոքրիկ երեխայի, որն ըստ վարդապետների Իգնատիոս Աստուածազգեացն էր, կանգնեցրեց աշակերտների առջև և ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթէ չդառնաք ու չլինէք մանուկների

պէս, Երկնքի արքայութիւնը չէք մտնի» *(Մտթ. 18:3)*՝ կամենալով ասել, թէ. «Դուք պարտաւոր էք հեռու մնալ գահասիրութիւնից և պէտք է ջանաք յաղթել ձեր բոլոր անօրէն ցանկութիւնները, հակառակ դէպքում ոչ միայն չէք կարող մեծ լինել Երկնքի արքայութեան մէջ, այլև անգամ այնտեղ մտնել չէք կարող»:

«Իսկ մեծ կը լինի նա,- ասում է Յիսուսը,- ով իր անձը ամենքից փոքրը կը համարի, քանի որ Աստծոյ խոստումներին արժանի է նա, ով յօժարակամ և պատրաստ է ծառայել ամենքին: Ով իր անձը խոնարհեցնում է, ինչպէս այս մանուկը, որը ամենքից փոքր է և որևէ մեծութեան չի ձգտում, որը որևէ մէկից փառք չի սպասում, նա՛ մեծ կը լինի Երկնքի արքայութեան մէջ և առաւել բարձր կը լինի նրանից, ով այս կամ այն փառասիրութիւնից մղուած՝ կամենում է բարձրացնել իր անձը»:

Այս նիւթի մասին երկար խօսելուց յետոյ Յիսուս յաւելում է՝ ասելով. «Զգո՛յշ եղէք, որ այս փոքրիկներից որևէ մէկին չարհամարհէք» *(Մտթ. 18:10):*

2. Մարդը երկու ձևով կարող է արհամարհել ուրիշներին. առաջինը՝ խօսքով, ինչպէս հրեաները

արհամարհեցին Քրիստոսին՝ անուանելով Նրան հիւսնի որդի, սամարացի կամ դիւահար: Երկրորդ՝ վարմունքով, այսինքն՝ Նրա դէմքին անգամ չնայելով կամ նշանացի ցոյց տալով, որ չեն ընդունում Նրան, և կամ ծաղրելով Նրան: Տէրն իր աշակերտներին զգուշացնում է հեռու մնալ այս ամէնից. որքան էլ դիմացինը չար մարդու համբաւ ունենայ, երեխայ լինի, մտքով ոչ հասուն կամ էլ աշխարհի աչքին արհամարհելի մէկը լինի, ինչպէս օրինակ՝ ունեցուածքով աղքատները, հոգով աղքատները, այսինքն՝ խոնարհները: Ուստի և Յիսուս փոքրիկ մանկանն է մէջտեղ բերում և նրան իբրև օրինակ ցոյց տալիս, որ թէև տակաւին մտքով հասուն չէ, բայց չի կարելի արհամարհել նրան:

«Դաստիարակի կարիք ունեմ, և դու՛, տէր Աստուած, իբրև դաստիարակ, սովորեցրու՛ ինձ, որ Քո արդարութիւնը չմոռանամ»: Նա, ով խնդրեց, ստացաւ Աստծուց, քանի որ արդարև իր անձն ընծայեց Աստծուն և ինքն իրեն մանուկ ու արհամարհանքի արժանի մէկը համարեց այնժամ, երբ իրականում կատարելութեան ու թագաւորութեան վիճակում էր: Իսկ ահա ինչպէս Աստուած չի արհամարհում որևէ մէկին, նոյնպէս և

մենք՝ աստուածասէրներս, ո՛չ միայն փոքրերից որևէ մէկին չպէտք է արհամարհենք, այլև պէտք է սիրենք ու խնամենք նրանց:

Ոչ ոք, միայն արտաքին տեսքին նայելով, թող չդատի որևէ մէկին: Չէ՞ որ մեր Տէրը ևս, մանուկ լինելով, մեզ համար արհամարհուեց հրեաների կողմից, և ո՛չ միայն աւազակների շարքին դասուեց, այլև աւազակներից աւելի մեծ արհամարհանքի արժանացաւ, երբ ժողովուրդը պահանջեց ազատութիւն տալ Բարաբբային, և ոչ թէ Նրան:

Ուրիշներին դատելը անձի չարութեան մեծագոյն արտայայտութիւնն է: Օձն է, որ թոյն է քաղում այն ծաղիկներից, որոնցից մեղուն մեղր է հաւաքում: Նոյն կերպ նաև ապականուած ստամոքսն ամէն ինչ մաղձի է վերածում, ուստի դու ջանայ մաքրել քո ստամոքսը: Եթէ մի կողմ դնես քո անձի նկատմամբ ունեցած սէրդ և ուրիշների աչքերով նայես քեզ, բազմաթիւ պատճառներ կը գտնես քեզ ամենից յետին շարքում դասելու համար: Քանի անգամ որ տեսնես ուրիշների սխալները, այդքան անգամ ուշադրութիւն դարձրու քո՛ անձին ու որպէս զգաշուցում

ընդունիր դա և պատկերացնելով, որ դու ևս այդ նոյն տկարութեան մէջ ես, սովորի՛ր զգուշանալ այդ ախտից, որպէսզի երբ իրապէս սայթաքես, ծաղրի չարժանանաս:

3. Դաւիթ մարգարէն Հօր հետ խօսելով՝ ասում է. «Ում որ դու հարուածեցիր, նրանք հալածեցին և իմ վէրքերին ցաւեր աւելացրին» *(Սաղմ. 68. 27):* Հօր հաճութեամբ էր Քրիստոսի հալածուելը, այսինքն՝ չարչարուելը մարդկային ցեղի փրկութեան համար, սակայն խստասիրտ հրեաները, որ չարակամութեամբ ձեռնամուխ եղան Քրիստոսին տանջելուն, արժանի դարձան պատժի, քանի որ թէև անհրաժեշտ էր, որ այդ չարչարանքները լինէին, բայց վա՛յ նրան, ով դրանք կիրականացնէր, ինչպէս Տէրն ասաց. «Մարդու Որդին աշխարհից կը գնայ ըստ սահմանուածի, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով կը մատնուի» *(Ղուկ. 22. 22):*

Իսկ հրեաները այդ սահմանն էլ անցան, քանի որ ոչ միայն չարչարանքի մատնեցին Քրիստոսին, այլև խաչեցին, աւելին՝ մահուանից յետոյ համարձակուեցին խոցել Նրա կողը: Այս մասին էր խօսքը, թէ. «Եւ իմ վէրքերին ցաւեր աւելացրին»: Նաև Համբարձումից յետոյ Յիսուսի վէրքերին

ցաւեր աւելացրին՝ չարչարելով Նրա աշակերտներին, քանի որ այն ամէնը, ինչ հրեաներն ու հեթանոսներն արեցին Քրիստոսի աշակերտներին, հենց իրեն՝ Քրիստոսին արեցին, ինչպէս որ Տէրը ասաց Սաւուղին. «Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ ես հալածում ինձ» *(Գործ. 9. 4):* Սա ասաց նաև Զաքարիա մարգարէն. «Այսպէս է ասում ամենակալ Տէրը, որ ով մօտենում է ձեզ, նման է նրան, ով հարուածում է իր աչքի բիբին» *(Զաք. 2. 8):* Եւ ինչպէս որ վրէժ է պահանջւում այնպիսի մէկից, որն ասես հարուածում է իր աչքի բիբին, այդպէս էլ Աստուած «վրէժ պիտի լուծի» փոքրերին արհամարհողներից: Եւ եթէ մէկը սովոր է արհամարհել ուրիշին ու չունի լսելու ականջ, նա ինքն իրեն է արհամարհում, և նրա անձին յանցանք պիտի վերագրուի Աստծոյ առաջ:

Եթէ մարդ ուրիշների յանցանքների մասին խօսի, ոչինչ չի շահի, այլ դեռ մի բան էլ կը դատապարտուի, իսկ եթէ իր յանցանքները պատմի Տիրոջ առաջ, արժանի կը դառնայ թողութեան: Այսպէս արեց երանելի Դաւիթը. «Ասացի, թէ կը խոստովանեմ մեղքերն իմ, և դու թողութիւն կը տաս իմ մեղքերի ամբողջ

ամբարշտութեանը» *(Սաղմ. 31. 5):* Դու ևս նոյն կերպ վարուի՛ր և մեծապէս կը շահես ու օգուտ կունենաս:

4. Այս զգուշութեան մասին մեր Տէրը երեք պատճառ է բերում:

Առաջինը՝ ասում է. «Ասում եմ ձեզ, որ երկնքում նրանց հրեշտակները մշտապէս տեսնում են երեսն իմ Հօր, որ երկնքում է» *(Մտթ. 18. 10)*՝ կամենալով ասել, որ եթէ ամենավերին հոգիները, որոնք մշտապէս վայելում են Աստծոյ երանելի տեսութիւնը, միշտ խնամք են տանում ձեր կողմից փոքրիկ համարուողների նկատմամբ, անփոյթ չեն նրանց յանդէպ և նրանցից որևէ մէկին չեն արհամարհում, որքա՜ն առաւել դուք իրաւունք չունէք անփոյթ լինել մանուկների նկատմամբ ու արհամարհել նրանց, որոնց հետ դուք նոյն բնութիւնն ունէք, բայց ինքներդ աւելի ցածր էք հրեշտակներից:

Երկրորդ՝ **հրեշտակները, որ կանգնած են Աստծոյ առաջ, աղօթքներն են խոնարհների,** որոնք նախքան Աստծոյ մօտ գնալը նախ իրենց աղօթքներն են ի վեր առաքում, որոնց միջոցով յանդիպում են Աստծուն, իսկ երբ արդէն իրենք ևս

վերանում են այս աշխարհից, այնժամ լցւում են անսահման երջանկութեամբ: Այս մասին մարգարէն նախ ասում է. «Ես արդարութեամբ կերևամ քո առաջ», ապա շարունակում. «Կը յագենամ՝ տեսնելով փառքը քո» *(Սաղմ. 16.15)*՝ կամենալով ասել, որ «թէ Ես կորուսեալներին գտնելու համար Երկնքից երկիր իջայ, ո՞վ կարող է յանդգնել արհամարհել մարդկանցից որևէ մէկին»: Իսկ իր այս խօսքն էլ Նա մեկնում է այն հովուի օրինակով, որը, ունենալով հարիւր ոչխար, թողնում է իննսունիննին անապատում և գնում է կորած հարիւրերորդին փնտրելու, և երբ գտնում է, առաւել շատ է ուրախանում, քան բոլոր նրանց համար, որոնք կորած չէին: Եւ եթէ մարդն այդքան պատուական է բարերար Փրկչի աչքին, ուրեմն երբէք չի կարելի արհամարհել մարդկանցից որևէ մէկին:

Փոքրերին չարհամարհելու երրորդ պատճառն այն է, ինչպէս Յիսուսն է ասում. «Իմ երկնաւոր Հօր կամքը չէ, որ այս փոքրիկներից մէկը կորչի» *(Մտթ. 18:14)*, քանի որ երկնաւոր Հօր կամքն այն է, որ ամենքն էլ փրկուեն, ինչպէս Տէրն ասում է Եզեկիելի շուրթերով. «Ես ամբարշտի մահը չեմ ուզում, այլ՝

նրա հետ կանգնելն իր չար ճանապարհից» *(Եզեկ. 33. 11):* Եթէ Աստուած ամբարշտի մահը չի կամենում, ապա առաւել ևս չի ցանկանում մահը տկարների և անգէտների, ուստի նոյն կերպ մեղանչում են բոլոր նրանք, որոնք արհամարհում են նրանց:

5. Աստուած օր սահմանեց՝ դատելու բոլոր մարդկանց, իսկ արհամարհող մարդիկ յանգդգնում են յափշտակել Աստծոյ այդ իշխանութիւնը՝ դատելով իրենց ընկերոջը: Սա հպարտութեան ախտն է: Սակայն մարդ թող չհպարտանայ իր ուժով, քանի որ առիւծը մարդուց աւելի ուժեղ է, իր գեղեցկութեամբ, քանի որ, միևնոյն է, սիրամարգից աւելի գեղեցիկ չէ, իր քաղցրաձայնութեամբ, քանի որ սոխակն աւելի քաղցրաձայն է մարդուց, իր սրատեսութեամբ և իր լաւ լսողութեամբ, քանի որ այծեամն ու արծիւն առաւել սրատես են, իսկ էշն աւելի լաւ լսողութիւն ունի, իր հարստութեամբ և մնացեալ բաներով, քանի որ այդ ամէնը պարզապէս աւանակի բեռ է, և ոչ աւելին, իր զարդարանքներով, քանի որ դրանք ձիերի վրայ ևս կարելի է տեսնել:

Չափազանց ամօթալի է մեծամտանալ այնպիսի բաներով, որոնցով ընտանի կենդանիներն ու գազաններն աւելի «հարուստ» են մարդուց:

Քրիստոնեաները մի այսպիսի սովորութիւն ունեն. երբ զարթնում են քնից, լուանում են իրենց ձեռքերն ու երեսը, և այդպէս են աղօթքի կանգնում. սա չափազանց բարի ու վայելուչ մի սովորութիւն է, սակայն **ձեռքերն ու երեսը լուանալուց առաւել հարկ է լեզուն լուանալ,** և այն էլ ոչ թէ ջրով միայն, այլ նաև հրով և առաքինութեամբ, որպէսզի այն մաքրուի հայհոյութեան, բամբասանքի, խեղկատակութեան և արհամարհանքի ախտից: Եթէ կեղտոտ ձեռքերով որևէ մէկն ուզում է մօտենալ քեզ, դու թոյլ չես տալիս և չես էլ հանդուրժում, որ նա քեզնից ինչ-որ բան խնդրի, իսկ եթէ նա անգամ համարձակւում է, դու ոչ միայն չես լսում, այլև բարկացած մերժում ես նրան, ուրեմն ինչու՞ ես անմաքուր լեզուով Աստծոյ ոտքերն ընկնում և համարձակւում Նրանից բարիք խնդրել: Չէ՞ որ լեզուն աղօթողների ձեռքն է, որով մենք հպւում ենք Աստծոյ ոտքերին և Նրանից բարիք խնդրում, սակայն այդ դէպքում ինչպե՞ս կը լսի մեզ Աստուած, և արդեօ՞ք չի դառնայ ու չի ասի.

«Եթէ բազմապատկէք էլ ձեր աղօթքները, չեմ լսելու ձեզ» *(Եսայի 1. 15):*

ՄԵՂՔԸ ԱՌԱՒԵԼ ԴԺՈՒԱՐ ԳՈՐԾԵԼԻ Է, ՔԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ

«Որովհետև Իմ լուծը քաղցր է և Իմ բեռը՝ թեթև»։ (Մատթ. 11. 30)

1. Որքան մեծ է մեղքի վնասը, նոյնքան մեծ է առաքինութեան օգուտը, քանի որ մեղքը դժոխք է իջեցնում, իսկ առաքինութիւնը երկինք է բարձրացնում։ Մէկը ճանապարհ է դէպի ցած, իսկ միւսը՝ ճանապարհ դէպի վեր։ Անմիտները, չխորհելով նպատակի մասին, այս երկուսից աւելի դիւրին են համարում դէպի ցած տանող ճանապարհը, իսկ խելացիները, խորհելով նպատակի մասին, դէպի վեր տանողն են դիւրին համարում։ Եւ քանի որ աշխարհում անմիտներն աւելի շատ են, քան խելացիները, այդ պատճառով էլ շատերն են մեղքի ճանապարհով գնում, և քչերն

են միայն, որ գնում են առաքինութեան ճանապարհով: Մեզ սա՛ է ուսուցանում մեր մարդասէր Փրկիչն՝ ասելով. «Ինչքա՞ն լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը, որ դէպի կորուստ է տանում, և բազմաթիւ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքա՞ն անձուկ է դուռը և նեղ՝ ճանապարհը, որ տանում է դէպի կեանք, և սակաւաթիւ են նրանք, որ գտնում են» *(Մատթ 7. 13-14):*

Բայց «լայն է դուռը և ընդարձակ՝ ճանապարհը» բառերը լսելիս որևէ մէկը թո՛ղ չկարծի, թէ այդ ճանապարհը դիւրին է, կամ «անձուկ և նեղ ճանապարհ» լսելիս թո՛ղ ոչ ոք առաքինութեան ճանապարհը դժուարին չհամարի, քանի որ առաքինութեան ճանապարհն անցնելն աւելի դիւրին է, քան մեղքի ճանապարհն անցնելը: Տեսէ՛ք, այդ երկուսից մեղքի դժուարութեան մասին Դաւիթն ասում է. «Սաստիկ բեռան պէս ծանրացան վրաս» *(Սաղմ. 37. 5):* Իսկ առաքինութեան դիւրութեան մասին ասում է մեր Տէրը. «Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև»: Լուծ և բեռ լսելով՝ ոչ ոք թող չվհատուի, քանի որ թէպէտ

լուծ է, բայց քաղցր է, և թէպէտ բեռ է, սակայն թեթև է:

Մեր Տէրը երբ մեզ յորդորեց առաքինութեան, խօսեց ոչ միայն դժուարութեան կամ միայն դիւրութեան մասին, այլ երկուսի մասին միաժամանակ. լուծ ասաց, բայց այն քաղցր կոչեց, բեռ ասաց, բայց այն թեթև անուանեց, որպէսզի ամենքը փափագեն վերցնել ու կրել այն: Իսկ եթէ դեռ տակաւին դժուար է թւում քեզ առաքինութիւնը, մտաբերի՛ր, որ մեծ մեղքն առաւե՛լ դժուարին է:

2. Այն, որ դժուար է մեղք գործելը, յայտնի է այն բանից, որ մեղքն ակամայ չի գործւում, այլ բխում է չար կամքից: Հրամայուած է չսպանել, բայց նաև ի՞նչ հարկ կայ սպանելու, չէ՞ որ ոչ միայն Օրէնքից, այլև բնութիւնից է բխում չսպանելը, քանի որ ըստ բնական օրէնքի, ո՞վ կուզենայ եղբօր արեամբ ներկել իր սուրը, ոչ ոք: Աստուած մեր բնութեան մէջ սերմանել է խնամք ու սէր միմեանց նկատմամբ. մինչև անգամ գազաններն են սիրում իրենց նմաններին: Ուրեմն, տեսնու՞մ ես, որ առաքինութեան սերմը հենց մեր բնութիւնից ունենք, իսկ մեղքը բնութիւնից դուրս է:

Հրամայուած է չգողանալ, և ի՞նչ կարիք կայ գողանալու։ Գուցէ ասես՝ «աղքատութիւնից դրդուած». սակայն աղքատութիւնն աւելի շատ աշխատանքի է դրդում, այլ ոչ՝ գողանալու։ Ու չասես, թէ աշխատելը դժուար է, իսկ գողանալը՝ դիւրին։ Ասա՛ խնդրեմ, ո՞րն է աւելի դժուար, ողջ գիշեր շրջել, վախից դողալ ու հոգին բռի մէջ առնել՝ ինչ-որ բան գողանալու համա՞ր, թէ՞ հանապազօրեայ աշխատանք կատարելով՝ վայելել ամէն բան առանց որևէ մտավախութեան։ Իհարկէ, այս աւելի դիւրին է, իսկ այն՝ չափազանց դժուար։ Եւ դա ակնյայտ է, քանի որ շատերն աշխատանքի այս տարբերակն են նախընտրում, ոչ թէ գողանալու։

Տեսնու՞մ ես, որ առաքինութիւնները տրուած են բնութիւնից, իսկ մեղքը բնութիւնից դուրս է, ինչպէս առողջութիւնը և ցաւերը՝ առաջինը բնութիւնից է, իսկ երկրորդը՝ ոչ։ Դարձեալ հրամայուած է չերդուել, և ի՞նչ հարկ կայ երդուելու։ «Քեզնից պահանջում են երդուել»,- ասում ես։ Ուրեմն պիտի երդուե՞ս անպայման, սակայն չէ՞ որ նաև բարի կամք է պահանջւում քեզնից, որը եթէ ունենայիր, խօսքերիդ հաւատարիմ կը լինէիր

բարոյական արժէքների շնորհիւ, այլ ոչ թէ երդումից դրդուած: Երդումն անհրաժեշտ է, որ հաւատան քո խօսքին, բայց տեսնում ենք, որ ովքեր չեն երդւում, նրա՜նք են հաւատարիմ խօսքին, իսկ ովքեր հաճախակի երդւում են, ստախօսի համբաւ ունեն, քանի որ նման մէկը վարժւում է երդում տալուն և այլոց մօտ լաւ կարծիք չի ստեղծում, իսկ ով չի երդւում, նրան ամէն ոք հաւատում է: Տեսնու՞մ ես, որ բնաւ էլ չկայ երդման անհրաժեշտութիւնը:

Նաև հրամայուած է չթշնամանալ որևէ մէկի հետ: «Այո,- ասում ես,- սակայն ցասումը յորդում ու բորբոքւում է և թոյլ չի տալիս հոգուս հանդարտուել»: Ոչ թէ ցասումից է թշնամանքդ, ո՛վ մարդ, այլ կարճամտութիւնից, այլապէս ամէն ոք, երբ բարկանար, կը դառնար թշնամի: Սակայն ինչպէ՞ս է, որ առաքինի մարդիկ, թէպէտ բարկանում են, բայց չեն թշնամանում: Կարելի է բարկանալ, սակայն չի կարելի թշնամանալ: Այս է ասում մարգարէն. «Եթէ բարկանաք, մի՛ մեղանչէք» *(Սաղմ. 4. 5):* Աստուած մարդուն իբրև տէր ստեղծեց և ոչ թէ գերի. «Մարդ ստեղծենք,- ասաց,- ըստ մեր պատկերի և նմանութեան»: Իսկ

ի՞նչ է նշանակում «ըստ մեր պատկերի և նմանութեան». Տէրը պատկեր անուանում է իշխանութիւնը, և ինչպէս երկնքում Աստծուց վեր ոչ ոք չկայ, նոյնպէս և երկրի վրայ չկայ որևէ մէկը, որ մարդուց աւելի բարձր լինի: Բայց եթէ մարդը տրուի ցասումին, կը կորցնի տիրոջ իր այդ դիրքը և գերի կը դառնայ, եթէ անգամ բիւրաւոր ծառաներ ունենայ:

Գուցէ ասես՝ պատճառ կայ բարկանալու, քանի որ այս մէկը կամ միւսը բարկացրեց ինձ, սակայն ամէնից շատ հենց այդժա՛մ է պէտք ցոյց տալ քո հանդարտութիւնն ու հնազանդութիւնը, քանի որ եթէ չլինէր քեզ զայրացնող մէկը, ինքդ քեզ ինչպէ՞ս կը զայրանայիր: Կենդանիները, որ բնազդային զգուշութիւն ունեն, բայց բանականութիւնից զուրկ են, ևս զայրանում են, սակայն միայն այն ժամանակ, երբ կատաղում ու խոցւում են, և ինչո՞վ է մարդը պակաս կենդանիներից: Աստուած մեր մէջ դրեց ցասումը՝ իբրև խթանիչ, որպէսզի ընդդէմ սատանայի՛ զայրանանք և սարսափազդու դատաւոր ու մռայլ դահիճ լինենք մեղքերի՛ դէմ: Աստուած ցասումը մեր ձեռքն իբրև զէնք տուեց ոչ թէ որ թշնամանանք ուրիշների հետ, այլ որ դարձի

բերենք յանցաւորին: Ցասումը սրա՛ համար է անհրաժեշտ, և դա մեր բնութեան մէջ է, այլ ոչ թէ թշնամութեան համար, ինչը մեր բնութիւնից դուրս է:

3. Առաքինութեան դժուարութիւնը միայն սկզբում է, յետոյ ամէն բան դիւրութեամբ յաջողւում է: «Սատանան,- ասում ես,- մարտի է դուրս եկել իմ դէմ և զանազան նետեր է տեղում ինձ վրայ»: Իսկ **դու մէկ անգամ միայն քո ձեռքն առ առաքինութիւնը, և իսկոյն Աստուած կը կանգնի քո թիկունքին**, միայն թէ Նա քեզ առաքինի գործերին կազմ և պատրաստ տեսնի: Այդժամ Նա դիւրութեամբ կը պաշտպանի քեզ ամէն վտանգից ու անվնաս դուրս կը բերի կրակների միջից, ինչպէս որ Բաբելոնի հնոցը նետուած երեք երիտասարդներին դուրս բերեց. չէ՞ որ նրանք էլ ոչ մի ուրիշ բան չունէին, այլ միայն՝ պատրաստակամութիւն: Մեծ նահապետ Աբրահամն իր կամքն իբրև պատարագ ընծայեց Աստծուն, քանի որ իրապէս կամենում էր պատարագել իր որդուն: Տե՛ս, թէ որքա՛ն դժուար էր դա, քանի որ հայրը պէտք է իր միածին, սիրելի որդուն իր իսկ ձեռքով ողջակիզէր: Սակայն

Աստուած փոխանակեց Իսահակին սաբեկ ծառից կախուած խոյով: Տե՛ս, թէ Աբրահամի այս չափազանց դժուար գործը որքա՞ն դիւրացրեց Աստուած: Այս օրինակը միշտ մտքումդ ունեցիր՝ իմանալով, որ եթէ Տէրը քո կամքը կատարեալ տեսնի, քեզ համար դժուարը դիւրին կը դառնայ, իսկ ծանրը՝ թեթև:

4. Քանի դեռ մեղքի մէջ ենք, մեզ համար խիստ ու դժուար է թւում առաքինութիւնը, իսկ մեղքը՝ քաղցր և հեշտ, սակայն եթէ փոքր-ինչ հեռանանք մեղքից, այնժամ մեր աչքին կերևայ մեղքի գարշելիութիւնը և առաքինութիւնների քաղցրութիւնը: Այս մասին կարող ենք համոզուել կատարելապէս առաքինի անձանց օրինակին նայելով: Սրբազան առաքեալ Պօղոսը գրում է նորադարձ հաւատացեալներին. «Ի՞նչ պտուղ ունէիք,- ասում է,- այն ժամանակ, որի համար այժմ ամաչում էք» *(Հռոմ. 6. 21):* Տեսնու՞մ ես, որ քանի դեռ նրանք մեղքի մէջ էին, չգիտէին՝ ինչ է ամօթը, բայց մեղքից դէպի արդարութիւն դառնալուց յետոյ ամօթ զգացին ու հասկացան, որ մեղքի պտուղը մահն է, իսկ Աստծոյ շնորհը՝ յաւիտենական կեանքը: Ուրեմն, այսուհետև ամէն հնար գործի

դնենք առաքինութեան մէջ առաջ ընթանալու համար և կանգ չառնենք այդ ճանապարհին, քանի դեռ կեանքի ու ապաշխարութեան օրեր ունենք մեր առաջ, քանի որ ե՛ւ կեանքի, ե՛ւ ապաշխարութեան օրերն արագընթաց առաջ են սլանում:

Արեգակը, ամէն օր կատարելով իր ընթացքը և մայր մտնելով, իր բարձունքից մեզ քարոզում է առաքինի դառնալ, քանի դեռ մեր կեանքի օրերը չեն սպառուել: Հողն ու ծառերը, իրենց ժամանակին պտուղ տալով, յորդորում են մեզ առաքինութիւնների բարի պտուղը բերել: Եթէ մենք ևս այդ ժամանակին ենք սպասում՝ այդ ժամանակը սուրբ պահքի ընթացքն է: Նիւթական ծառերն իրենց յստակ ժամանակն ունեն պտուղ տալու համար, և այդ այն է, ինչ նրանցից պահանջւում է, մինչդեռ բարոյական ծառերը պէտք է մի՛շտ պտղատու լինեն, հակառակ դէպքում արժանի են կտրուելու: Այս խորհրդով Տէրն անիծեց անպտուղ թզենուն: Ինչու՞ անիծեց. քանի որ ժամանակին պտուղ չէր տուել, ուստի մենք ևս սովորենք ամէն ժամ պտղաբերել:

5. Ծուլութիւնն այսուհետև թող վերանայ մեզանից, արիանանք և արթուն լինենք: Եթէ այս ամէնը լինի, այնուհետ կը դիւրանայ առաքինութիւնների ընթացքը: Սրբերը ի սկզբանէ մեզ նման մարդիկ էին և ոչ հրեշտակներ, բայց արիութեամբ և արթնութեամբ այնպէ՛ս առաքինացան, որ մինչև իսկ տօնելի սրբեր հռչակուեցին կաթողիկէ եկեղեցու կողմից և գահակալեցին երկնքում: Գուցէ ասես. «Նրանք մեզ նման չէին, քանի որ հրաշքներ էին գործում», սակայն Յուդան ևս հրաշքներ էր գործում, բայց քանի որ նաև անօրինութիւն գործեց, այդ պատճառով տանջանքների մատնուեց, որովհետև **ոչ թէ հրաշագործելու կարողութիւնն է մարդուն երջանիկ դարձնում, այլ առաքինութիւնը**: «Յովհաննէսը որևէ նշան չարեց» *(Հովհ. 10. 41),* բայց նրա նման ուրիշ մէկը չեղաւ սրբերի մէջ: Ինչու՞ զարմանալի դարձաւ Եղիա մարգարէն, ո՞չ արդեօք Աստծոյ հանդէպ ունեցած նախանձախնդիր նուիրումի շնորհիւ: Յոբը որևէ նշան չգործեց, բայց զարմանալի եղաւ բոլոր մարդկանց և ահարկու՝ սատանայի աչքին, քանի որ առաքինի վարքի տէր էր, և նրա համբերութիւնն աւելի կարծր էր, քան

ադամանդը: Այս պատճառով նաև Ինքը՝ Տէրը, երբ Իր աշակերտներին պատուիրաններ էր տալիս, չասաց, թէ՝ «հրաշքնե՛ր կը գործէք», այլ՝ «որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքում է» *(Մատթ. 5. 16):* Նաև Պետրոսին չասաց. «Եթէ սիրում ես Ինձ, հրաշագործութիւննե՛ր արա», այլ ասաց միայն. «Արածեցրու՛ Իմ ոչխարներին» *(Յովհ. 21. 15):*

Տեսէ՛ք, զաւակնե՛ր, անհրաժեշտ է առաքինի վարք ունենալ, այլ ոչ հրաշքներ գործել. քրիստոնեան իր վարքից է ճանաչւում, ըստ այն խօսքի, թէ՝ «Իրենց գործերի՛ց կը ճանաչէք նրանց» *(Մատթ. 7. 16):* Հրաշագործութիւն է դևերին հալածելը, սակայն առաւել մեծ հրաշագործութիւն է մե՛ղքը հալածելը: Դևը տրտմում է, երբ դուրս է ելնում մարմնից, բայց առաւել տրտմում է, երբ մարդու հոգին մեղքից ազատուած է տեսնում: Այդ նպատակով մեռաւ Քրիստոսը, որպէսզի մեղքը վերացնի: Եթէ մեղքը քեզնից հեռացնես, ուրեմն իմացի՛ր, որ թուլացրել ես սատանային, ջախջախել ես նրա գլուխը և ցրել նրա բանակները, ու այդպիսով մեծագոյն հրաշքն ես գործել:

Ուրեմն, այսուհետև զգուշացէ՛ք մեղքից, եկէ՛ք արիութեամբ ընթանանք առաքինութիւնների ճանապարհով, որպէսզի հասնել կարողանանք մեր նպատակին՝ Երկնքի արքայութեանը՝ մեր Տեր Յիսուս Քրիստոսի շնորհներով և ողորմութեամբ: Ամէն:

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ ՍՆՈՏԻ Է

«Երբ Յիսուս իմացաւ, որ գալու են իրեն բռնել տանելու, որպէսզի իրեն թագաւոր անեն, դարձեալ միայնակ դէպի լեռը գնաց»։ (Յովհ. 6. 15)

1. Սուրբ Աւետարանում Յովհաննէս Աւետարանիչը պատմում է. «Երբ Յիսուս իմացաւ, որ գալու են իրեն բռնել տանելու, որպէսզի իրեն թագաւոր անեն, դարձեալ միայնակ դէպի լեռը գնաց»։ Յիսուսի այս վարմունքը իմաստուն վարդապետները տարբեր կերպ են մեկնում։

Նախ՝ Յիսուս, երկնաւոր Թագաւոր լինելով, չկամեցաւ մարդկանցից թագաւորութիւն ստանալ և Իր աստուածային Թագաւորի ծիրանու վրայից մարդկային թագաւորութեան քուրձը հագնել, արեգակի օրինակով, որը լուսաւորում է ամենքին և որևէ մէկից լոյս վերցնելու կարիք չունի։

Երկրորդ՝ որպէսզի սպասուելիք իրադարձութիւնները մարդիկ մարմնաւոր թագաւորի չվերագրէին: Տէրը ձկնորսների՛ն ընտրեց քարոզիչներ, ինչպէս հովիւներին էր ընտրել քարոզիչ-մարգարէներ: Այսպէս է ասում Սողոմոնը. «Դու զօրութեամբ ես տիրում, բայց դատում ես հեզութեամբ» *(Իմաստ. 12. 18):*

Երրորդ՝ Յիսուս չկամեցաւ թագաւոր լինել որկրամոլ մի ժողովրդի, որը թէև լսել էր Նրա աստուածային խօսքերը և տեսել Նրա գործած հրաշքները, սակայն չէր հաւանում Նրան: Այն բանից յետոյ միայն, երբ տեսան, որ Յիսուսը հինգ գարեհացով և երկու ձկով կերակրեց հինգ հազար մարդու, չհաշուած կանանց և երեխաներին, և տասներկու սակառ էլ կտորտանք աւելացաւ, նրանք կամեցան Նրան թագաւոր դարձնել, որպէսզի իրենք առանց աշխատելու մշտապէս կերակուր ունենան:

Չորրորդ՝ Քրիստոսը չկամեցաւ լինել միայն հրեաների թագաւորը, այլև աշխարհի միւս մասի, քանի որ Հայրն ասել էր Նրան. «Հեթանոսներին Քեզ կը տամ որպէս ժառանգութիւն, ու իշխանութիւն՝ երկրի բոլոր ծագերում» *(Սաղմ. 2. 8):*

Շատ խորիմաստ են այս մեկնութիւնները, բայց մի իմաստուն վարդապետ նաև այլ մեկնութիւն է տալիս՝ ասելով. «Յիսուս ա՛յն բանի պատճառով չկամեցաւ թագաւոր դառնալ, որպէսզի այդպիսով մեզ ուսուցանի փախուստ տալ աշխարհի սնոտի մեծութիւններից, որոնք մեծ արգելք ու խոչընդոտ են երկնային փառքի և անսպառ մեծութեան ճանապարհին»:

2. Գիշեր է այս աշխարհը, և նրա բոլոր մեծութիւնները երազ են, քանի որ, օրինակ, նրանք, որոնք մեղքի մէջ են, երբ իրենց տաժանակիր աշխատանքից հոգնած քուն են մտնում և երազում իրենց հարստութեան, ճոխութեան մէջ են տեսնում, յետոյ զարթնելով քնից՝ բնաւ գոհ չեն լինում, որ դա երազ էր: Այս օրինակով նրանք, որոնք ապրում են այս կեանքում, պէտք է երազ համարեն աշխարհական մեծութիւնները, որոնց մասին մարգարեն ասում է. «Եղան ինչպէս քնից արթնացող մարդու երազ» *(Սաղմ. 72. 20):*

Յիրաւի, արդարների մահը քուն է համարւում, ինչպէս գրուած է. «մինչ Նա քուն է տալիս իր սիրելիներին» *(Սաղմ. 126.2):* Այս իսկ պատճառով քրիստոնեայ մեռեալին ննջեցեալ ենք անուանում,

իսկ մարգարէն մեղաւոր մեռեալին զարթնած մեղաւոր է անուանում. «Եղան ինչպէս քնից արթնացող մարդու երազ», որովհետև մահը մեղաւորների համար ոչ թէ արթնացում է, այլ քնից արթնացողի պէս պիտի բացուեն նրանց հոգու աչքերը, և նրանք իրենց պիտի տեսնեն զրկուած աշխարհի բոլոր բարիքներից և մատնուած դժոխքի անհամար չարիքներին: Ճշմարտութիւնը ճանաչի՛ր փորձով, գնա՛ Աւետարանում յիշատակուած հարուստի շիրմին և նայի՛ր այնտեղի փոշուն, մոխրին ու որդերին: Եւ երանի՛ թէ այս վայրով սահմանափակուէին նրա վնասները. պատկերացրու՛ ապա անշէջ հուրը, ատամների կրճտոցը, արտաքին և շոշափելի խաւարը: Ո՞րտեղ կը լինեն այնժամ կուտակած հարստութիւնը, ծիրանին կամ հանապազօրեայ ուրախութիւնը: Այնժամ նա մի կաթիլ ջրին անգամ կարօտ պիտի մնայ:

Ի՞նչ եղան, ուրեմն, այն վայելքները, որոնք հարուստն ունէր այս աշխարհում, կամ ու՞ր կորաւ նրա հրճուանքը: Եթէ մինչև իսկ խոր ծերութիւն հասնէին այդ վայելքները, կրկին ոչինչ էին, էլ ի՞նչ ասենք այն դէպքում, երբ վստահ չենք կարող լինել,

թէ այդ վայելքները կարող են երբևէ բաւականութիւն տալ: Քանի որ աշխարհի ուրախութիւնները կարծես ջրի պղպջակներ են, որ եթէ ցանկալի ու պատուարժան են նոյնիսկ յիսուն տարի շարունակ, այդուհանդերձ երազ պիտի համարուեն անհուն ու անմահ յաւիտենականութեան առաջ, որովհետև այստեղ քաղցն էլ, ամէն տեսակ չար երևոյթներն էլ վախճան պիտի գտնեն, իսկ հանդերձեալ կեանքում ամէն բան անվերջ ու անվախճան է:

3. Եթէ, արդարև, այս աշխարհի մեծութիւնը երազ է, ինչպէ՞ս է, որ Սուրբ Գրքից մեզ դէպքեր են յայտնի, որ շատ անգամ մեծ տեսիլքները երազների միջոցով են յայտնուում: Երբ Յովսէփը տեսաւ Եգիպտոսում իր մեծ պատուի արժանանալը, մի՞թէ երազի միջոցով չէր. «Լսեցէ՛ք,- ասում է,- իմ տեսած երազը: Թւում էր, թէ մի դաշտում հասկերի խրձեր էինք կապում: Իմ խուրձը բարձրացաւ, կանգնեց ուղիղ, իսկ ձեր խրձերը դարձան ու երկրպագեցին իմ խրձին» *(Ծնն. 37. 6-7):* Քանի որ սովի բերումով լինելու էր երկրպագութիւն, Աստուած նախապէս դա ցոյց տուեց խրձերի երկրպագութեան օրինակով:

Կամ արդեօք Սողոմոնը երազու՞մ չտեսաւ, որ ինքը իմաստութեան ու հարստութեան մեծ պատուի է արժանանալու, քանի որ գրուած է. «Տէրը Սողոմոնին երևաց գիշերուայ քնի մէջ և ասաց նրան. «Քեզ տալիս եմ հարստութիւն ու փառք, այնպէս որ քո ապրած կեանքի օրերին թագաւորներից ոչ ոք չի լինելու քեզ նման» *(Գ Թագ. 3. 13):*

Սա է ակնարկում Սողոմոնը իր թագաւորութեան մասին պատմելիս, երբ ասում է. «Ես՝ Ժողովողս, Իսրայէլի թագաւոր եղայ Երուսաղէմում» *(Ժող. 1. 12):* Երբ Սողոմոնն այս ասում էր, դեռ թագաւոր էր, բայց անցեալով է խօսում՝ ասելով «եղայ», և ոչ թէ՝ «եմ», որով կամենում է ցոյց տալ, որ աշխարհի մեծութիւնը երազի պէս սնոտի է, ինչպէս ակնյայտ ասաց. «Ունայնութիւն ունայնութեանց. ամէն ինչ ունայն է» *(Ժող 1. 2):* Թերևս նաև այս մեծութեան մասին էին Յիսուսի աշակերտները ճանապարհին վիճում միմեանց հետ, թէ՝ «ո՛վ է մեծը» *(Մարկ. 9. 33):* Մեծութեան մասին վիճաբանելու խորհրդաւոր վայր է այստեղ ճանապարհը, քանի որ աշխարհի մեծութիւնը ևս, անցնելիք ճանապարհի նման,

անկայուն և անցողիկ է: Այս միտքն է ամփոփուած նաև այն դրուագում, երբ սատանան աշխարհի բոլոր թագաւորութիւնները «մէկ վայրկեանում» ցոյց տուեց Յիսուսին, քանի որ այդ բոլորը վայրկեանական երևոյթներ են միայն և իրականում ոչինչ են:

4. Այսպիսով՝ հարկ է իմանալ, որ մի բան է մեծութիւն ցանկանալը և այլ բան՝ մեծութիւն ունենալն Աստծոյ ընտրութեամբ:

Առաջինի օրինակը կայ Սուրբ Գրքում *(Դատ. 9. 8),* որտեղ գրուած է, որ երբ ծառերը գնացին իրենց համար թագաւոր օծելու, ո՛չ ձիթենին յանձն առաւ թագաւոր դառնալ՝ պատճառաբանելով իր պարարտութիւնը, ո՛չ թզենին՝ պատճառաբանելով իր քաղցրութիւնը, և ո՛չ որթատունկը՝ պատճառաբանելով իր ուրախութիւնը, իսկ երբ դժնիկ փշի մօտ գնացին, նա յանձն առաւ ծառերի թագաւոր լինել: Ձիթենին, թզենին և որթատունկը խորհրդանշում են առաքինի մարդկանց, որոնք չեն ուզում թողնել իրենց առաքինի պարարտութիւնը, աստուածային խոկումների քաղցրութիւնը և հոգևոր ուրախութիւնը և գնալ աշխարհի սնոտի

մեծութեան հետևից, մինչդեռ փառամոլ փշերը հետամուտ են այդ «ուրախութիւններին»:

Իսկ երկրորդի լաւագոյն օրինակը Աբրահամն էր, որը թէպէտ հարուստ էր, սակայն ծառայ չէր դարձել իր ունեցուածքին և հարստութեանը, ո՛չ աչք ունէր ուրիշների տների վրայ, ո՛չ էլ ուրիշ մէկի ունեցուածքով էր հետաքրքրւում: Այլ, դուրս ելնելով նայում էր շուրջը՝ տեսնելու, թէ չկա՞ արդեօք որևէ հիւր կամ աղքատ, որպէսզի իր վրանում հիւրընկալի նրան և օգնի աղքատներին՝ նրանց կարիքները հոգալով: Աբրահամը, սակայն, թանկարժէք նիւթերով չէր պատել իր վրանը, այլ սոսկ Մամբրէի կաղնու մօտ էր այն հաստատել, և անգամ ծառի սաղարթի հովանին շատ էր թւում նրան, բայց նրա իջևանատեղին այնքա՛ն գեղեցիկ համարուեց, որ անգամ հրեշտակները իջևանեցին նրա մօտ: Թագաւորներից ոչ ոք երբէք չհիւրընկալեց հրեշտակներին, մինչդեռ կաղնու մօտ պատրաստուած Աբրահամի այդ վրանը պատուի արժանացաւ, քանի որ հրեշտակները ո՛չ թէ տան շքեղութիւնն էին ցանկանում տեսնել, այլ հոգու առաքինութիւնը: Տեսէ՛ք Աբրահամի այս

հարստութեան գեղեցկութիւնը և, նրա օրինակին հետևելով, դուք ե՛ւս այդ փափագէք:

5. Ուրեմն մարդը, փախչելով սնոտի մեծութիւնից, կը հասնի յաւիտենակա՛ն մեծութեան, ինչպէս այն աղքատ Ղազարոսը, որ այս կեանքում աղքատ էր, իսկ հանդերձեալում հարուստ՝ ո՛չ թէ ոսկով ու արծաթով, այլ անմեկնելի բարիքով, որը մարդու աչքը չի տեսել, ականջը չի լսել և սիրտը չի զգացել: Իսկ ահա մեծահարուստը, որ արհամարհում էր Ղազարոսին, նրանից աւելի աղքատ դարձաւ՝ այն աստիճան, որ մի կաթիլ ջրին կարօտ մնացած՝ տանջւում էր խորը աղքատութեն մէջ, քանի որ այստեղի մեծութիւնն այնտեղ չի կարող առաջ շարժել, անգամ մարդուն ճանապարհի ուղեկից լինել չի կարող: Շատ յաճախ այն դեռ այստեղ՝ երկրի վրայ է լքում մարդուն ու հեռանում: Այդ մեծութիւնը փախստական ու անշնորհակալ մի ծառայ է, անհաւատարիմ մի ծառայ, որի հետ թէպէտ երկար ճանապարհ կարող ես անցնել, բայց որը յանկարծ քեզ լիովին մենակ թողնելով՝ կը փախչի քեզնից: Ի՞նչը կարող է սրանից աւելի անհաւատարիմ լինել, և ինչքա՛ն խղճուկ են

նրանք, ովքեր այսպիսի մեծութեամբ են պարծենում: Նման հարստութիւն կուտակելը յայտնապէս է լինում, մինչդեռ այն վայելելու մասին ամէն բան անյայտ է: Եւ այնպէս է ստացւում, որ մարդը, մեծ ջանքեր թափելով հարստութիւն ձեռք բերելու համար և ի վերջոյ տիրանալով այն բանին, որի համար այդքան չարչարուել է, այդպիսով տիրացած է լինում մեղքին միայն: Հարստութիւն ունենալն արգելուած չէ, եթէ մէկը ճիշտ տնօրինի այն, ինչպէս, օրինակ, չար բան չէ գինին, այլ հարբեցութիւ՛նն է չարիք, նոյնպէս և հարստութիւնն ինքնին չար չէ, այլ ագահութիւնն ու արծաթսիրութիւ՛նն է չար: Ուզում ես շքեղ ու մեծ տու՞ն ունենալ. դա արգելուած չէ, սակայն դա մի՛ ունեցիր երկրի վրայ միայն, այլև երկնքու՛մ հաստատիր քո «վրանի» հիմքերը՝ աղքատների մասին ևս հոգ տանելով, քանի որ այդպիսի վրանների մասին է մարգարէն ասում. «Վրաններ, որոնք չեն շարժուելու» *(Ես. 33. 20):* Դուք ա՛յդ փափագէք, որպէսզի յաւիտեան երանելի լինէք:

ԱՄԷՆ ՍՈՒՐԲ ՄԻ ԱՐԵԳԱԿ Է ԵՐԿՆՔՈՒՄ

«Այն ժամանակ արդարները Երկնքի արքայութեան մէջ կը ծագեն, ինչպէս արեգակ»։ (Մատթ. 13. 43)։

1. Յայտնի է, որ բանական արարածների մէջ գերագոյնը հրեշտակներն են, իսկ մարդիկ նրանցից փոքր-ինչ ցածր են, ինչպէս ասում է սուրբ Դաւիթ մարգարէն, թէ՝ «Քո հրեշտակներից փոքր-ինչ ցածր դրիր նրան» *(Սաղմ. 8. 6)։* Այս ցածր լինելը ոչ թէ այն պատճառով է, որ մարդը մահկանացու է, բայց դա էլ Քրիստոսը հատուցեց Իր գալստեամբ, երբ մահով մահին յաղթեց, ապա նաև մարդկանց համար ճանապարհ բացեց, որ, մահկանացու լինելով հանդերձ՝ ընթանան դէպի վեր, դէպի անմահութիւն։

Եթէ մարդիկ մահկանացու չլինէին, մարտիրոսներ չէին լինի և անթառամ պսակի չէին արժանանայ, որով փոքր-ինչ բարձրացան և հրեշտակներին հաւասար դասուեցին, քանզի մարտիրոսներն ու հրեշտակները միայն անունով են տարբեր, իսկ գործով հաւասար են. հրեշտակները երկնային բանակներ են, մարտիրոսները նոյնպէս, հրեշտակները բնութեամբ անմարմին են, մարտիրոսները նոյնպէս, թէև մարմնով զգեստաւորուած եղել են, բայց անմահութիւնից առաւել գեղեցկացան նրանց մարմինները, քանզի երկինքն անգամ այնպէս չի փառաւորուել լուսապայծառ աստղերի զարդարանքով, ինչպէս սրբերը՝ իրենց լուսաւոր վերքերով:

Երկինքը թող պարծենայ անհամար աստղերի բոյլերով, իսկ երկնքի արքայութիւնը պարծենում է անհամար արեգակների պարսերով: Քանզի այնտեղ ամէն մի սուրբ մի արեգակ է, և դա իմ խօսքը չէ, այլ մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ասում է. «Այն ժամանակ արդարները Երկնքի արքայութեան մէջ կը ծագեն, ինչպէս արեգակ»:

2. Պարսից Շապուհ արքան, որ պատուհաս էր, իրեն եղբայր հռչակեց արեգակին ու լուսնին, որով բոլոր մարդկանցից գերազանց անուն ստացաւ: Սուտ համբաւ ու համարում էր դա, քանզի երկրային էր նա, մահկանացու և մի տիղմ, բայց վնասները միայն այդքանը չէին, այլ դժոխքում նրա «որդը չի սպառուելու, և նրա հուրը չի յանգչելու» *(Եսայի 66. 24)*: Կեղծիքն այս օրինակով վերջացաւ, սակայն արդարներն իսկապէս պիտի ծագեն երկնային արքայութեան մէջ:

Ո՛վ մարդ, տես ինչքա՞ն շքեղ է հանդէսը, երբ սրբերը մտնում են երկնային արքայութեան մէջ: Եթէ սրբերից մէկի նշխարը օտար աշխարհից մեր քաղաքը բերուի, ամէն տեղից ժողովուրդը խռնուած կը հաւաքուի նրա շուրջը հոգևոր ուրախութեամբ զննելու համար, և ինչքա՞ն առաւել մեծ կը լինի այն հանդէսը, երբ սրբերը վեր՝ երկինք ելնեն, քանզի վերին զօրութիւնները կը հաւաքուեն նրանց շուրջը՝ վէրքերը դիտելու, և բերկրալի սրտով իրենց գիրկը կ՚ընդունեն նրանց, ապա մեծ հանդիսաւորութեամբ կը տանեն երկնային արքայի մօտ:

Եւ ի՞նչ կը լինի այնուհետև: Անմահ արքան հրեշտակներից առաւել պատուի կ’արժանացնի նրանց, և ոչ իբրև հաւատարիմ ծառաների, այլ սիրելի բարեկամների. «Դուք,- ասում է,- իմ բարեկամներն էք»: Աւելին, Նա Ինքն ասաց, որ «Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր անձը տայ իր բարեկամների համար» *(Հովհ. 15. 13)*: Եւ քանի որ մարտիրոսներն այս աշխարհում իրենց անձով մեծ սէր ցոյց տուեցին՝ Տիրոջ անուան համար մեռնելով, դրա համար Տէրը հաղորդակից է դարձնում նրանց Իր փառքին հանդերձեալ կեանքում՝ որպէս Իր սիրելիների, որ իրենց կեանքը չափազանց անարատ անցկացրին:

3. Արդ՝ մարտիրոսներից շատերի մէջ գերագոյն եղաւ սուրբ Սարգիսը, որ Արարչի հանդէպ ունեցած սիրուց արհամարհեց աշխարհը և իրեն ընծայեց՝ որպէս Նրան պատարագ: Հաւատի սիւն Կոստանդիանոս Մեծի, ինչպէս նաև նրա որդու կենդանութեան ժամանակ սուրբ Սարգիսը վարում էր իր իշխանութիւնը հայրենի Կապադովկիա գաւառում: Շրջում էր իր իշխանութեան սահմաններում ոչ ի շահ իրեն կամ իր իշխանութեան կամ փառքի համար, այլ հոգևոր

և աստուածային պաշտամունքով կառավարում էր բնակիչներին ու հետևում կարգ ու կանոնին, բայց նաև առաքեալների նման աւելի շատ ջանում էր տարածել քրիստոնեական սուրբ հաւատը, սրբում էր երկիրը կռապաշտութեան գիտելիքներից և ամենքի համար բացում էր աստուածճանաչութեան ճանապարհը: Եւ քանի որ Հին և Նոր Կտակարանների գիտակ էր, ինքն անձամբ էր քարոզում կենաց խօսքը, իր օրինակով բազում անհաւատների դէպի Քրիստոսը դարձի բերեց, շինեց եկեղեցիներ և բազմացրեց Քրիստոսի սպասաւորների դասերը: Բայց երբ Աստծոյ արտօնութեամբ թագաւորեց պիղծ Յուլիանոսը, սուրբը տեսիլքով Քրիստոսից ընդունեց պատգամ՝ Աբրահամի նման ելնել իր հայրենի երկրից և մեկնել այնտեղ, որտեղ իր համար պատրաստուած էր մարտիրոսութեան պսակը:

Թողեց այնուհետև երանելին իր հայրենի ժառանգութիւնը Կապադովկիայում, թողեց իշխանութեան պատիւն ու փառքը, ողջ ունեցուածքը բաշխեց ու բաժանեց աղքատներին, մի աղքատ թափառաշրջիկ դարձաւ օտար

վայրերում, իր Մարտիրոս որդու հետ Աստծոյ հոգածութամբ եկաւ-հասաւ Հայաստան աշխարհը, խօսքով ու գործով սատար դարձաւ բազում մարդկանց բարեպաշտութեանը: Ապա ըստ դէպքերի ընթացքի՝ սուրբը դիմեց Պարսից Շապուհ արքային, իր քաջագործութիւններին արժանի կերպով չափազանց սիրելի դարձաւ նրա աչքում: Բայց այնուհետև Քրիստոսի հաւատքի համար բազմաթիւ դաժան տանջանքներից յետոյ սուրբը գլխատուեց, ինչպէս իր փոքր որդի Մարտիրոսը իրենից առաջ և տասնչորս զինուորներն իրենից յետոյ նոյն կերպ նահատակուեցին, չհաշուած զօրքի բազմութիւնը, որ սուրբ Սարգսի քարոզութեամբ հաւատաց Քրիստոսին:

Այդպէս բազմավաստակ մարտիրոս դարձաւ սուրբ Սարգիսը և իր գործերով փառքով ու պատուով պսակուեց ու արեգակի նման ծագեց երկնային արքայութեան մէջ:

4. Մեր այս սրբերին տօնախմբելու առաջին պատճառն, այսպիսով, փառաւորեալ Աստուած է Իր սրբերի մէջ: Երկրորդը՝ սրբերին բարեխօսութեամբ դիմելը մեր անձերի համար:

Երրորդը՝ նրանց աստուածահաճոյ կենցաղավարութեանը նմանուելուն յորդորելը, որպէսզի կարողանանք հասնել նրանց պսակին: Այս վերջինն է հատկապէս մեր փնտրածն այս աշխարհում, քանզի ի՞նչ շահ պիտի ունենանք սրբերին տօնելով, եթէ նրանց լուսաւոր շաւիղներից հեռու մնանք:

Սուրբ մարտիրոսներն այս երանաւէտ փառքին արժանացան անհաւանական ճիգերով, բայց մեզանից թեթևն է պահանջւում, նրանք կեանքն արհամարհեցին, մենք գոնէ արտասուք հեղենք, քանզի արտասուքն անգամ բաւական է մեղքերի հրդեհը մարելու և այն բանի համար, որ հոգին պայծառ փայլի, իսկ սրանից աւելի դիւրին ի՞նչ ճանապարհ կարող է լինել երկինք բարձրանալու համար: Սուրբ մարտիրոսները դժուարին ճանապարհով երկինք բարձրացան, բայց մեզ համար դիւրին ճանապարհ կայ, որի նպատակը նոյնն է:

Տեսէ՛ք, թէ նահատակների յիշատակը նշելը որքա՛ն օգտակար է մեզ համար. նրանց պատուելը ցոյց է տալիս Տիրոջ սէրը ամենքի նկատմամբ, որովհետև ով նրանց է պատւում, Աստծուն է

փառաւորում, քանզի Աստուած փառաւորեալ է իր սրբերի մէջ, և ով մեծարում է նրանց, իր վարձքին արժանի կը լինի՝ առանց հալածանքի, առանց հրի և առանց տանջանքների:

5. «Իմ Հօր տան մէջ բազում օթևաններ կան» *(Հովհ. 14. 2):* Եւ իւրաքանչիւրին ըստ իր վաստակի տրուած կը լինի պարգևը, և ամենքը զոհ կը լինեն, ամենքի փափագը կը կատարուի: Մի օրինակ կայ. եթէ տասը եղբայրները միատեսակ ոսկեթել հագուստ հագնեն, եղբայրներից փոքրը, փոքր հագուստ կրելով, չի դժգոհի ու չի նախանձի միւսներին, քանզի գիտի, որ իրեն դա է վայել և դա բաւական է: Այդպէս և Երկնքի արքայութեան մէջ ամենքը, նոյն փառքը հագնելով, զոհ կը մնան յաւիտեան և բերկրանք կապրեն ու կը զմայլուեն անճառելի խնդութեամբ, և մեզ համար այնտեղ՝ երկնքում, յաւիտենական պսակը պատրաստուած կը լինի: Բայց այն պատրաստուած չէ չարերի համար, քանի որ ձրի չի պարգևում, այլ վաստակի փոխարէն է որպէս վարձ տրուում, և միայն առաքինիներին է Տէրն ասում. «Ցնծացէ՛ք և ուրախացէ՛ք, որովհետև երկնքում ձեր վարձը շատ է» *(Մատթ. 5. 12):*

Երկրի տուած սփոփանքն ունեն թէ՛ մարդիկ, թէ՛ կենդանիները, իսկ երկնքի բերկրանքը մեզ տրւում է՝ հրեշտակների կարգը մեզ դասելիս: Եւ ուրեմն՝ պիտի ձգտել վերինները փնտրել, իսկ ստորիններն արիաբար ոտնատակ անել: Մեր մարմնի կառուցուածքն արդէն իսկ մեզ սովորեցնում է դէպի երկինք նայել՝ ցոյց տալով, որ ամէն ինչ, որ երկնքի սահմաններից դուրս է, արժանի է ոտնատակ լինելու: Ուրեմն՝ դէպի վեր ընծայենք մեր մտքերը, քանի որ այն է մեր հարազատ բնակավայրը, որին հասնել արժանի թող անի մեզ ամենքիս մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսը՝ բարեխօսութեամբ բոլոր սրբերի և մանաւանդ սուրբ Սարգիս Զօրաւարի և նրա Որդու՝ Մարտիրոսի:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կարապետ Եպս., *Լապտեր հոգւոյ, Կ. Պոլիս, 1826 թ., 57 էջ։*

Կարապետ Արք. Պալաթեցի, *Ծանուցում քահանաներին՝ ապաշխարութեան խորհրդի վերաբերյալ, թարգմ. և ընդ. խմբ.՝ Ա. Դիլանյան, Ս. Էջմիածին, 2012 թ.։*

Հրանտ Ասատուր, *Կոստանդնուպոլսոյ հայերը եւ իրենց պատրիարքներ, Ստամպուլ, 2011։*

Մաղաքիա Պտրք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Գ, Երուսաղէմ, 1927։*

Պօղոսան Նորայր, *Կարապետ Արք. Պալատեցու Տարեկան Քարոզգիրքը, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2018, թիվ Թ, էջ 72-80։*

«Ոսկեղենիկ» մատենաշարով տպագրուած գրքեր

1. Յովհան Ոսկեբերան, Ապաշխարութեան պտուղներ (Քարոզներ և ճառեր), 2019



2. Յակոբ Նալեան, Առաքինի կեանքի ուղին (Հոգեւոր զրոյցներ), 2020



3. Յովնան Արք. Տէրտէրեան, Պատգամներ
(Ասոյթներ և Թևաւոր խօսքեր)



4. Կարապետ Արք. Պալատեցի, Տարեկան
Քարոզգիրք (Ընտրանի), 2021

Ծրագրուած գրքեր

5. Բարսեղ Կեսարացի, Մեծ Պահք

6. Գեւորգ Մեղրիկ, Աղօթագիրք

7. Պաղտասար Դպիր, Գրքոյկ շահաւէտ

ԱՄՆ Արևմտեան թեմի
«ՈՍԿԵՂԵՆԻԿ» մատենաշար - Դ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔ. ՊԱԼԱՏԵՑԻ
ՏԱՐԵԿԱՆ ՔԱՐՈԶԳՐԻՔ

(Ընտրանի)

Գրաբարից աշխարհաբար փոխադրեցին՝
Նորայր Պողոսեան
Գեւորգ Սրկ. Կարապետեան

Լոս Անջելէս – 2021

*

ARCHBISHOP KARAPET PALATETSI
ANNUAL BOOK OF SERMONS

(Selection)

Translated from Classical Armenian:
Norayr Poghosyan
Deacon Gevorg Karapetyan

Los Angeles – 2021